



Foreign Language Teaching and Research Press (Beijing)

Գրքի հրատարակությունն իրականացվել է  
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների  
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:



中华思想文化术语

第9辑，亚美尼亚语版

**Key Concepts in Chinese  
Thought and Culture**

**(Volume 9, Armenian Version)**

Translator - Astghik Atabekyan

Stepanakert 2021

**ՉԻՆԱԿԱՆ ՄՏՔԻ  
ԵՎ ՄՇԱԿՈՒՅՈՒ  
ՀԻՄՆԱԿԱՆ  
ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

հատոր 9

Թարգմանիչ՝  
Ասողիկ ԱԹԱԲԵԿՅԱՆ

ՀՏԴ 1/14:008

ԳՄԴ 87+71

Չ 590

«Գեդարմ» հանդեսի մատենաշար

**Չ 590 Չինական մտքի և մշակույթի հիմնական**

**հասկացություններ:** Հատոր 9:

Թարգմ. անգլ.՝ Ա. Աթաբեկյան:

Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2021, 148 էջ

Հայ ընթերցողներին է ներկայացվում չինական միտքն ու մշակույթը հատկանշող հիմնական հասկացությունների հանրագիտարանային մատենաշարի իններորդ գիրքը: Հատորաշարն աննախադեպ ու բազմաձևավալ մի աշխատություն է, որ հետաքրքիր ու օգտակար կարող է լինել ոչ միայն փորձագետների եւ «Երկնատակի» երկրի սիրահարների համար, այլեւ կգրավի բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր ցանկանում են իրենց համար բացահայտել չինական ժառանգության նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Original Chinese-English Text

© Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd.(FLTRP)

Armenian Translation © Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd.

All rights reserved.

ՀՏԴ 1/14:008

ԳՄԴ 87+71

ISBN 978-9939-1-1260-2

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար, 2021/

**Չինական մտքի և մշակույթի  
հիմնական հասկացություններ.  
Թարգմանական և հաղորդակցական նախագծի  
փորձագետներ**

**Խորհրդատուներ**

Լի Սյունցին  
Տրորընս Չյա-ին Յե Յե

Լին Ուսուն  
Ջան Ցիջի

**Փորձագետների խորհուրդ**

**Ղեկավար**

Հան Ջեն

**Անդամներ**

Չաո Ֆուլին, Չեն Դեչան, Չեն Մինմին, Ֆեն Ջիվեյ, Հան Չինթայ, Հուան Յուի, Չին Յուանփու, Լի Չիանչժուն, Լի Չաոգո, Լոու Յուլի, Մա Ցյանֆեյ, Նե Չանշուն, Փան Գունքայ, Վան Բո, Վան Նին, Յե Լան, Յուան Չիսի, Յուան Սինփեյ, Ջան Լիվեն, Ջան Սիփին, Ջեն Շուփու

**Չինագետներ**

Գայ Սալվատորե Ալիթո, Ռոջեր Թ.Էյմս, Մարթին Ջ.Փաուլըս, Բ.Բ.Դիփակ, Վոլֆգանգ Բուբին, Հարի Անդերս Հենսոն, Փոլ Բրուք, Մայքլ Բրուք, Դոն Սթար, Ջան և Ալվրն Ուոլդ, Չարլզ Ուիլմեն

**Գիտական խորհուրդ**

Բայ Ջենքույ, Ցայ Լիցյան, Չեն Հայյան, Չեն Շաոմին, Ֆու Ջիբին, Գուո Սիաոդոն, Մայքլ Հոար, Հե Շիձյան, Հու Հայ, Հու Չժիֆեն, Հուան Չունյան, Չյա Դեջուն, Չյան Հայլոնգ, Չյան

Հատշու, Լի Ցունշան, Լի Չինլին, Լի Սյուեյթաո, Լին Ման-Չիու, Լյու Յին, Լյու Ջեն, Լյու Յուեհուա, Մեն Սինյուան, Մեյ Ցուանյուե, Մեն Յիննան, Թորսթըն Փեյթերգ, Ջոշուա Մեյսոն, Ցյաո Յուն, Ռեն Դալուան, Շեն Վեյսին, Լինեյ Շի, Սուն Յիֆեն, Թաո Լիլին, Թուն Սյաոհուա, Վան Գանի, Վան Հուեյմին, Վան Բեփին, Վան Լիլի, Վան Լին, Ուան Մինձիե, Վանգ Վեյդոն, Վեյ Յուշան, Վեն Հայմին, Վու Գենյու, Վու Ջիձյե, Սիա Չիսյուան, Սյու Մինցյան, Սյու Յանան, Սյու Ին, Յան Վենբին, Յան Սյուեձյուն, Յան Սյուեդոն, Յան Իրուեյ, Յույ Վենթաո, Յու Լայմին, Ջան Ցյանմին, Ջան Չին, Ջան Սիլին, Ջաո Թուն, Ջեն Բայ, Ջոու Յունֆան, Ջու Լյանցի, Ջու Յուան, Յուո Լի

**Էսսե սգո և էսսե հիշատակի  
այդիաո 哀吊**

Հին ժամանակներում այ (哀) և դիաո (吊) էսսեները գրում էին սգալով մեկի մահը, ով կյանքից հեռացել էր բնական մահով կամ սարսափելի դժբախտ պատահարի հետևանքով: Այ-ը կամ սգո էսսեն գրում էին վիշտ կամ կարեկցանք արտահայտելու համար: Սկզբում այս երկը գրում էին երիտասարդի մահվան առիթով, ավելի ուշ՝ մարդու թշվառ կյանքը կամ կյանքի ընթացքում պատահած դժբախտ դեպքերը սգալու համար: Դիաոն կամ հիշատակի էսսեն նպատակ ուներ արտահայտել հեղինակի խոր կապվածությունը կյանքից վաղուց հեռացած մարդու հանդեպ կամ որևէ կոնկրետ երկրին կամ անհատին բաժին ընկած ճակատագրական դժբախտության համար անկեղծ ցավակցություն հայտնելու նպատակով: Սգո էսսեն սովորաբար գրում էին վերջերս վախճանված մարդկանց համար, իսկ հիշատակի էսսեի միջոցով հեղինակն իր սերն էր արտահայտում կյանքից վաղուց հեռացած մարդկանց հանդեպ: Ոճաբանության տեսանկյունից գրական երկի այս երկու տեսակները շատ նման են իրար: Դրանք նման են նաև ժամանակակից ցավակցություններին, որոնք հնչում են հուղարկավորությունների ժամանակ, իսկ մի քանիսն էլ կարելի է բնութագրել որպես սգո կամ կարոտի լիրիկական էսսե: Ինչպես Լիու Սյեն (465?-520) է գրել իր «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը» գրական-քննադատական գործում, այ-ը կամ սգո էսսեն ափսոսանք է արտահայտում կյանքից հեռացած մարդու՝ դեռևս չիրագործված նպատակների համար, ուստի բոլորովին պարտադիր չէ, որ այն ոճով խիստ հռետորական լինի: Դիաոյի կամ հիշատակի էսսեի միջոցով, մյուս կողմից, հեղինակը հաճախ իր սերն է արտահայտում վաղուց մահացած մարդու նկատմամբ, ուստի կարող է գնահատել մարդու կյանքը՝ այն համեմտելով զգացմունքային բաղադրիչով: Լիուի տեսակետները դեռևս մեծ ազդեցություն ունեն ժամանակակից արձակի վրա:

Մեջբերումներ 引例.

Այ-ը կամ սզո էսեն պերճաշուք, գեղեցիկ է հնչում, բայց ընթերցողների շրջանում վշտի զգացողություն չի արթնացնում: Իսկապես սքանչելի ու նշանակալի կարելի է համարել միայն մարդու խոր զգացմունքներն արտահայտող էսսեն, որն ընթերցողներին ստիպում է արտասվել (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

Չնայած դիաո-յի կամ հիշատակի էսսեններ գրվում էին դեռևս հին ժամանակներում, բավական երկար ժամանակ պետք եկավ, որպեսզի հիշատակի էսսեն դառնա խիստ հռետորական ոճով գրական ստեղծագործություն: Եթե այս էսսեն գրվում է ճոխ լեզվով, այն ավելի շատ նման է ֆու-ի կամ պերճախոս արձակի: Հիշատակի էսսե գրելիս պետք է կենտրոնանալ առանցքային ասելիքի վրա և բացատրել դրա ակտուալությունը, փառաբանել առաքինությունն ու հետ պահել սխալներից, տարբերել ճիշտն ու սխալը, համապատասխան գնահատականներ տալ և արտահայտել վիշտը՝ առանց հիմնական ասելիքից շեղվելու: Մրանք են հիշատակի էսսեի հիմնական կանոնները (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

### **Սիրել քո տեսակը**

**այլեյ 爰类**

Հին չինացիները նույն տեսակի այլ ներկայացուցիչներին սիրելը համարում էին գիտակցություն և ինտելեկտ ունեցող կենդանիների հիմնարար հատկություն, որը հատկապես բնորոշ էր մարդկանց, որոնք ամենագարգացածն ու առաջադեմն էին բոլոր արարածներից: Մարդկային սերը նախ և առաջ դրսևորվում է իր իսկ տեսակի հանդեպ սիրո մեջ: Եթե մարդը սիրում է այլ արարածների, բայց չի սիրում



*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

մարդկային հասարակության այլ ներկայացուցիչների, ուրեմն այդ սերն իսկական չէ: Այսպիսով, մարդկային սերը նախ և առաջ պետք է դրսևորվի այլ մարդ արարածների հանդեպ, իսկ մարդկանց հանդեպ սերը մարդկային սիրո հիմնարար հատկությունն է, ինչպես նաև այլ արարածների հանդեպ սիրո սկզբնաղբյուրը: Եվ այսպես, այլ մարդ արարածներին սիրելը մարդու որոշիչ առանձնահատկություններից է:

Մեկնաբանություններ 引例.

Երկնքի ու երկրի միջև ծնված ամեն ինչ, որն ունի կենսական ուժ, օժտված է գիտակցությամբ, իսկ գիտակցության շնորհիվ բոլորը սիրում են իրենց տեսակը... Կենսական ուժով օժտված արարածների մեջ ոչ ոք մարդուց ավելի խելացի չէ. դա է պատճառը, որ մարդիկ հավերժական սեր են տաժում իրենց ծնողների նկատմամբ (Մունցզի):

Եթե նա սիրում է այլ բաներ, բայց չի սիրում մարդկանց, ուրեմն սերն իսկական չէ: Եթե սիրում է մարդկանց, բայց չի սիրում այլ երևույթներ, ուրեմն ճշմարիտ սեր է: Մենք խոսում ենք սեփական տեսակի հանդեպ սիրո մասին: Հետևաբար, սիրող կառավարիչը, որը ղեկավարում է երկիրը, կանի ամենը, ինչ օգտակար է մարդկանց (Վարպետ Լյուի Գարնան և աշնան տարեգրքերը):

Եթե նա գիտի աշխարհում ամեն ինչ, բայց նրան ծանոթ չեն մարդկային զգացմունքները, ուրեմն չի կարող խելացի մարդ համարվել: Եթե սիրում է աշխարհում ապրող ամեն բան, բայց չի սիրում մարդ արարածներին, չի կարող համարվել ճշմարիտ սիրող մարդ: Մենք խոսում ենք մարդու տեսակի հանդեպ սիրո մասին. խոսքն ինտելեկտի՝ իրերն իրենց ճշմարիտ պատկերով տեսնելու ունակության մասին է (Հուայնանցզի):

**Նա, ով ամենից շատ է սիրում ժողովրդին,  
տաղանդներ կփնտրի  
այ բեն շեն ջե ցիու սյան ձի 爱人深者求贤急**

Նա, ով իսկապես հոգ է տանում ժողովրդի մասին, կցանկանա տաղանդներ փնտրել: Տաղանդներ ասելով նկատի ունենք ականավոր մարդկանց, մասնավորապես նրանց, ովքեր բարձր բարոյական չափանիշներ ու հմտություններ ունեն, մարդիկ ասելով նկատի ունենք հասարակությունն ընդհանրապես, իսկ մարդկանց սիրել՝ նշանակում է հոգալ նրանց մասին: Մեր եզրույթն այստեղ վերաբերում է ոչ թե անհատական բարոյականությանը կամ անհատական մտերմությանը, այլ նրան, որ ղեկավարները պետք է լավ կառավարեն երկիրը, ապահովեն իրենց ժողովրդի բարեկեցությունն ու սպասարկեն նրանց շահերը, ազատեն նրանց տառապանքներից ու անհիմն ոտնձգություններից, հնարավորություն տան ապրել կայուն կյանքով ու սիրելի աշխատանք ունենալ: Դրան հասնելու համար կառավարելիս ղեկավարները պետք է հենվեն ականավոր մարդկանց վրա. այսպիսով, ղեկավարները, որոնք իսկապես հոգ են տանում իրենց ժողովրդի մասին, անշուշտ, տաղանդներ գտնելու բուռն ցանկություն կունենան: Մարդկանց սիրելը հիմնարար նշանակություն ունի, իսկ տաղանդներ փնտրելը դրա իրագործման կոնկրետ միջոց է:

Մեկնաբանություն 引例.

Նա, ով իսկապես հոգում է ժողովրդի մասին, կփնտրի տաղանդավոր մարդկանց, նա, ով ուրախությամբ է տաղանդներ փնտրում, լավ կվերաբերվի նրանց (Հուանշինգունի ռազմավարությունը սպիտակ մետաքսի վրա):

**Պատերազմի դաշտում ձգտում ենք արագ հաղթանակի,  
այլ ոչ երկարաձգման**

**բին գույ շեն, բու գույ ձիու 兵贵胜, 不贵久**

Պատերազմում պետք է ձգտել արագ հաղթանակի և խուսափել դրա երկարաձգումից: Պատերազմ վարելու այս սկզբունքն առաջադրել է հին ռազմագետ Սունցզին: Սա հատկապես կարևոր է նախաձեռնող կողմի համար: Եթե պատերազմը շարունակվի առանց վճռական հանգուցալուծման, կհանգեցնի բարոյական ոգու անկման, մարտունակության թուլացման, սպառման ավելացման և մատակարարումների ոլորտի դժվարությունների: Ի վերջո, դժվար կլինի իրագործել պատերազմի նպատակները, և կորուստները կարող են նույնիսկ գերազանցել ձեռքբերումները: Հնարավոր է, որ առաջանան դժվարություններ, ինչը կվտանգի երկրի անվտանգությունը: Սա պատերազմի համապարփակ գաղափար է, որը ներառում է քաղաքական, տնտեսական և այլ գործոններ:

Մեկնաբանություն 引例.

Պատերազմի նպատակը հաղթանակն է: Հետևաբար, երկարատև պատերազմն ուժասպառ է անում զորքն ու թուլացնում բարոյահոգեբանական վիճակը: Նրանք չեն կարողանա հարձակվել քաղաքների վրա: Եթե երկար ժամանակ տնից հեռու լինեն, երկիրը կկանգնի ֆինանսական խնդիրների առաջ... Այսպիսով, պատերազմում պետք է ձգտել արագ հաղթանակի, այլ ոչ անվերջ երկարաձգման: Եվ այսպես, ռազմական գործերում հմուտ հրամանատարը պատասխանատու է իր ժողովրդի ճակատագրի համար և ապահովում իր երկրի անվտանգությունը (Պատերազմի արվեստը):

**Աղվայա/ Ոչ երկակիություն /Ոչ հակասականություն  
բուեր 不二**

Աղվայա գաղափարը սովորեցնում է խուսափել ծայրահեղություններից, հաղթահարել բոլոր տարբերությունները և բոլորին հավասար վերաբերվել: Սովորական մարդը հաճախ աշխարհը դիտարկում է երկճյուղ` ստեղծելով մի շարք հակադրություններ, ինչպիսիք են` հավերժություն-ժամանակավորություն, տիրել-սեփականությունից զրկվել: Բուդդիստները համարում են, որ երկճյուղ մոտեցումն աշխարհը պատկերում է ֆանտազիաների ու տարբերությունների միջոցով, բայց չի կարող ճշգրիտ արտացոլել իրականությունը: Այս ֆանտազիաներն ու տարբերություններն ինքնըստինքյան ներառված են ցանկացած ընկալման մեջ, որը հիմնված է բառային կոնցեպտների վրա: Հետևաբար, ցանկալի է խուսափել երկու ծայրահեղությունից և աշխարհիկ անունների ու բառերի մոլորություններից: Այսպես կարելի է անդրանցել սովորական մարդու ընկալած տարբերակումները և հասնել հավասարության ու դատարկության բարձրագույն իմաստության:

Մեջբերում 引例.

Եթե չունես որևէ խոսք, մեկնաբանություն, հղում կամ նույնիսկ գիտելիք ինչ-որ բանի մասին և հեռու ես մնում որևէ հարցի վերաբերյալ հարցերից, պատասխաններից կամ դատողություններից, ապա կարող ես դիարմա դարպասի միջով հասնել աղվայա վիճակի (Վիմալակիրտիի ուսմունքը):

**Վարպետ-բժիշկ ամբողջ ժողովրդի համար  
ցանչեն-դայի 蒼生大医**

Այս եզրույթը նշանակում է բժիշկ, որը հարգված է բոլորի կողմից, հրաշալի բուժում է բոլոր մարդկանց: Սա բժշկի

իդեալական կերպարն է, որ նկարագրում է Թան դինաստիայի բժիշկ Սուն Միմիաոն (581-682) իր «Հիմնական բանաձևեր շտապ ու անհետաձգելի դեպքերի համար» գրքում: «Բոլոր մարդիկ» ասելով նկատի ունենք հիմնականում հասարակ բնակչությանը, վարպետ բժիշկը յուրահատուկ բժիշկ է, որը հարգանքի է արժանի: Այս բժիշկն օժտված է երեք հիմնական հոգևոր հատկանիշով: Առաջինը հավասարությունն է. բժիշկը հավասարապես հոգ է տանում բոլոր հիվանդների մասին՝ անկախ սոցիալական վիճակից, հասարակական կարգավիճակից կամ բարեկամական կապերից: Երկրորդը հոգատարությունն է, երբ բժիշկը բոլոր հիվանդներին վերաբերվում է ինչպես հարազատների, խոր կարեկցանքով ու ապրումակցմամբ: Երրորդն անձնագոհությունն է, երբ բժիշկն ուշադրությունը կենտրոնացնում է միայն հիվանդներին բուժելու վրա՝ ուշադրություն չդարձնելով անձնական ապահովությանը կամ սեփական շահին: Սա այս գաղափարի ամենակարևոր բաղադրիչն է. «Հմուտ բժիշկը պետք է ունենա փայլուն հմտություններ և ազնվություն»: Սա նաև «բժշկի հոգատար սիրտ» արտահայտության բարձրագույն դրսևորումն է, որը նաև չինական բժշկության հումանիստական էության արտացոլումն է:

Մեջբերում 引例.

Բոլոր հիվանդները, որոնք դիմում են բժշկին, պետք է արժանանան հավասար վերաբերմունքի, ինչպես ընտանիքի անդամները՝ անկախ նրանց հասարակական կարգավիճակից, հարստությունից, տարիքից, արտաքինից կամ պահվածքից, անկախ նրանից՝ ընկերներ են թե թշնամիներ, Հան դինաստիայից են թե այլ էթնիկական խմբի ներկայացուցիչ են, խելացի են թե ոչ: Բժիշկը չպետք է միշտ ու ամենուր անհանգստանա միայն սեփական օգուտների ու վտանգների համար, հոգ տանի իր սեփականության, ընտանիքի կամ կյանքի անվտանգության մասին: Հիվանդի տառապանքը պիտի համարի իրենը, լցվի կարեկցանքով, չվախեն

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

նա խոչընդոտներից, ուշադրություն չդարձնի՝ ցերեկ է թե գիշեր, տաք է թե ցուրտ, քաղցած է թե ծարավ, և մտածի միայն տկարին օգնելու մասին: Նրան չպետք է մտահոգեն իր համբավը կամ հեղինակությունը: Միայն այսպես կարող է հմուտ բժիշկ դառնալ բոլորի համար, այլապես աղետ կբերի ամենքին: (Սուն Սիմիաո. *Չինական բանասէներ արտահարգ իրավիճակների համար*):

**Մարդկային զգացմունքների ոլորտում սահմանել  
բարոյական չափանիշներ  
չենցին-լիունեն 称情立文**

Այս գաղափարը սկիզբ է առել «Ծեսերի գրքից» և Սունցզիից: Կոնֆուցիական տեսակետի համաձայն՝ մարդու զգացմունքներն առաջանում են բնական ճանապարհով և պետք է պատշաճ կերպով արտահայտվեն: Գրանք անխուսափելիորեն ազդում են մարդկանց պահվածքի և բարոյական վարքի վրա: Կանոնակարգված ու կայուն բարոյական վարք պահպանելու համար կարևոր է, որ մարդկանց զգացմունքները հավուր պատշաճի արտահայտվեն ու չճնշվեն: Հետևաբար, բարոյական չափանիշները պետք է հիմնված լինեն մարդկանց խելամիտ ցանկությունների վրա:

Մեկնաբանություն 引例.

Ինչու՞ ծնողների մահվան համար սուգը պետք է տևի երեք տարի: Պատասխան. դա կախված է սգացողի վշտի աստիճանից: Այս օրենքը, որը որոշում է մարդկային հարաբերությունների կարգը և տարբերակում մարդկանց հարաբերություններն ու սոցիալական դիրքը, չի կարելի փոխել՝ կրճատելով կամ ընդլայնելով ըստ ցանկության (Ծեսերի գիրքը):

## **Ամոթ չի քի**

Ամոթը բարոյական հոգեբանության կարևոր մաս է: Երբ գոյություն ունեն բոլորի կողմից ընդունված բարոյական գաղափարներ, և երբ մարդիկ կարծում են, որ իրենց սեփական խոսքերն ու քայլերը խախտում են այդ բարոյական սկզբունքները, նրանք գիտակցում են իրենց մեղքն ու ինքնախարազանվում. սա կոչվում է ամոթ: Կոնֆուցիականներն այսպիսի բարոյական սկզբունքների զարգացումը համարում էին էթիկական կրթության կարևորագույն նպատակ: Բացի արտաքին բարոյական նորմերը պահպանելու ցանկությունից, նրանք նաև ցանկանում էին, որ մարդիկ ունենան բարոյական վարքագծի մասին իմացություն և ամոթի միջոցով հասնեն բարոյական ինքնասահմանափակումների: Հետագայում այս եզրույթն օգտագործվում էր անբարո կամ ամոթալի խոսքերն ու արարքները զնահատելու համար:

Մեջբերումներ 引例.

Ցիզունը հարցնում էր. «Ի՞նչն է մարդուն իրավունք տալիս կոչվել շի» (խոսքը վերաբերում է այն սոցիալական շերտին, որն ազնվականության և հասարակ մարդկանց միջև է): Կոնֆուցիոսն ասում է. «Նա, ով առաջնորդվում է ամոթի զգացումով ու չի արհամարհում այն խնդիրները, որոնք նրան վստահել է տերն այլ վայր ուղարկելիս, կարող է կոչվել շի» (Անալեկտներ):

Կոնֆուցիոսն ասում էր. «Եթե մարդիկ առաջնորդվում են կառավարության հրովարտակներով, ու եթե նրանց ստիպում են պատշաճ վարք դրսևորել պատիժների միջոցով, նրանք կխուսափեն պատժից, բայց ամոթի զգացում չեն ունենա: Եթե ղեկավարվում են բարոյականությամբ ու իրենց

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

դրսևորում են սոցիալական նորմերի համապատասխան, կունենան ամոթի զգացում ու կհետևեն օրենքներին» (Անալեկտներ):

**Կատարյալ անմեղություն  
չիցիջիսին 赤子之心**

Եզրույթը վերաբերում է նորածին երեխայի մաքուր սրտին ու հոգուն, երեխայի, որը դեռ չի կեղտոտվել աշխարհիկ գործերից: Առավել հաճախ վերաբերում է չափահասներին, որոնք պահպանում են մանկան լիարժեք անմեղությունը, իրենց հեռու են պահում երկրային նպատակներից: Քաղաքական էթիկայի ոլորտում եզրույթն ընդգծում է մարդկանց բնական բարությունը, կոչ է անում կարեկցել ուրիշներին և երեխայի պես հիանալ ճշմարտությամբ: Գրականության և գեղագիտության ոլորտում վերաբերում է հիմնականում մաքրությանը, որը լի է նուրբ զգացմունքներով ու ազնիվ իդեալներով, անդրանցում է բոլոր աշխարհիկ ձգտումներն ու իմաստաբանությունը և հրաժարվում չափազանց բանական մտածողությունից, որը գուրկ է գեղագիտական դատողությունից: Եզրույթը խթանում է իդեալական անհատականության գաղափարը, որը պաշտում էին հին չինացիները, և ներկայացնում գովասանքի արժանի կերպարներ, որոնք հաճախ ի հայտ էին գալիս գրական ստեղծագործություններում:

Մեջբերումներ 引例.

Բացառիկ առաքինի մարդը նման է նորածին երեխայի: Թունավոր միջատները չեն խայթի նրան, օձերը չեն կծի, գազանները չեն վնասի, իսկ վայրի թռչունները չեն որսա: Նա բոլորովին էլ ուժեղ չէ ֆիզիկապես, բայց բռունցքները միշտ սեղմված են: Չնայած ոչինչ չգիտի կնոջ հետ մերձեց-



ման մասին, սեռական օրգանները պրկվում են, որովհետև լեցուն է կենսական էներգիայով: Ամբողջ օրը լաց է լինում, բայց ձայնը չի խոստում, որովհետև էներգիան հասուն է: Հասուն էներգիայի գնահատումը ենթադրում է մշտնջենականության ու կայունության գնահատում: Սա իր հերթին մոտ է իմաստությանը: Չգայական հաճույքների մեջ սուզվելն ու ամեն գնով կյանքին ձգտելը դժբախտություն կրերի: Եթե կենսական էներգիան թելադրված է ցանկությամբ, ապա դա զգացմունքների անտեղի ցուցադրություն է: Չափից դուրս շատ ուժը նշանավորում է ծերության սկիզբը, քանի որ այն դեմ է կյանքի բնականոն ընթացքին: Այս օրենքի ցանկացած խախտում կհանգեցնի մարդու անկմանը (Լանգզի):

Նա, ով ի գորու է մանուկ մնալ, իսկապես առաքինի մարդ է (Մենցիուս):

### **Լուռ նրբագեղություն չունդան 冲淡**

Եզրույթը կիրառվում է գրաքննադատության մեջ, վերաբերում է բանաստեղծական ոճին, որին հատուկ են պարզ ու հասարակ բառամթերքն ու ձևակերպումները և անշտապ լռությունը: Չնայած թվացյալ «ամլությանը»՝ այս ոճը տրամադրում է բազում հնարավորություններ և խիստ գրավիչ է: Այն հեղինակի մեղմ ու անվրդով խառնվածքի արտացոլանքն է, ցույց է տալիս կյանքի մասին նրա մտավոր ու հոգևոր պատկերացումները կյանքի դժվարությունները ճաշակելուց և պայքարելուց հետո, զգացմունքների բնական արտահայտություն է, որը հատում է խոսքային արտահայտման բոլոր ձևերի ու գրի բոլոր օրենքների սահմանները: Որպես գեղագիտական հասկացություն՝ լուռ նրբագեղությունը ոչ միայն ազդեցություն է ունեցել գեղարվեստական ստեղծագործության վրա, այլև ձևավորել է գրականա-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

գետների հոգևոր էությունը՝ զարգացնելով կյանքի վերաբերյալ նրանց հայացքները:

Մեկնաբանություններ 引例.

Հորինվածքն ու անհեթեթությունը սխալմամբ շփոթում են վերամբարձության և պարզության, իսկ թախծոտությունը՝ լուռ նրբագեղության հետ (Շի Չիաորան. *Բանաստեղծական ոճեր*):

Թան դինաստիայի սկզբում միայն Ուան Բոն, Յան Չիունը, Շեն Քուանցին և Մուն Ջիուենը մեծ ճանաչում ունեին, մինչդեռ նրանցից ոչ մեկը չէր ազատվել ֆորմալ գեղեցկությունից, որին ձգտում էին Յի-Լիան դարաշրջանի բանաստեղծները: Միայն Չեն Յի՛անն էր հանդես գալիս պոեզիայում նրբագեղության օգտին, որը, ըստ նրա, ամբողջությամբ արտացոլում էր Վեց դինաստիաների հոգնեցնող սենտիմենտալությունը: Դրանից հետո պոեզիայի ոճը նմանվեց Ուեյ թագավորության Հուանչու և Չիանան դարաշրջանների ոճին (Լիու Քեչուան. *Հոուցունի բանաստեղծական դիպարկումներ*):

Թառ Յուանմինի պոեզիան անգերազանցելի է իր լուռ նրբագեղության, խորության ու մաքրության շնորհիվ: Այն լիարժեք ցույց է տալիս նրա բնական զգացմունքները (Յան Շի. *Յան Շիի էսեներ*ի ժողովածու):

**Յի պոեզիայի բնագիտություն / Յիհուա (Պատումը՝ երգի ու խոսքի միջոցով)**  
**ցիհուա 词话**

Այս եզրույթն ունի երկակի իմաստ: Առաջինը վերաբերում է ցանկացած ստեղծագործության, որում կան ցի շրջանի

բանաստեղծների, բանաստեղծությունների, ցի պոեզիայի դպրոցների, ցի բանաստեղծության էության և տեքստի վերաբերյալ քննադատություններ: Ստեղծագործության այս տեսակը դասական չինական պոեզիայի գիտական հետազոտության բաղկացուցիչ մասն է: Ցի պոեզիայի քննադատությունը (համեմատաբար երկար տողերով, որոնք զուգորդվում են ավելի կարճ տողերով) առաջացել է դասական չինական պոեզիայի (յուրաքանչյուր տողում տառանշանների ամրագրված թվով) ավելի պարզ տարբերակից: Այն առաջացել է Հյուսիսային Սուն դինաստիայում և զարգացել Հարավային Սուն դինաստիայում: Ցի պոեզիան բարձր են գնահատում այնպիսի ականավոր հեղինակներ, ինչպիսիք են Չեն Թինջուն (1853-1892) իր «Ցի պոեզիան, Սպիտակ անձրև ստուդիայից» և Ուան Գուոուեյն իր (1877-1927) «Բանաստեղծական դիտարկումներ մարդկանց աշխարհում» գործերում: Երկուսն էլ գրվել են Ցին դինաստիայում: Վերջինը գրվել է այն ժամանակ, երբ Ուան Գուոուեյն արևմտյան գեղագիտական տեսությունների ազդեցության տակ էր: Միաձուլելով չինական ու արևմտյան գեղագիտական միտքը՝ այս քննադատական աշխատությունը չինացի ցի բանաստեղծներին և ցի բանաստեղծությունը դիտարկում էր միանգամայն այլ տեսանկյունից: Թեև այն առաջին հայացքից նմանակում էր շի և ցի պոեզիայի մեկնանաբանությունների ոճը, իրականում արդեն փորձում էր տեսական համակարգ կառուցել: Ցին շրջանի վերջից այն շարունակում է մնալ գրական քննադատության ոլորտի ամենաազդեցիկ երկը:

Երկրորդ, ցի հիուա եզրույթը նաև վերաբերում է թատերական ներկայացումների ոլորտին, որը միավորում է Յուան և Մին դինաստիաներում մեծ տարածում ունեցող պատումներն ու երգերը, որտեղ ցի մասը հանգավորված բանաստեղծությունների երգեցողությունն է: Ինչպես Մեծ Թան դինաստիայի Ցին արքայազնի հեքիաթներում, ներկայացման մեջ իրար հաջորդում են երգեցողությունն ու պատումը, պոեզիան ու արձակը: Այն զարգացել է Սուն դինաստիայում

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

տարածված պիեսների հիման վրա, որտեղ ներկայացման ընթացքում պատմությունը ներկայացվում էր խոսքի ու երգի միջոցով: Մին դինաստիայի երկրորդ կեսին այդ ներկայացումների համար սկսեցին օգտագործել երկու նոր եզրույթ՝ թանցի (弹词) կամ պատում երաժշտական գործիքների նվագակցությամբ, ինչպիսին է չինական ջնարը, և գուցի (鼓词) կամ պատմության ներկայացում թմբուկի և զանգակի միջոցով: Մակայն ավելի ուշ այս երկու եզրույթները փոխարինեցին հներին: Մին դինաստիայի վերջին տարիներից մինչև Յին դինաստիայի առաջին տարիներ այս եզրույթը երբեմն օգտագործվում էր մեծ մասսայականություն վայելող վեպի մասին խոսելիս, որի յուրաքանչյուր գլուխ սկսվում էր երկտող ոտանավորով. այն ներկայացնում էր գլխի հիմնական բովանդակությունը, որն ընդմիջվում էր գեղեցիկ չափածո ստեղծագործությամբ, օրինակ, «Ոսկե լոտուսի հեքիաթներով»:

Մեջբերումներ 引例.

Լուսինը գովերգող պոեզիայի նոր ոճը հետաքրքրաշարժ է, բայց Լի Շիմինի գահ բարձրանալու մասին արտասանված ու երգված պատմությունները շատ ավելի գրավիչ են (Մեծ Թան դինաստիայի Յին արքայազնի պատմությունները):

Յի պոեզիայի վերաբերյալ մեկնաբանություններն անդրադառնում են լիրիկական պոեզիայի դասականներին, վերլուծում ցի պոեզիայի տարբեր ոճերը, թվարկում ցի շրջանի բանաստեղծների առավելություններն ու թերությունները (Միե Ջիբո. *Յի պոեզիայի մեկնաբանությունների մասին*):

**Ընթերցողների վրա ազդեցություն թողնել անկեղծ  
զգացմունքներով՝ անտեսելով խոսքային  
ձևակերպումները**

**դան ձիան սինցին, բու դու ուենցի 但见性情，不睹文字**

Սա պատահում է, երբ գրական ստեղծագործությունն իր ընթերցողի առաջ բացահայտում է հեղինակի ներքին զգացմունքների ճշմարտությունն ու գեղեցկությունը, ընդ որում այնքան անկեղծորեն, որ ընթերցողն այլևս ուշադրություն չի դարձնում խոսքային ձևակերպումների վրա: Գաղափարն առաջադրել է Թան դինաստիայի բանաստեղծ-վանական Չիաոբանը (720-796): Այն ընդգծում է երեք հանգամանք: Առաջին, գրականության առանցքային խնդիրը հեղինակի անկեղծ զգացմունքներն արտահայտելն է. բառամթերքն ընդամենը գործիք է: Երկրորդ, լավ կլինի, որ թե՛ հեղինակը, թե՛ ընթերցողը կենտրոնանան իմաստի վրա և մոռանան բառերի մասին: Երրորդ, լուռ ընկալումը կարևոր նշանակություն ունի արվեստի ու գրականության համար: Միայն հոգիների երկխոսության միջոցով կարելի է ակտիվացնել տարբեր ոչ խոսքային ներիմաստներ: Եզրույթն ամբողջությամբ ընդգծում է պատկերների և գեղարվեստական մթնոլորտի կարևորությունը դասական չինական գրականության մեջ:

Մեջբերումներ 引例.

Բանաստեղծական տողերն ունեն երկու կամ ավելի իմաստ, որոնք դուրս են ինքնին լեզվի սահմաններից: Երբ ծանոթանաք իսկապես մեծ բանաստեղծի երկերի հետ, ինչպիսին է Միե Լինյունը, կապշեք, թե ինչ խիզախորեն ու անբռնազբոս է արտահայտում իր զգացմունքները, ու անմիջապես կմոռանաք նրա օգտագործած բառապաշարի մասին: Պատճառը թերևս այն է, որ նրա ստեղծագործությունները հասել են բանաստեղծական վարպետության

*Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

բարձրագույն աստիճանի (Շի Ծիարան. *Բանաստեղծական ոճեր*):

Ութ տողանոց այս բանաստեղծությունը ներծծված է հանդարտ ու կենսական էներգիայով: Երբեմն աշխույժ է, երբեմն՝ մեղմ ու նրբագեղ: Այն ռիթմիկ բարձրանում ու իջնում է, մինչև որ լիարժեք ազատություն է տալիս գրողի բանտված զգացմունքներին: Այսպես հայտնվելով հեղինակի անկեղծ զգացմունքների ազդեցության տակ՝ ընթերցողներն այլևս ուշադրություն չեն դարձնի, թե ինչ բառապաշար է օգտագործել նա (Ֆան Դունշու. *Երկու խոսք, որոնք կբացահայտեն պոեզիա գրելու զաղպղխները*):

### **Մասամբ ճանապարհ, մասամբ՝ ընկերություն**

**դառ բու թուն, բու սիան ուեյ մոու 道不同, 不相为谋**

Տարբեր ճանապարհներ բռնած մարդիկ միասին չեն ծրագրում, թե ինչպես են ճանապարհորդելու: Ի սկզբանե այս ասույթը նշանակում էր, որ տարբեր տեսակետներ ու համոզմունքներ ունեցող մարդիկ չեն ձգտում միասին աշխատել: Դառն (道), որ ի սկզբանե նշանակում էր ճանապարհ, այժմ ձեռք է բերել լրացուցիչ իմաստներ՝ կարծիքներ, համոզմունքներ, շահեր, տեսակետներ և առաջնորդող սկզբունքներ: Մոու (谋 ծրագիր) ձեռք է բերել նաև համագործակցություն, համատեղ աշխատանք իմաստը: Միասին աշխատելու համար շատ կարևոր է համաձայնության գալ մի շարք ընդհանուր նպատակների և սկզբունքների շուրջ: Առանց դրա կողմերը չեն կարող արդյունավետ համագործակցել: Մյուս կողմից, համագործակցությունը չպետք է իրականացվի ի հաշիվ սկզբունքների: Սկզբունքները պահպանել չի նշանակում մերժել համագործակցությունը: Փոխարենը նշանակում է անսկզբունքային գործարքների մերժում: Այն կիրառելի է ինչպես անհատների, այնպես էլ երկրների միջև համագործակցության դեպքում:

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Մեջբերումներ 引例.

Կոնֆուցիոսն ասում էր. «Տարբեր սկզբունքներ ունեցող մարդիկ միասին չեն աշխատում»: Սա նշանակում է, որ նրանք գործում են իրենց իսկ կամքով (Պատմաբանի գրառումներ):

Ընկերներն ունեն ընդհանուր սկզբունքներ: Եթե նրանց սկզբունքները տարբերվեն իրարից, ի՞նչը պիտի կիսեն (Սունցզի):

**Բարոյական միտք / Բարոյական գիտակցություն  
դաոսին 道心**

Բարոյական միտք ասելով նկատի ունենք, թե արդյո՞ք մարդիկ տեղյակ են բարոյական սկզբունքներից: Այն հակադրվում է «մարդկային սիրտ» արտահայտությանը և հանդիպում է այնպիսի դասական գործերում, ինչպիսիք են «Պատմության գրքի» «Հին տեքստ» տարբերակը և Սունցզիի երկերը: Սույն դինաստիայի կոնֆուցիական գիտնականները մեծ կարևորություն էին տալիս այս եզրույթներին և մեկնաբանություններ ու նկարագրություններ նվիրում դրանց: Նրանք հավատում էին, որ գիտակից միտքը կամ սիրտը ներառում է երկու գաղափար. առաջին, դաոսինը կամ «բարոյական միտքը» հասկանում է բարոյական սկզբունքները: Երկրորդ, բենսինը կամ «մարդկային սիրտը» տարված է մարդկային ցանկություններով, որոնք արթնանում են զգայական օրգանների՝ աչքերի ու ականջների միջոցով: Բարոյական սկզբունքների գիտակցումը «բարոյական մտքում» ծագում է մարդու էությունից, որը համահունչ է երկնային սկզբունքներին, բայց անորսալի է: Պետք է լիարժեք ազատություն տալ նրան, որպեսզի հնարավոր լինի զսպել «մարդկային սրտի» ավելորդ ցանկությունները:

Մեջբերումներ 引例.

Մարդու սիրտը պաշարված է վտանգներով, իսկ բարոյական միտքը նուրբ է ու անոռսալի: Մտքի կենտրոնացում է պահանջվում արդարության ու ազնվության ճանապարհից չշեղվելու համար (Պատմության գիրքը):

Գիտակցությունն ու զգացողությունները, որոնք բխում են սրտից, վերջնական արդյունքում նույնն են: Սակայն կարելի է տարբերակել «մարդու սիրտ» և «բարոյական միտք» գաղափարները: Պատճառն այն է, որ առաջինը վերաբերում է եսասիրական ցանկություններին, որոնք արթնացնում են մարմնի զգայարանները, իսկ երկրորդը ծագում է արդարության երկնային սկզբունքներից: Մարդկային ցանկությունները վտանգավոր են և հանգեցնում են անորոշության: Բարոյական սկզբունքների գիտակցումն անոռսալի է ու հազվադեպ է դրսևորվում (Ջու Սի. *Ոսկե միջինի դոկտրինի ծանոթագրությունների առաջաբան*):

**Առաքինի էություն / Բարոյականությունը՝  
որպես մարդկային էություն  
դեսին 德性**

Եզրույթը վերաբերում է մարդու ներքին բարոյական էությանը: Առաջին անգամ հայտնվել է «Ծեսերի գրքում»: Հին չինացիների շրջանում տարածված համոզմունք կար, որ մարդու բնատուր էությունն օժտված է զգացմունքներով և արտաքին աշխարհի մասին գիտելիք ձեռք բերելու ձգտումով: Սակայն նրանք տարբեր կարծիքներ ունեին այն մասին, թե արդյոք բարոյական արժեքները ներառված են մարդու բնատուր էության մեջ: Կոնֆուցիական գիտնականների մեծ մասի կարծիքով՝ մարդուն հատուկ են բարեգործությունը, արդարամտությունը, ծեսերն ու իմաստությունը, և դրանք



*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

միասին կազմում են մարդու առաքինի էությունը: Մինչդեռ այս գիտնականները պնդում էին, որ որպեսզի բնատուր էությունը զարգանա ու վերածվի գիտակցված բարյացակամության, պետք է ինքնակատարելագործում:

Մեջբերումներ 引例.

Հետևաբար, պարկեշտ մարդը պետք է հարզի մարդ արարածների առաքինի էությունը ու մշտապես ձգտի գիտելիքի: Այսպես բազմակողմանի գիտելիք ձեռք կրերի ու խորությամբ կտիրապետի դրանց: Այսպիսով նա կհասնի վարպետության ու կպահպանի Ոսկե միջինի դոկտրինը (Ծեսերի գիրքը)

Առաքինի էությունը ոչ թե ականջներ, աչքեր, բերան ու մարմին է, այլ այն աղբյուրը, որից ծնունդ են առնում բարյացակամությունը, արդարությունը, ծեսերն ու իմաստությունը: Իրականում դրանք բխում են սրտից: (Ուան Ֆուչի. *Չան Ցայի «Լուսավորություն կոնֆուցիական ուսմունքների միջոցով» գրքի առաջաբան*)

**Ճշմարիտ էության համարձակ արտահայտություն  
դու շու սինլին, բու ջու գեթաո 独抒性灵, 不拘格套**

Եզրույթը ցույց է տալիս, որ գրողը պետք է գրական երկում արտահայտի իր անկեղծ զգացմունքները և սահմանափակված չլինի կոնկրետ կանոններով կամ բանաձևերով: Առաջին անգամ այն կիրառել է Մին դինաստիայի գրող Յուան Հունդաոն (1568-1610), երբ մեկնաբանում էր կրտսեր եղբոր՝ Յուան Չունդաոյի (1570-1626) գրական ստեղծագործությունները: Ավելի ուշ այն դարձավ Գրական ստեղծագործության Գուն'ան դպրոցի առանցքային գաղափար, որը վճռականորեն դեմ էր հին շրջանի գրականության նմանակ-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

մանը, որին կողմ էին այն ժամանակի Առաջին յոթ վարպետները և Վերջին յոթ վարպետները: Նրանք բարձր էին գնահատում Յին և Հան դինաստիաների արձակը և Թան ոսկեդարի պոեզիան: Գուն'ան դպրոցն ընդգծում էր, որ գրականությունն ու արվեստը բխում են սրտից, գնահատում էր ազատությունն ու յուրօրինակությունը և հրաժարվում էր կառչած մնալ պայմանականություններից: Այս դպրոցը բանաստեղծներին կոչ էր անում անտեսել իրենց պարտադրված ցանկացած սահմանափակում: Գաղափարի նպատակն էր՝ պահպանել անհատականությունն ու ըմբոստանալ ավանդույթի դեմ մի ժամանակ, երբ նորածն էին հին գրականության հանդեպ հարգանքն ու դրա նմանակումը: Ավելի ուշ այն դրական ազդեցություն թողեց դարաշրջանի գրական ստեղծագործությունների վրա:

Մեկնաբանություններ 引例.

Բանաստեղծությունների մեծ մասն արտահայտում է նրա ներքին էությունը և սահմանափակված չէ որևէ կոնկրետ օրենքով կամ բանաձևով: Նա թղթին չի հանձնի որևէ բան, որը բնական ճանապարհով չի բխում իր ներքին աշխարհից: Երբ ներքին զգացումներն ու արտաքին օբյեկտները միաձուլվեն ու դառնան մեկ «ես», բառերը կհորդեն, կձևավորվի հրաշալի ամբողջություն, ճիշտ՝ ինչպես մեծ գետն է անարգել հոսում դեպի արևելք: Ընթերցողները կհիանան նրա ստեղծագործությունները կարդալիս (Յուան Հունգաո. *Մյասուիուի պոեզիայի առաջաբան*):

Մարդու սովորության վարքը, որը ձևավորվում է նրա բնավորությամբ, դժվար թե փոխվի: Քանի դեռ բոլոր գործերում հավատարիմ է իր էությանը, անկեղծ մարդ է (Յուան Հունգաո. *Չան Յոույուի խրատական էպիգրաֆի հեղագրություն*):

Պոեզիան տարածվում է հեռու ու ընդարձակվում իր հոգևոր գրավչության շնորհիվ, այլ ոչ թե որովհետև ծանրա-


Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

բեռնված է գրքային գիտելիքով (Յուան Մեյ. *Պոեզիայի մասին Սույյուանի մեկնաբանությունները*):

### **Դույ (Ճահիճ)**

դույ 兑

Դույ-ը (兑) ութ եռագրերից մեկն է, որոնք միացած են իրար: Այն նաև 64 հեքսագրամներից մեկն է, որը կազմված է երկու եռագրից: «Ութ եռագիր» համակարգում այն խորհրդանշում է ճահիճ կամ լիճ: Ճահիճը նպաստում է կյանքի բոլոր ձևերի ստեղծմանը, հետևաբար ամեն ինչ հաճելի է դարձնում: Եզրույթը բաղկացած է մեկ բեկված և երկու չբեկված գծից: Այն համարվում է յին եռագրամ և կնոջ խորհրդանիշ է: Քանի որ բեկված գիծը երկու ամբողջական գծի վերևում է, համարվում է, որ այն նշանակում է ընտանիքի կրտսեր դուստր:

Մեջբերումներ 引(例) 

Դույ նշանակում է հաճույք (Փոփոխությունների գիրքը):

Դույ նշանակում է միմյանց կապված երկու ջրամբար, ներկայացնում է հաճույքի գաղափարը: Նույն կերպ նաև գիտնականն է շփվում գիտակարգերի իր գաղափարակից ընկերների հետ (Փոփոխությունների գիրքը):

### **Սատյադվայա / Երկու ճշմարտություն**

 երկի 二諦

Սատյա՝ սանսկրիտում նշանակում է անբեկանելի ճշմարտություն: Սատյադվայան ցույց է տալիս ճշմարտությունը երկու մակարդակում՝ պարամարտա-սատյա (բարձրագույն ճշմարտություն), որը հիմնված է բացարձակ

բնության վրա, և սամվրիտի-սատյա (պայմանական ճշմարտություն), որը հիմնված է աշխարհիկ երևույթների վրա: Արհիդիարմայի կանոնիկ աշխատություններում ճշմարտության այս բաժանումը կատարվում է ըստ ճանաչողության մակարդակի, որտեղ անունները, բառերը, արտաքին տեսքն ու երևույթները պատկանում են աշխարհիկ ոլորտին, իսկ իրական դիարման պատկանում է բացարձակ ոլորտին: Մահայանա բուդդիզմի դասական ստեղծագործություններում սատյադվայան լայնորեն օգտագործվում է այն տեսության մեջ, ըստ որի բոլոր երևույթները, որոնք դատարկ են բնության մեջ, բարդ են: (Այլ կերպ ասած՝ բնածին դատարկությունն արտահայտվում է որպես քիավա կամ աշխարհիկ գոյություն): «Ոսկե միջինի մասին չափածո երկն» այլ կերպ է մեկնաբանում սատյադվայան: Այն հաստատում է. «Բուդդաները դիարման սովորեցնում են բոլոր կենդանի արարածներին ըստ սատյադվայայի»: Պայմանական սատյան (ճշմարտությունը) վերաբերում է աշխարհիկ երևույթների բոլոր անուններին, բառերին, արտահայտություններին ու մեկնաբանություններին, այդ թվում և Բուդդայի ուսմունքին, իսկ վերջնական սատյան վերաբերում է իրականությանը, որը բառից ու արտաքինից անդին է: Այս տեսությունը մեծ ազդեցություն ունեցավ մի շարք բուդդիստական դպրոցների վրա: Սույ դինաստիայում Շի Չիցանը (549-623)՝ Երեք-քննախոսություն դպրոցի հիմնադիրը, զարգացրեց տեսությունն ու ստացավ «սատյադվայայի չորս մակարդակ»: Շի Ջիլին (538-597)՝ Թիանթայ դպրոցի հիմնադիրը, առաջարկեց «երեք ճշմարտության տեսություն»՝ ոսկե միջինի ճշմարտությունն ընդգրկելով դատարկ (կամ վերջնական) ճշմարտության և կեղծ (կամ պայմանական) ճշմարտության գոյություն ունեցող տեսության մեջ:

Մեջբերում 引例.

Ահա թե ինչ է նշանակում սատյադվայան: Ըստ պարամարթա-սատյայի՝ բնության մեջ ամեն ինչ դատարկ է,

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

ուստի չկա կոնստանտ գոյություն: Ըստ սամվրիտի-սատյայի՝ ամեն ինչ հայտնվում է երևույթների տեսքով, ուստի բացարձակ ոչինչ չկա: Ահա թե ինչպես ենք օգտագործում սատյադվայան՝ կոնստանտ գոյությունն ու բացարձակ չգոյությունը ժխտելու համար (Շի Չիցան, *Ոսկե միջինի մասին հիմնական չափածո երկի մեկնաբանություն*):

### **Դհարմակայա / Դհարմայի մարմին**

#### **Փաշեն 二諦**

Դհարմակայա վերաբերում է Բուդդայի ուսմունքների ժողովածուին: Շեն (身-մարմին) բառն այս համատեքստում նշանակում է հավաքածու: Բուդդայի բազմաշերտ էությունը ոգեշնչման աղբյուր է «երկու մարմին», «երեք մարմին» և նույնիսկ «տասը մարմին» գաղափարների համար: Դրանց շարքում բուպակայան (ձեր կամ ձևավորված մարմինը) վերաբերում է Բուդդայի ֆիզիկական չափումներին, որին բնորոշ է աշխարհիկությունը. դհարմակայան (դհարմայի մարմին) վերաբերում է անտեսանելի իմաստությանը, որն ընդգծում է Բուդդայի բնատուր էությունը, իսկ նիրմանակայան (ձևափոխումը) վերաբերում է Բուդդայի նմանակներին, որոնք ի զորու են բոլոր միջոցներով բոլոր կենդանի էակներին սովորեցնել դհարման: Դհարմակայայի մասին բուդդիստական մեկնաբանությունները տարբեր դպրոցներում տարբեր են, բայց բոլորն էլ շեշտում են դրա կատարյալ մաքրությունն ու անվերջ գործառույթները:

Մեջբերումներ 引例.

Բոդդիսատավաները դհարմայի իրենց մարմնից հեռացրել են բոլոր տեսակի ցավերն ու դժբախտությունները և ձեռք բերել բարձրագույն գիտելիքի վեց տեսակ, իսկ բոդդիսատավաներն իրենց ծնյալ մարմնից դեռ չեն հեռաց-

րել բոլոր ցավերն ու դժբախտությունները: Նրանք, որ հեռու կմնան ցանկությունից, կկարողանան ձեռք բերել բարձրագույն գիտելիքի հինգ տեսակ (Իմաստության կատարելության քննախոսություն):

Վիմալակիրտի ուսմունքների մեկնություններում բուդդիստական վանական Սեն Ռույը բացատրում է. «Ասում են, որ գոյություն ունի դհարմայի մարմնի հինգ տեսակ՝ 1.դհարմայի ծնված մարմին, 2.դհարմայի բարերար մարմին, 3.դհարմայի ձևափոխող մարմին, 4.դհարմայի դատարկ մարմին և 5. դհարմայի այդպիսության մարմին: Սակայն դրանք մանրամասն ուսումնասիրելու դեպքում կպարզենք, որ այս բոլոր մարմիններն ուղղակի դհարմայի նույն մարմնի տարբեր հեռանկարներն են: Առաջին, այստեղ ի՞նչն է նշանակում «ծնված»: Բանի որ դհարմայի էությունը մարմին է ծնում, այն կոչվում է «դհարմայի ծնված մարմին»: Երկրորդ, մարմինը ձեռք է բերվում բարի գործեր կուտակելու միջոցով, ուստի կոչվում է «դհարմայի բարեգործ մարմին»: Երրորդ, քանի որ մարմինը կարող է ընկալել ու դրսևորել ամեն ինչ, կոչվում է «դհարմայի ձևափոխող մարմին»: Չորրորդ, մարմինն այնքան ընդարձակ է, որ գերիշխում է ամբողջ դատարկությունը: Հետևաբար, այն կոչվում է «դհարմայի դատարկ մարմին»: Հինգերորդ, մարմինն բնորոշ է ծայրահեղ նրբագեղությունը՝ առանց ձևի կամ վիճակի, ուստի այն կոչվում է «դհարմայի այդպիսության մարմին» (Շի Չենգուան. *Ծաղկաշղթայի սուլորայի հեյրագա մեկնություն*):

### **Վերադարձ հակառակին**

#### **Փան 反**

Եզրույթը նշանակում է վերադարձ սկզբնական և հակադիր վիճակի: Ավելի լայն իմաստով այն ցույց է տալիս, թե ինչպես են տեղի ունենում փոփոխությունները: Այս իմաստով եզրույթն ունի երկու տարբեր իմաստ. մեկը նշանակում

է, որ առարկայի հատկությունը կամ վիճակը որոշակի հանգամանքների ներքո մշտապես ձևափոխվում ու վերածվում է իր հակադիր վիճակին, իսկ մյուսն այն է, որ առարկան վերադառնում է իր սկզբնական կամ հիմնարար վիճակին կամ հատկությանը: Հակադիր վիճակին վերադարձը հին շինական այն օրենքների ընկալման արտահայտություն է, որոնք կառավարում են երևույթների փոփոխության ձևերը:

#### Մեջբերումներ 引例

Դառյի շարժումը ձևափոխվում է՝ վերածվելով հակառակ վիճակի կամ վերադառնալով սկզբնական վիճակի: Դառն փափուկ ու համեստ է, քանի դեռ գործում է (Liangqih):

Եթե հասկանում ենք, որ արևելքն ու արևմուտքը հակադիր են, բայց չեն կարող առանց միմյանց գոյություն ունենալ, ապա գիտենք իրերի գործառույթներն ու տեղերը (Zhuanqing):

#### **Քառակուսիություն և կլորություն**

#### **Փանյուան 方圆**

Քառակուսիությունը, որն օգտագործվում է կլորության հետ նույն բառակապակցության մեջ, ցույց է տալիս երևույթների ձևերն ու հատկությունները կամ երբեմն քառակուսի կամ կլոր առարկաներ պատրաստելու մեթոդներն ու կանոնները: Հին շինացիները համոզված էին, որ երկինքը կլոր է, իսկ երկիրը՝ քառակուսի: Երկինքը պտտվում է, հարմարվում ու ներդաշնակվում: Ի տարբերություն երկնքի՝ երկիրն անշարժ է, պինդ ու ուղղաձիգ: Նրանք պնդում էին, որ մարդիկ պետք է լինեն այնպիսին, ինչպես երկինքն ու երկիրը. դրսից կլոր, իսկ ներսից՝ քառակուսի, ինչը նշանակում է, որ մարդիկ պիտի լինեն ճկուն, իսկ սկզբունքային

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

հարցերում՝ անկոտրում: Գրական և գեղարվեստական երկերում, հատկապես վայելչագրական ստեղծագործություններում հին շինացիները պնդում էին, որ կանոնավոր գիրը պետք է լինի քառակուսի, իսկ շեղագիրը՝ կլոր: Ինչևէ, անկախ նրանից, թե գրի որ ձևն էր ընտրվում, քառակուսիությունն ու կլորությունը պետք է ներդաշնակ լինեին միմյանց հետ:

Մեջբերումներ 引例

Նույնիսկ Լի Լուի սուր տեսողությունն ու Գունշու Բանի վարպետությունը չեն օգնի նրանց քառակուսի կամ կլոր նկարել առանց կարկինի կամ քանոնի: Նույնիսկ Շի Կուանի սուր լսողությունը չի օգնի նրան հինգ երաժշտական նոտաները դասավորել առանց կամերտոնի: Նույնիսկ Յաոյի և Շուիի լուսավորական մեթոդները չեն օգնի նրանց լավ կառավարել երկիրն առանց բարեգործ կառավարման (Մենցիուս):

Որոշ հեղինակների ստեղծագործություններ կարող են կլոր կամ նուրբ լինել, իսկ մյուսները՝ քառակուսի կամ ուղղաձիգ: Հան Յուի էսեսների մեծ մասը կլոր է, Լիու Յունյուանինը՝ քառակուսի, իսկ Սու Շիի ստեղծագործություններն ավելի շատ կլոր են, քան քառակուսի (Լի Ցիցին. *Գրավոր երկերի հիմունքներ*):

Քառակուսիությունն ու կլորությունը կանոնավոր գրի և շեղագրի առանցքային հատկություններն ու օգտակար լրացումն են: Կանոնավոր գրի արժանիքը քառակուսիությունն է, շեղ գրի արժանիքը՝ կլորությունը: Վայելչագրական ստեղծագործություններում կարելի է կատարելության հասնել միայն, երբ կլորությունը լրացնի քառակուսիությունը, իսկ քառակուսիությունը լրացնի կլորությունը (Չիան Կույ. *Վայելչագրական գործերի մեկնաբանություններ*):



**Արագ նախազուշական միջոցներ ձեռնարկեր**  
**Փանուեյ-դուձիան 防微杜渐**

Եզրույթը կարելի է թարգմանել այսպես՝ վերացնել խնդիրը սաղմնային վիճակում: Թաքուն կամ չերևացող երևույթները դժվար է բացահայտել: Բայց միշտ կան զգուշացնող նշաններ, որոնք հուշում են, որ ինչ-որ նոր բան է ի հայտ եկել ու դանդաղ զարգանում է: Աշխարհում ամեն ինչ զարգանում է՝ թաքնված վիճակից հասնելով ակնհայտի, փոքրից մեծի, և ժամանակի ընթացքում այս ամենը կարող է հանգեցնել վնասակար հետևանքների: Եթե վաղ շրջանում քայլեր չեն ձեռնարկվում՝ սխալներն ու խնդիրները կանխելու և ցանկացած թերություն ժամանակին վերացնելու համար, հետևանքների դեմ պայքարելը կլինի ծախսատար և նույնիսկ աղետալի: Այսպիսով, մարդիկ պետք է խորությամբ հասկանան ու գիտակցեն, թե ինչն է ընկած զարգացման հիմքում:

Մեջբերումներ 引例

Դեռ ջրհեղեղից կամ երաշտից առաջ հեռատես և առաքինի մարդը նախապես նախազուշական միջոցառումներ կձեռնարկեր (Ուշ Հան դինաստիայի պատմություն):

Պարզևատրումն ու պատիժն այն երկու հզոր միջոցներն են, որոնք կառավարիչը չի զիջի ուրիշներին: Դրանք նրան հնարավորություն կտան աղետները վերացնել դեռևս սաղմնային վիճակում (Պատմությունը՝ որպես հայելի):

Հեշտ է բուժել սկսվող թեթև հիվանդությունը, իսկ երկարատև հիվանդությունը՝ դժվար: Ինչպես ասված է «Դեղին կայսեր ներքին կանոնում», իմաստունը սկսում է բուժումը լուրջ հիվանդությունից ոչ թե հետո, այլ առաջ (Մու Դաչուն. *Հիվանդությունների ծագումը և զարգացումը*):

### **Բնական հատկանիշներ**

#### **Ֆեն 分**

Այս եզրույթով կարելի է նկարագրել սոցիալական կարգավիճակ կամ բարձր դիրք: Որոշակի համակարգում կամ կարգում այն նշանակում է բնական ատրիբուտներ կամ սահմանափակումներ, որոնք տարբերակում են մի առարկան մյուսից: Այն արտացոլում է մի առարկայի տարբերակիչ հատկանիշը և միևնույն ժամանակ գծում է այն սահմանը, որը խորհրդանշում է մյուս առարկաներից դրա տարբերությունը, ինչպես այն հատկանիշները, որոնք տարանջատում են երկինքը մարդուց, անձնականը հանրայինից, կյանքը մահից: Այն կարող է բխել կամ բնական օրենքից կամ որոշակի տիտղոսներից ու չափանիշներից: Ինչ վերաբերում է առարկաների կամ մարդկանց խառնվածքին, ապա օգտագործվում է սինֆեն (性分) եզրույթը, որը նշանակում է «տարբեր առարկաների կամ մարդկանց բնավորությունների տարբերություն»: Մարդկային հարաբերություններում տարբեր կարգավիճակ ունեցող մարդկանց պատասխանատվությունը կոչվում է ջիֆեն (职分), որը նշանակում է հատուկ որակ, որը տարբերակում է մարդկանց պատասխանատվության տեսակները:

#### **Մեջբերումներ 引例**

Բազմաթիվ անուններ և տիտղոսներ չեն համապատասխանում նրան, ինչ պիտի նկարագրեն, իսկ նրանց կատարած խնդիրները չեն համապատասխանում իրենց առաջ դրված նպատակին: Հետևաբար, ինքնիշխան կառավարիչը պետք է ստուգի բոլոր անունների ու տիտղոսների համապատասխանությունն իրենց հատկանիշներին (Վարպետ Լյուի Գարնան ու աշնան տարեգրքերը):

Յուրաքանչյուր մարդ և առարկա ունի իր բնական հատկանիշներն ու սահմանափակումները, որոնք անհնար է

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

անտեսել կամ փոխել (Գուո Սյան. *Ձուանցգիի երկերի ծանոթագրություններ*):

### **Կռվելու համար քաջություն է պետք**

**Փու ջան, յունցի յե 夫战, 勇气也**

Ճակատամարտ մղելու համար քաջություն է պետք: Սա նշանակում է բանակի մարտական ոգի, հաղթելու կամք ու հերոսականություն: Խիզախություն՝ նշանակում է ոչ միայն անհատ զինվորների մարտական ոգին, այլև՝ ամբողջ բանակի ոգին: Սա հաղթանակի կարևոր պայման կամ նախապայման է: Ճակատամարտ սկսելը վտանգավոր է: Առանց բավականաչափ խիզախության այլ բարենպաստ պայմաններ դժվար թե օգնեն: Սրանից կարելի է անել հետևյալ ռազմական հետևությունը. բոլոր գործունեներից, որոնք անհրաժեշտ են հաղթանակի համար, մարդկային գործոնն ամենակարևորն է. պահանջված բոլոր մարդկային գործոններից մարտական ոգին ամենակարևորն է:

### **Մեջբերումներ 引例**

Կռվելու համար քաջություն է պետք: Առաջին անգամ ճակատամարտի թմբուկ զարկելուց հետո զինվորները կարթնանան: Երկրորդ անգամ, երբ զարկեն, կկորցնեն ոգևորությունը, իսկ երրորդ անգամ ամբողջությամբ կզրկվեն մարտական ոգուց: Ի տարբերություն թշնամու զինվորների, որոնք կորցրել են մարտական ոգին, մեր զինվորների ոգին ամուր է: Սա է պատճառը, որ կարողանում են հաղթել թշնամուն (Ցուոյի մեկնաբանությունները Գարնան և աշնան տարեգրքերի մասին):

Հաղթանակը նվաճվում է բանակի քաջության շնորհիվ, իսկ պարտությունը՝ վախկոտության պատճառով (Վարպետ Լյուի Գարնան և աշնան տարեգրքերը):

### **Անպաճույճ հնություն**

#### **գառգու 高古**

Այս եզրույթը նշանակում է վսեմություն կամ պարզություն, կիրառվում է հիմնականում գրաքննադատության մեջ և վերաբերում է հին ազնվականությանը, ձգտումներին կամ զգացողություններին, պատմական հանդիսավոր գեղարվեստական ոճին: Վսեմություն բառն այստեղ ենթադրում է տարածության սահմանների անդրանցում, անկախություն կոնկրետ առարկաներից, մտքերից, տրամադրություններից կամ ցանկություններից, խորհրդանշում է վերացարկում ընթացիկ գործերից և աշխարհիկ պայմանականություններից: Պարզունակություն բառն այստեղ նշանակում է ազատվել ժամանակի սահմանափակումներից ու վերադառնալ հեռավոր անցյալ: Այն նաև ենթադրում է անպաճույճ հնություն կամ արժանապատվություն: Այս երկու գաղափարները միավորելու դեպքում ստացվում է եզրույթ, որի նպատակն է թուլացնել ժամանակի ազդեցությունը և անցնել իրականության սահմանները՝ հասնելով սովորաբար անհասանելի ոլորտ, որը կապում է ներկան ու անցյալը: Երբեմն այս եզրույթը նաև վերաբերում էր վերամբարձ ոճին, որը հատուկ է ազնվականներին:

#### **Մեջբերումներ 引例**

Ազնվական մարդը, որը լիարժեք վերահսկում է իր կենսական էներգիան, բարձրանում է երկնային ոլորտ, ձեռքին լոտոսի ծաղիկ: Այսպես նա հեռանում է այս դառն աշխարհից՝ ամբողջությամբ անտեսանելի դարձնելով իրեն: Լուսինը ծագում է արևելքից, լողում է երկնքում թեթև զեփյուռի հետ: Երբ իջնում է գիշերը, խավարը պատում է Հուա սարը: Չանգերի մաքուր հնչյուններ են լսվում: Հանդարտությունը թագավորում է խորքերում՝ ոգին բարձրացնելով մահացու քառսից: Այս մարդը, որը միայնակ հիանում է նախապատ-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

մական ժամանակների գրավիչ պարզությամբ, կատարյալ թեթևությամբ ենթարկվում է խիստ առեղծվածային դառսական սկզբունքին (Միկուն Թու. *Պոեզիայի քսանչորս ուն*):

Միայն Ռուան Չիի «Մտորումներ» բանաստեղծական շարքն է աչքի ընկնում անպաճույճ հնությամբ, ներծծված է Չիան'ան շրջանի պոեզիայի աշխույժ և հզոր հասկություններով (Յան Յու. *Յանլանի պոեզիայի քննադատություն*):

Հան դինաստիայի հեղինակների արձակն ու պոեզիան, որը պահպանվել ու հասել է մեր օրեր, ցույց է տալիս հավատարմությունն անպաճույճ և հմայիչ գյուղական կյանքին (Ջան Սյուեչեն. *Պատմության ընդհանուր սկզբունքներ*):

**Աններդաշնակություն / Ներդաշնակություն  
գե / բուգե 隔 / 不隔**

Աններդաշնակություն՝ այստեղ նշանակում է զգացմունքի կեղծ արտահայտում կամ բնապատկերի ոչ բնական նկարագրություն: Սա պատահում է, երբ չկա զգացմունքների և տեսարանի լիարժեք միաձուլում, ինչն ընթերցողների մեջ հակասական զգացողություններ է արթնացնում կամ թույլ չի տալիս նույնականացնել կարդացածը: Ներդաշնակություն, մյուս կողմից, նշանակում է զգացմունքի ճշմարիտ արտահայտություն կամ բնապատկերի բնական նկարագրություն, ինչը ստեղծում է գեղագիտական զգացողություն, ասես այդ պահին այնտեղ ես ու քո աչքով տեսնում ես ամեն ինչ: Հակադիր եզրույթներից կազմված այս զույգն առաջին անգամ օգտագործել է Ուան Գուոուեյն (1877-1927) իր «Բանաստեղծական դիտարկումներ մարդկային աշխարհում» քննադատական աշխատության մեջ, որտեղ միավորել է բնական գեղեցկության գնահատումն ու ընթերցողական փորձառության կարևորությունը, ինչին էլ նախապատվություն էին տալիս հին չինացի գրականագետները, և ինչն

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

իր վրա կրում է գեղարվեստական բնագոյի արևմտյան պատկերացումների ազդեցությունը: Բնագոյը կապված է գեղարվեստական փորձառության և հոգեբանական սովորության հետ, և հակադիր գաղափարների այս զույգի քննարկումը ցույց է տալիս չինական և արևմտյան գրական-գեղագիտական մտքի նմանությունը:

Մեջբերումներ 引例

Արևելյան ցանկապատի տակ քրիզանթեմներ հավաքելիս բանաստեղծը տեսնում է հարավային սարերը. հովվերգական բնապատկերի (որի վրա պատահաբար ընկնում է նրա հայացքը) և հանդարտ գոհունակության միջև ներդաշնակություն է ստեղծվում: «Ես տեսնում եմ հարավային սարերը» ամենահրաշալի արտահայտությունն է: Մակայն վերջին տպագիր հրատարակություններում այն փոխվել է և այժմ հնչում է այսպես՝ «Ես նայում եմ հարավային սարերին», որի պատճառով բանաստեղծությունն ամբողջությամբ գրկել է հմայքից (Մու Շի. *Մու Դունփուի առաջաբանների և հետգրությունների ժողովածու*):

Էսսե գրելու համար բավարար է ճիշտ ընտրված բառերի միջոցով փոխանցել հեղինակի միտքը: Հին ժամանակներում գրականագետներն արհամարհում էին դատարկ հռետորաբանությունը: Նրանք բառեր էին ընտրում ու նախադասություններ կազմում բովանդակության հիման վրա, որը զուրկ էր ավելորդ փոփոխականներից: Թեև նրանց համար ժամանակ առ ժամանակ դժվար էր արդյունավետ կերպով ձևակերպել իրենց մտքերը, քանի դեռ ի վիճակի չէին սիրտը բացել խոսքերի միջոցով, սա գրավոր ձևի բարձրագույն ձեռքբերումն էր (Ջաո Բինունեն. *Դան Հուայիինի երկերի ժողովածուի առաջաբան*):

## **Գեճ (Սար)**

### **գեճ 良**

Սա ութ եռագրերից մեկն է, որոնք միացած են իրար: Այն նաև 64 վեցագրերից մեկն է, որը կազմված է երկու եռագրից: Ութ եռագրամային համակարգում այն խորհրդանշում է սար: Սարն անշարժ է, ինչը նշանակում է, որ ամեն ինչ գալիս է հանգուցալուծման և ստանում այն իմաստը, որ պետք է ստանա: Եզրույթը կազմված է մեկ հոծ և երկու բեկված գծից: Այն համարվում է յան եռագրամ և խորհրդանշում է տղամարդուն: Քանի որ հոծ գիծն ընկած է երկու բեկված գծերի վրա, համարվում է, որ ընտանիքի ամենափոքր որդու խորհրդանիշն է:

### Մեջբերումներ 引例

Գեճ նշանակում է կանգ առնել (Փոփոխությունների գիրքը):

Գեճ խորհրդանշում է կողք կողքի կանգնած երկու սար: Այն նշանակում է կանգ առնել: Այն, ինչ ծրագրում է պարկեշտ մարդը, երբեք չպետք է դուրս գա նրա ունակությունների և սոցիալական կարգավիճակի թույլատրած սահմաններից (Փոփոխությունների գիրքը):

## **Հանրային և մասնավոր**

### **գունսի 公私**

Եզրույթները վերաբերում են կյանքի երկու տարբեր ոլորտների և սահմանում հստակ սկզբունքներ: Ինչ վերաբերում է կյանքի ոլորտներին, ապա մասնավորը վերաբերում է անհատի կամ անհատների խմբի կյանքին, մինչդեռ հանրայինը վերաբերում է հանրային ոլորտին, որը նեղ անձնային մտահոգություններից անդին է: Կան տարբեր

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

սկզբունքներ, որոնք կառավարում են կյանքի տարբեր ոլորտներ, և այս երկուսի միջև կարող են ծագել որոշ հակադրություններ: Երբ խոսքը վերաբերում է աշխատանքի սկզբունքներին, մասնավորը հետապնդում է կոնկրետ մարդկանց կամ մարդկանց որոշակի խմբի շահեր, իսկ հանրային նշանակում է դուրս գալ եսասիրական կամ եսապաշտական հետաքրքրություններից՝ հանուն լայն հասարակության շահերի:

Մեջբերումներ 引例

Եթե հանրային և մասնավոր ոլորտները հստակ տարանջատվեն, մեղմիտ մարդը չի նախանձի առաքինի մարդուն, իսկ ստոր մարդը պատճառ չի ունենա խանդելու մեծ ձեռքբերումներ ունեցողին: Այդպես էլ Յաո և Շուն կայսրերը չօգտվեցին իրենց դիրքի առավելությունից և չձգտեցին անձնական շահի, այլ նախընտրեցին կառավարել հանուն հանրության շահի: Իշխանության ժառանգորդի դերի համար առաքինի մարդ ընտրելը չէր նշանակում որդուց հոր օտարում՝ հանուն մարդու, ում հետ նա ոչ մի արյունակցական կապ չունի, այլ ցույց էր տալիս նրա իմաստությունը պետական կառավարման գործում (Լորդ Շանի գիրքը):

Այն, ինչին մարդը ձգտում է իր համար, եսասիրական ցանկություն է. այն, ինչ պահանջում է ծեսը, երկնային սկզբունքների արդարություն է (Ջու Սի. *Հարցեր ու պատասխաններ Անաշեկյունների վերաբերյալ*):

**Փայփայել կյանքը**

**հառնեն 好生**

Եզրույթը նշանակում է փայփայել կյանքն ու ժողովրդին: Հին չինացիները համոզված էին, որ բնական աշխարհի



գեղեցկության իմաստն է՝ բոլոր կենդանի արարածներին հնարավորություն տալ հավերժանալ, իսկ մարդ արարածներին հատուկ է կյանքը փայփայելն ու մահն ատելը: Հետևաբար, կառավարողները պետք է մեծ ջանք գործադրեն մարդկանց կյանքը փայփայելու ու գնահատելու համար: Օրինակ, չպետք է մահվան դատավճիռ կնքեն կամ պատերազմ սկսեն, այլ վերացնեն այն ամենը, ինչը վնասում է մարդկանց, և ժողովրդի համար ապահով կյանք երաշխավորեն: «Կյանքը փայփայելու առաքինությամբ» պետք է օժտված լինեն կառավարողները, և սա սկզբունք է, որը նրանք պետք է խստորեն պահպանեն: Այս կոնցեպտը համապատասխանում է «մարդկանց փայփայելու» գաղափարին և այն մտքին, որ մեծագույն բարիքն ուրիշներին փայփայելն ու գնահատելն է, բայց մի քայլ առաջ է գնում: Այն առաջարկում է կյանքի փիլիսոփայությունը դարձնել կառավարման հիմք. ահա այն հիմնարար գաղափարը, որը բացատրում է, թե ինչու մարդիկ պետք է կարեկից լինեն և զիջեն միմյանց. այն նաև հաճախ մեջբերվում է՝ որպես չինական բժշկության մարդասիրական տեսությունների մեկնակետ:

#### Մեջբերումներ 引例

Աշխարհի մեծագույն բարիքը հետևյալն է՝ բոլոր կենդանի արարածներին հավերժանալու հնարավորություն տալ (Փոփոխությունների գիրքը):

Ավելի լավ է խնայել անհնազանդ մարդուն, քան սխալմամբ սպանել անմեղ մարդուն: Կյանքը փայփայելու այս առաքինությունը կհանգստացնի մարդկանց սրտերը, հետևաբար, նրանք այլևս երբեք չեն խախտի օրենքը (Պատմության գիրքը):

Ես լսում եմ, թե երկինքն ու երկիրն ինչ բարությամբ են վերաբերվում բոլոր կենդանի արարածներին՝ փայփայելով կյանքը, իսկ թագավորներն ինչ բարություն են դրսևորում բո-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

լոր մարդկանց նկատմամբ (Ուշ Հան դինաստիայի պատմությունը):

### **Ներդաշնակություն**

**հե 和**

Հին չինացիները հավատում էին, որ տարբեր իրերի գոյակցությունն ու կայուն դասավորությունն անհնար է՝ առանց տարբերությունները վերացնելու. այսպիսի գոյակցության կարելի է հասնել միայն, եթե ձգտեք ներդաշնակության մեջ ապրել հարգանքի ու անհատական տարբերությունները պահպանելու մթնոլորտում: Սա նշանակում է ներդաշնակություն: Այսպիսով, տարբեր առարկաները կարող են զարգանալ՝ միևնույն ժամանակ լրացնելով իրար, խթանելով թե՛ անհատների, թե՛ բոլորի կենսական ուժերը:

Մեջբերումներ 引例

Ներդաշնակությունը ծնում է նոր երևույթներ, իսկ միանմանությունը չի հանգեցնում շարունակականության (Պետությունների կառավարման դիսկուրսներ):

Առաքինի մարդը ձգտում է ներդաշնակության, այլ ոչ թե միօրինակության. մանրախնդիր մարդը ձգտում է միօրինակության, այլ ոչ թե ներդաշնակության (Անալեկտներ):

### **Ներդաշնակությունը ծնում է նոր իրեր ու երևույթներ**

**հե շի շեն ու 和实生物**

Այն գաղափարը, որ ներդաշնակությունից նոր երևույթներ են ծնվում, առաջադրել է Արևմտյան Ջոու դինաստիայի ուշ շրջանի մեծ աստղագետ Շիբոն: Նա համոզված էր, որ

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

ներդաշնակության մեջ գոյակցելիս տարբեր իրեր ու երևույթներ լրացնում են իրար, ինչի արդյունքում ծնվում են նոր իրեր ու երևույթներ: Քաղաքական կառավարման մեջ կիրառելիս գաղափարը պահանջում է, որ իշխանավորները պահպանեն տարբեր մարդկանց և իրերի առանձնահատկությունները և թույլ տան, որ դրանք ծաղկեն: Սա նպաստում է նոր իրերի ու երևույթների աճին ու խթանում է հասարակության զարգացումը:

Մեջբերում 引例 .

Միօրինակությունը չի հանգեցնում շարունակականության. ներդաշնակությունը ծնում է նոր առարկաներ ու երևույթներ: Երբ մեկը լրացնում է մյուսին, սա կոչվում է ներդաշնակեցում, ինչը հանգեցնում է կայունության ու առատության և գրավում ամեն ինչ: Եթե մի առարկա ավելացնեք մույն տեսակի մի ուրիշ առարկայի, օգտագործվելուց հետո դեն կնետեք (Պետությունների կառավարման դիսկուրսներ):

**Մակագրություններ ոսկորների կամ կրիայի պատյանի վրա  
ձիագուռուն 甲骨文**

Այսպիսի մակագրություններն իրենցից ներկայացնում էին կանխագուշակություններ և իրադարձություններ, որոնց մասին արձանագրություններ էին անում Շան և Ջոու դինաստիաների ոսկորների կամ կրիայի պատյանների վրա: Դրանք նաև հայտնի են որպես «դանակով փորագրված գիր», «կանխագուշակություններ ոսկորների կամ կրիայի պատյանների վրա» կամ «գրառումներ Յինի ավերակների վրա»: Դրանք հին Չինաստանի ամենահին հայտնի տառանշաններն են, որոնք ստեղծվել են ավելի քան 3000 տարի առաջ: Ոսկորների կամ կրիայի պատյանների վրա արված

մակագրություններն առաջին անգամ բացահայտվել են Հենան նահանգի Անյանի Սյաոթուն գյուղի Յին շրջանի ավերակների մեջ. տարածված կարծիքի համաձայն՝ դրանք առաջին անգամ հայտնաբերել է Յին դինաստիայի ուշ շրջանի Էպիգրաֆ Ուան Յիրուն 1899 թվականին: Շան և Ջոու դինաստիաներում թագավորական ընտանիքներն ու ազնվականները խորհուրդ էին հարցնում երկնքից ցանկացած հարցում՝ պետության գործերից մինչև առօրյա կյանքի սովորական մանրուքներ, օրինակ, զոհաբերական ծիսակատարություններ, եղանակ, բերքահավաք, պատերազմ, որս, հիվանդություններ և ծննդաբերություններ: Այս կերպ ստացված պատասխանները որոշում էին, թե ինչ գործողություններ է պետք ձեռնարկել: Գուշակությունը երկրի կառավարման կարևոր բաղադրիչ էր. ոսկորներն ու կրիայի կաղապարները, որոնց վրա տառեր էին մակագրված, պահպանվում էին պետական արխիվներում: Մինչ այժմ պեղվել է ավելի քան 100,000 ոսկոր և կրիայի կաղապար, հաշվարկվել է մոտավորապես 4500 տառանշան, իսկ դրանցից մոտ 1700-ը հասկացվել ու մեկնաբանվել է: Ոսկորների և կրիայի կաղապարների վրա արված տառանշանները համակարգվել են շնորհիվ չինարեն տառանշանների, մասնավորապես պիկտոգրաֆների, ինքնամեկնաբանող տառանշանների, ասոցիատիվ բառակապակցությունների, պատկերահնչյունաբանական տառանշանների, փոխադարձաբար միմյանց բացատրող և փոխառված հնչյունային տառանշանների և մեծ թվով պատկերահնչյունաբանական սիմվոլների կամ ֆոնոգրամների, որոնք միաձուլվել են: Ոսկորների և կրիայի կաղապարների վրա արված մակագրությունները նույնպես արժեքավոր և շոշափելի նյութ են Շեն և Ջոու դինաստիաների պատմությունն ուսումնասիրելու համար:

#### Մեջբերումներ 引例

Գիրը սկզբնավորվել է տառերը ոսկորների կամ կրիայի կաղապարների վրա փորագրելով կամ մակագրելով: Ըստ

Սու Շենի՝ չինական 梨 տառանշանը նշանակում է 梨... Իսկ 契 –ն հնչյունային փոխառված տառանշան է, որն առաջացել է 梨-ից... Ըստ «Երգերի գրքի» Մաոյի ծանոթագրության՝ 契-ն իմաստով նույնն է, ինչ 开-ն, ինչն էլ նույն իմաստն ունի, ինչ 刻-ը, այն է՝ փորագրել: Այսպիսով, մենք գիտենք, որ որոշ սիմվոլներ փորագրվում էին ոսկորների կամ կրիայի կաղապարների վրա (Սուն Յիրան. *Ոսկորների կամ կրիայի կաղապարների վրա մակագրված որոշ սիմվոլների մեկնաբանություն*):

Գուշակության խոսքերը, որոնք փորագրված են ոսկորների կամ կրիայի կաղապարների վրա, իսկապես հիացմունքի են արժանի իրենց գերազանց վարպետության ու փայլուն կառուցվածքի համար: Դրանք ինձ հիացնում են նույնիսկ այսօր, թեև ստեղծվել են մի քանի հազար տարի առաջ: Դրանց ոճը տարբեր է՝ կախված նրանից, թե երբ են ստեղծվել, և ում ձեռքի գործն են: Այլ կերպ ասած, Ուոլֆին թագավորի ժամանակների տառանշանները փառահեղ տեսք ունեն, իսկ Դիյի թագավորի ժամանակների նշանները նրբագեղ են (Գուո Մորուո. *Շան զինաստրիայի ոսկորների ու կրիայի կաղապարների վրա արված ընդհանուր մակագրությունների մեկնաբանություն*):

**Լսել երկու կողմին էլ  
ձիանքին 兼听**

Եզրույթը նշանակում է լսել տարբեր տեսակետներ: Որոշումներ կայացնելուց առաջ առաջնորդները պետք է լսեն զանազան կարծիքներ և համադրեն դրանք, ապա վեր հանեն ամենաճշգրիտ փաստարկները: Սա համարվում է իմաստուն ու արժանի կառավարչի հիմնական հատկանիշ: Առաջնորդը պետք է լինի արդար, անկողմնակալ ու ազատամիտ: Միայն այսպես շահագրգիռ կողմերը կարող

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Են արտահայտել իրենց միտքն ու խելամիտ առաջարկներ անել, ինչն իր հերթին առաջնորդին հնարավորություն կտա օգտվել զանազան գաղափարներից, ծանուօթեթն անել վճիռները, ճիշտ որոշումներ կայացնել ու ապահովել դրանց հաջող իրականացումը:

Մեջբերումներ 引例

Երկու կողմին էլ լսիր, և կլինես իմաստուն ու բանիմաց՝ այդպիսով լայն աջակցություն ստանալով ամբողջ երկրում (Սունցի):

Թան դինաստիայի Թայցուն կայսրը մի անգամ հարցրեց Ուեյ Ջենին. «Ինչպիսի՞ վարքագիծն է թագավորին իմաստուն կամ հիմար դարձնում»: Ուեյ Ջենը պատասխանեց. «Ամենատարբեր կարծիքներ լսելն իմաստնացնում է, իսկ կուրորեն հավատալը՝ հիմարացնում» (Պատմությունը՝ որպես հայելի):

Կառավարողները պետք է ունենան ամենատարբեր կարծիքներ լսելու ունակություն և անեն դա առավելագույնս անկողմնակալ (Սուն դինաստիայի պատմությունը):

**Իմացեք առաջիկա իրադարձությունների մասին՝  
հետևելով փոքրիկ հուշումներին  
ձիանուեյ-ջիջու 见微知著**

Փոփոխության փոքրիկ նշաններ գտնելով՝ մարդը կարող է իմանալ իրերի վիճակի, միտումների ու զարգացումների մասին: Մանրուքներն աչք չեն ծակում, ուստի դժվար է նկատել դրանք, բայց հետագայում կարող են հանգեցնել ակնհայտ հետևանքների: Յանկացած թաքուն բան ի վերջո հայտնի է դառնում, և այդ ընթացքում կարող են տեղի ունե-

նալ շրթայական ռեակցիաներ: Ուստի ինչ-որ բան անելիս պետք է լիարժեք հասկանանք ու զգուշությամբ վերաբերվենք դիմամիկային: Մենք պետք է տեսնենք թե՛ մեծ պատկերը, թե՛ փոքր մանրամասները, պատրաստ լինենք վաղ արձագանքել ցանկացած սխալի ու խնդրի, որ կարող է գլուխ բարձրացնել, և ապահովենք մեր նախաձեռնած գործի հաջողությունը: Գաղափարը նաև կոչ է անում լավ հասկանալ գիտությունը:

### Մեջբերումներ 引例

Տեսնելով, որ Շանի Ջոու արքան ուտում է փղոսկրյա փայտիկներով, Ջիսի իմաստունը սարսափեց: Տեսնելով փոքր նշանները՝ նա հասկացավ, թե այդ ամենն ինչով կարող է ավարտվել. փոքր հուշումները տեսնելով՝ նա կարողանում էր կանխագուշակել արդյունքը: Հետևաբար, երբ նկատեց փղոսկրե փայտիկները, վախեցավ, որովհետև գիտեր, որ երկնքի տակ ոչինչ, ոչինչ չի կարող հազեցնել Թագավորի ազահությունը (Հանֆեյցի):

Հետևաբար, երբ իմաստունը տեսնում է փոքրիկ հուշումներ, հասկանում է, թե ինչ է լինելու հետո. սկիզբն ուսումնասիրելով՝ իմանում է, թե ինչ է լինելու վերջում (Յուան Քան. *Յուեի պատմությունը*):

### **Պոեզիայի Չիանսի դպրոցը**

#### **Չիանսի շիփայ 江西诗派**

Պոեզիայի Չիանսի դպրոցը պոեզիայի ու արձակի առաջին դպրոցն է, որի մասին պաշտոնապես հիշատակվում է չինական գրականության պատմության մեջ: Դրա առանցքում «հում ու անմշակ բանաստեղծությունը կամ էսսեն գրական գոհարի վերածելու» և «հին սպունգից նոր կյանք

ստանալու» գաղափարներն են, ինչպես առաջարկում էր Չիանսի նահանգից Հարավային Սուն դինաստիայի բանաստեղծ Հուան Թինձիանը (1045-1105): Այդ դպրոցի ներկայացուցիչներն իրենց կյանքը նվիրում էին գիտական թեմաներով պոեզիա գրելուն: Նրանք մեծ եռանդով պաշտպանում էին կոշտ ոճը, ընդգծում էին, որ հենվում են իրենց նախնիների հմուտ ձևակերպումների կամ նշանավոր գաղափարների վրա, և մեծ ուշադրություն էին դարձնում գրելու տեխնիկական միջոցներին՝ ապահովելով, որ բանաստեղծական կոմպոզիցիայում օգտագործվող յուրաքանչյուր բառ վերադառնա իր ակունքներին, նախնական նշանակությունը: Հուանի գաղափարները տարբերվում էին Թան դինաստիայի բանաստեղծներից ոգեշնչման ձգտումով, ոգեշնչող պատկերների նրբությամբ, ինչպես նաև բանաստեղծական ստեղծագործության էներգիայով: Չիանսի դպրոցի ազդեցությունը տարածվեց Հարավային Սուն դինաստիայի բանաստեղծական համայնքում՝ մեծ ազդեցություն թողնելով արդի շրջանի բանաստեղծական ստեղծագործությունների վրա:

#### Մեջբերում 引例

Միայն Հուան Թինձիանի ժամանակ էր, որ պոեզիան վեհություն ստացավ: Հուանը ջանք չէր խնայում բանաստեղծական արվեստը խթանելու համար: Ավելի ուշ սերունդների բանաստեղծները, որոնք իրենց բանաստեղծական ոճը ձեռք բերեցին Հուանից հետո, հաջորդում էին մեկը մյուսին և արձագանքում միմյանց: Նրանք լիարժեք բացահայտում էին բանաստեղծական արվեստի հազարամյա պատմության առեղծվածները, ի ցույց դնում գրեթե բոլոր հմտությունները: Այստեղից էլ առաջացել է «պոեզիայի Չիանսի դպրոց» արտահայտությունը՝ ի պատիվ նրա հիմնադրի, որը ծնունդով Չիանսի նահանգի Յուջան քաղաքից էր (Լյու Բենջուն. *Պոեզիայի Չիանսի դպրոցի նյութերը*):



## **Բրոնզե գիր ձիւնուէն 金文**

Բրոնզե գիր էին անվանում այն տեքստերը, որոնք Շան և Ջոու դինաստիաներում մակագրում էին բրոնզե իրերի վրա. այս ուղղությունը զարգացել է ոսկորների ու կրիաների պատյանների վրա արված մակագրություններից: Հին Չինաստանում կային բրոնզե իրերի բազմաթիվ ենթատեսակներ, բայց դրանք հիմնականում բաժանվում էին երկու խմբի՝ զոհաբերական անոթներ և երաժշտական գործիքներ: Չոհաբերության համար նախատեսված անոթներն իրենցից ներկայացնում էին եռոտանի կամ քառոտանի կաթսաներ, իսկ երաժշտական գործիքներից էին, օրինակ, ժամն ազդարարող զանգերը: Դա է պատճառը, որ հնում բրոնզե իրերն անվանում էին «ժամացույցներ և կաթսաներ», իսկ բրոնզե գիրը սովորաբար կոչվում էր «ժամացույցների և կաթսաների մակագրություններ»: Բրոնզե գիրը սկսել է օգտագործվել Շան դինաստիայում, մեծ մասսայականություն է վայելել Ջոու դինաստիայում և անկում ապրել Յին դինաստիայում, այսինքն՝ տևել է ավելի քան 800 տարի: Բրոնզե գիրը պարունակում էր ավելի քան 3700 սիմվոլ, որոնցից 2420-ը հիմա անընթեռնելի են և քանակով փոքր-ինչ գերազանցում են ոսկորների ու կրիաների կադապարների վրա արված ընթեռնելի սիմվոլները: Բրոնզե գրով հիմնականում արձանագրում էին զոհաբերության արարողությունների, նվիրաբերությունների, հրովարտակների, պատերազմի մեկնարկի, որսորդական արշավների և հավատարմության ուխտի մասին: Այն արտացոլում էր տվյալ պատմական ժամանակաշրջանի կյանքը:

### Մեջբերումներ 引例

Հաճախ կոմսությունների ու վասալ պետությունների բլուրների վրա և գետամերձ տարածքներում պեղում էին

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

զանազան հին բրոնզե իրեր, որոնց վրա մակագրված էին հին ժամանակների գրականության ինչ-ինչ նմուշներ: Տառանգանները բավական նման էին իրար: Թեև ոչ ոք չի կարող հստակ ասել, թե դրանք ինչպես են փոխվել ժամանակի ընթացքում, ձևավորման գործընթացն ինչ-որ չափով հայտնի է (Մու Շեն. *Գրի բացատրություն և սիմվոլների մեկնաբանություն*):

Բնաբանները հաճախ մակագրվում են եռոտանիների վրա, որպեսզի անունը մնա պատմության մեջ, ինչպես նաև մեր նախնիների առաքինությունը փառաբանելու համար, որպեսզի նրանց բարձր համբավը հպարտությամբ փոխանցվի սերնդեսերունդ (Շեսերի գիրքը):

### **Ուժ և եռանդ ձինձիան 劲健**

Եզրույթը հիմնականում կիրառվում է գրաքննադատության մեջ և նշանակում է կենսական ուժ, լեզվի ինտենսիվություն, գրական տաղանդի պոռթկում, հզոր ազդեցություն, ստեղծագործություն, որը գրավում է ընթերցողի սիրտը: Այդպիսի երգ գրելու համար գրողից պահանջում է պահպանել մտքի պարզությունը, դրական լիցքերով լեզվ-լեցուն լինել, անվերջ զբաղվել ինքնակրթությամբ, ունենալ ազնվական իդեալներ, կախված չլինել գրական արտահայտչամիջոցներից, կիրառել բազմաթիվ ոճեր և մեծ հոգևոր ուժ ներդնել ամբողջ ստեղծագործության մեջ:

### **Մեջբերումներ 引例**

Բանաստեղծի խորհրդածությունները կարելի է համեմատել սավառնող արծվի հետ. գրական ստեղծագործությունը պետք է թրթիռ առաջացնի, ինչպես երկնքում հայտնվող

ծիածանը: Նա ասես բարձր ու զառիվեր ժայռի գազաթից նայում է Ուսիա կիրճին: Ամպերը մեղմ սահում-անցնում են ուժեղ քամուց: Այսպիսով, գրողն իր կենսական էներգիան ձևավորում է հոգու խորքում, ամրապնդում հոգևոր ուժն ու ապրում իր պարզ ու անպաճույճ կյանքը՝ պահպանելով պարկեշտության սկզբունքը: Բանաստեղծը պետք է լիարժեք հասկանա այն օրենքները, որոնք կառավարում են երկնային ուժերի կայուն, չդադարող գործողությունը, և պետք է ժողովի իր ներքին ուժը, որ կարողանա իսկապես լավ պոեզիա ստեղծել (Միկուն Թու. *Պոեզիայի քսանչորս ոճ*):

Շի Յաննիանն աշխույժ է ու անբռնազբոս: Նա զնահատում է բարոյական ազնվությունը: Գիրք կարդալիս ձգտում է ընդհանուր պատկերացում կազմել հիմնական իմաստի մասին: Բայց գրում է աշխույժ ու եռանդով: Պոեզիայում նա գերազանց է: Նրա վայելչագրական ստեղծագործությունները նույնպես հիացմունքի են արժանի (Սուն դինաստիայի պատմություն):

### **Գեղարվեստական գրականության Չինլին դպրոց**

#### **Չինլին փայ 竟陵派**

Սա գրական ստեղծագործության դպրոց էր ուշ Մին դինաստիայում: Ներկայացուցիչներն էին Ջուն Սինը (1574-1624) և Թան Յուանչունը (1586-1637), երկուսն էլ ծնվել էին Չինլինում, որն այժմ Հուբեյ նահանգի Թիանմեն քաղաքն է: Գրական դպրոցն անվանում էին նաև Ջուն-Թան: Ինչպես գրական արվեստի Գուն'ան դպրոցի անդամները, Չինլին դպրոցը նույնպես գնահատում էր այն, որ գրողն արտահայտում էր իր անկեղծ զգացմունքներն ու էությունը և դեմ է հնագույն գրականությունը համառորեն նմանակելուն: Սակայն կարծում էին, որ Գուն'ան դպրոցի (որը ներկայացնում էր Յուան Հունդաոն (1568-1610) ստեղծագործությունները ժարգոնային ու մակերեսային են: Նրանք պաշտպանում էին

հանդարտ ու խաղաղ ոճը, պնդում էին, որ գեղարվեստական գրականությունը կարող է արտահայտել մարդու ներքին եւր, բայց իրականում այդ ներքին եւ-ը ձգտում է միայն նորարարության, անընթացիության և հասարակ մահկանացուներից օտարացման: Չինիների դպրոցը մեծ ուշադրություն էր դարձնում ձևակերպումներին՝ փորձելով ստեղծել մեկուսի ու խոր մթնոլորտ: Դպրոցի ներկայացուցիչները նպաստեցին հին շրջանի գրականության նմանակման ճնշմանը և բազմաթիվ լրամշակված, ոչ պաշտոնական էսսեների ստեղծմանը: Սակայն թեմայի սահմանափակումն ու լեզվի խրթիներությունը խոչընդոտում էր հետագա զարգացումը:

Մեջբերում 引例.

Իմ համաքաղաքացի Թան Յուանչունն ու ես նույն տագնապն ունենք: Նույնիսկ երկար մտորումներից հետո ես, միևնույն է, դժվարությամբ եմ համարձակվում ասել՝ արդյո՞ք պետք է նմանակել հին գրականությունը, թե՛ ոչ: Մենք փորձում ենք հասկանալ, թե որտեղ է թաքնված հին ժամանակների պոեզիայի «ճշմարիտ էությունը»: Իսկական պոեզիան պետք է հոգևոր գործունեության արդյունք լինի: Այսպիսի գործունեության մանրամասն ուսումնասիրությունը կբացահայտի, որ այն արտացոլում է հին ժամանակների մարդկանց զգացողությունները ճգնափոքության և մեկության մեջ, ինչպես նաև այն ճանապարհը, որով նրանք լուռ շարունակում էին առաջ գնալ՝ անկախ աշխարհիկ կյանքի աղմուկից ու իրարանցումից: Իսկական պոեզիան բնորոշվում է մեծահոգությամբ և ինքնավստահությամբ, այն մեր նախնիներին հնարավորություն էր տալիս ազատ թափառել հորիզոնից անդին (Ջուն Սին. «Բանաստեղծական արվեստի նպատակը» գրքի նախաբան):

**Իրարից առանձնացրու երկրային ու  
երկնային ոլորտները  
ձուև դի թիան թուն 绝地天通**

Երկրային գործերը երկնային գործերից տարանջատելու անհրաժեշտության մասին առաջին անգամ հիշատակվել է «Պատմության գրքում» և «Պետությունների կառավարման դիսկուրսներում»: Սա նպատակ ուներ հակազդել մարդկանց և աստվածների անկանոն փոխազդեցությանը և վերանայել դրանց հարաբերությունները: Հին չինացիներն աստվածներին ու հոգիներին արվող զոհաբերությունները համարում էին երկնային թագավորության ոլորտ, իսկ մարդկանց կառավարումը՝ աշխարհիկ գործ: Երկնային և երկրային գործերը պետք է առանձին կարգավորվեն հատուկ նշանակված մարդկանց կողմից, որպեսզի բացառվի աստվածների հետ կամայական և անկանոն հաղորդակցությունը: Այս ստեղծումը կպահպաներ աստվածների հեղինակությունն ու մարդկային աշխարհի կարգն աստվածների իշխանության ներքո:

Սեջբերում 引例.

Գահ բարձրանալուց հետո Ջուանսուն հրամայեց Չունին՝ Հարավի կառավարչին, կառավարել երկնային գործերն ու հոգ տանել աստվածների մասին, իսկ Լիին՝ Կրակի կառավարչին, հրամայեց հետևել երկրային գործերին ու հոգ տանել մարդկանց մասին. այդպես կարելի էր վերադառնալ հին ավանդույթին և թույլ չտալ, որ երկնային ու երկրային գործերը միջամտեն իրար: Սա կոչվում է երկնային ու երկրային ոլորտների տարանջատում (Պետությունների կառավարման դիսկուրսներ):

**Առաքինի մարդը ձգտում է Գաոյի, այլ ոչ թե  
ապրուստի միջոցներ հայթայթելու  
ձունցի մոու դաո բու մոու շի 君子谋道不谋食**

Առաքինի մարդը ձգտում է սահմանել և կիրառել Գաոն, այլ ոչ թե զբաղվել ապրուստի միջոցներ հայթայթելով: Ի սկզբանե առաքինի մարդ էին համարում կառավարող դասն ու ազնվականությունը ներկայացնող տղամարդկանց, իսկ ավելի ուշ նաև առհասարակ առաքինի ու տաղանդավոր անհատներին: Այստեղ Գաո նշանակում է հիմնարար սկզբունքներ և կենսակերպ. «ապրուստի միջոցներ» ասելով՝ նկատի ունենք կենսապահպանման հիմնական ռեսուրսներ: Որպես սոցիալական վերնախավ՝ առաքինի մարդիկ պետք է իրենց վրա պատասխանատվություն վերցնեն Գաոն սահմանելու և կիրառելու համար: Գաոն իրագործելի պահանջ չէ: Որպես առաքինի մարդիկ՝ նրանք առօրյա կարիքները չպետք է համարեն առաջնահերթություն: Փոխարենը պիտի մտածեն այն մասին, թե հասարակությունն ինչ ակնկալիքներ ունի իրենցից՝ սոցիալական վերնախավից, որը պետք է առաջնորդի հասարակ ժողովրդին:

Մեջբերում 引例.

Կոնֆուցիոսն ասում էր. «Առաքինի մարդիկ ձգտում են սահմանել և կիրառել Գաոն, այլ ոչ թե ապրուստի միջոցներ հայթայթել: Գյուղատնտեսությամբ զբաղվողները դեռ տառապում են քաղցից, իսկ գիտական գործունեություն ծավալողներն ի վերջո կարող են պաշտոններ ստանալ: Առաքինի մարդիկ, սակայն, ավելի անհանգստանում են Գաոյի ձեռքբերումների կամ կիրառության, քան սեփական աղքատության համար» (Անալեկտներ):

## **Չմայլել կյանքով լենշեն 乐生**

Ապրելու, այլ ոչ թե մեռնելու ցանկությունը բնական է: Իշխանության եկածների հիմնական սկզբունքը մարդկանց աղետներից պաշտպանելն ու նրանց վստահությունը շահելն էր: Դա նաև օրինականացնում էր կառավարումը: Չի կարելի հուսահատության հասցնել մարդկանց այն աստիճան, որ նրանք կորցնեն ապրելու կամքը: Հետևաբար կառավարիչը պետք է մտապահի այս երկու սկզբունքը. ստեղծել բոլոր հնարավորությունները, որպեսզի մարդիկ գոյատևեն, և երբ նրանք դժվարությունների բախվեն, ամեն բան անել նրանց օգնելու համար: Հակառակ դեպքում հնարավոր չի լինի պահպանել պետության ու հասարակության կարգը, իսկ արդյունավետ կառավարման մասին առհասարակ անիմաստ է խոսել: Մա «ուրիշների մասին հոգ տանել» և «ժողովուրդը՝ առաջին հերթին», ինչպես նաև «կյանքը փայփայել» սկզբունքների դրսևորումն է:

### Մեջբերումներ 引例

Բոլորն էլ ցանկանում են ողջ մնալ ու ատում են մահը, նաև սիրում են առաքինի մարդ լինել ու բարիք ստանալ: Մարդկանց բարիք բերելն արդար գործ է: Նա, ով արդար է, սիրված ու հարգված է մարդկանց կողմից (*«Աեց ռազմավարություն»*):

Եթե մարդիկ այլևս չեն ուզում ապրել, ինչպե՞ս կարելի է ակնկալել, որ նրանք կհարգեն կառավարչին: Եթե մարդիկ այլևս չեն վախենում մեռնելուց, ինչպե՞ս կարելի է ակնկալել, որ կկատարեն կառավարության հրամանները (Հանֆեյցի):

Եթե մարդիկ չեն վախենում մահից, չեն վախենա նաև պատիժներից: Եթե մարդիկ չեն ցանկանում ապրել, անհնար

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

է համոզել, որ նրանք պատշաճ կերպով դրսևորեն իրենց (Սյուն Յուե. *Առաջարկված դասեր*):

### **Գովեստ կամ ստելայի վրա փորագրված մակագրություն լեյբեյ 诰碑**

Հին ժամանակներում այս ժանրն իրենից ներկայացնում էր հակիրճ շարադրանք՝ արժանավոր կամ առաքինի հանգուցյալներին գովերգելու համար: Այս գովեստները կամ փառաբանությունները, որ գրում էին հանգավոր բանաստեղծության տեսքով, սովորաբար պատմում էին հանգուցյալ մարդու առաքինությունների մասին և սգում նրա մահը: Ստելայի վրա արված փորագրությունը կազմված է երկու մասից, առաջին մասը հանգուցյալի կյանքի հակիրճ շարադրանքն է, իսկ երկրորդը գովերգում է մարդու արժանիքներն ու առաքինությունները: Ըստ Հարավային դինաստիաներից Լիու Սյեի (465?-520)՝ գրավոր ստեղծագործության այս տեսակն արդեն գրում էին ոչ միայն կայսրերի ու թագավորների, այլև սովորական մարդկանց համար: Տեքստը գրվում էր, որպեսզի հետագա սերունդները ծանոթանան հանգուցյալի ազնիվ կերպարին: Այն ճշմարտացիորեն ընդգծում էր մարդու արարքները, փառաբանում բարի գործերն ու արժանիքները: Գովեստը կամ ստելայի վրա փորագրված մակագրությունը նպատակ ուներ պահպանել հանգուցյալի հիշատակը և մխիթարել ողջ մնացածներին: Գրական ստեղծագործության այս տեսակը նաև խթանում էր առաքինությունն ու հետագա սերունդներին մղում ձգտել գերազանցության: Ուստի շատ կարևոր է գուսպ ու պատշաճ մոտեցում դրսևորել հանգուցյալին գնահատելիս:

Մեջբերումներ 引例

Լեյ ի սկզբանե նշանակում էր կուտակել, հետևաբար լեյբեյը կամ գովեստը թվարկում է հանգուցյալի արժանիք-



*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

ներն ու առաքինություններն և փառաբանում է նրան, որ հիշատակը հավերժանա (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

Ստելայի վրա մակագրելու համար պատմաբանի տաղանդ է պետք: Առաջին մասը մարդու կենսագրությունից ոչնչով չի տարբերվում, իսկ երկրորդ մասը գրված է հանգավոր բանաստեղծության տեսքով և բնաբան է հիշեցնում: (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

**Որոշեք մարդկային զգացմունքներն արտահայտելու պատշաճ միջոցը**

**լիջուն-ջիճիե 立中制节**

Գաղափարը ծագել է «Ծեսերի գրքից» և Սունցզիից: Կոնֆուցիականության տեսանկյունից՝ մարդկային զգացմունքները պետք է ինչպես կարգն է արտահայտվեն: Սակայն գոյություն ունեն զգացմունքների տարբեր աստիճաններ: Դրանք կառավարելու համար պետք է սահմանել կանոններ, որոնք հիմնված են այդ աստիճանների տարբերության լիարժեք ընկալման վրա, իսկ մարդկանց զգացմունքների արտահայտման օրենքները պետք է հիմնված լինեն այդ զգացմունքների չափավոր աստիճանի վրա:

Մեջբերում 引例.

Արդյո՞ք արժի հանդուրժել նրանց, ովքեր այլասերված են: Ծնողն առավոտյան մահանում է, իսկ երեկոյան նրանք արդեն մոռանում են այդ մասին: Եթե հետևենք նրանց օրինակին, թոշուններից ու գազաններից ավելի վատը կլինենք: Այսպիսի մարդիկ ինչպե՞ս կարող են ապրել ուրիշների հետ ու անկարգություններ չանել: Գուցե դրա փոխարեն հետևենք այն մարդկանց օրինակին, որոնք պահպանում են

ծեսերը: Նրանց համար երեք տարվա սուգը, որն իրականում պետք է ավարտվի 25-րդ ամսում, այնքան արագ է անցնում, որքան չորս ձին վարձով կանցնեն պատի ճեղքով: Եթե սուգն արվի այնպես, ինչպես նրանք են ցանկանում, այն հավերժ կտևի: Հետևաբար, նախկին արքաները սահմանում էին սգի պատշաճ ծես՝ ամրագրված ժամկետով: Երբ այդ ժամկետն ավարտվում է, սուգը կարելի է համարել ավարտված (Ծեսերի գիրքը):

**Նույնիսկ լավ բժիշկը չի կարող փրկել  
դատապարտված հիվանդին  
լիանյի բու նեն ձիու ումին 良医不能救无命**

Որքան էլ լավը լինի բժիշկը, չի կարող բուժել անբուժելի հիվանդությունը: Բժիշկն ամենակարող չէ: Որքան էլ հմուտ լինի, ու որքան էլ զարգացած լինեն բժշկական սարքավորումները, անհնար է բուժել բոլոր հիվանդությունները: Միշտ կան հիվանդություններ, որոնք անհնար է բուժել, և կյանքեր, որոնք անհնար է փրկել: Սա ցավալի է, բայց և անխուսափելի: Մարդիկ պետք է բանականորեն ու հանդարտ վերաբերվեն իրականությանը: Այն նաև մարդկանց հիշեցնում է արտակարգ իրավիճակների և մարդու սահմանափակումների մասին:

**Մեջբերումներ 引例**

Լավ բժիշկը կարող է բուժել միայն նրանց, ովքեր ենթակա են բուժման: Եթե մարդը մահացու հիվանդ է, ոչ մի դեղ չի փրկի նրան (Ուան Չուն. *Կրթության փարթեռ դպրոցների համեմատական ուսումնասիրություն*):

Նույնիսկ լավագույն բժիշկը չի կարող փրկել դատապարտված հիվանդին, և ամենաուժեղ մարդը չի կարող պայ-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

քարել Երկնքի դեմ: Հետևաբար, մարդը չի փրկվի նրանից, ինչ նախասահմանված է Երկնքի կողմից (Ավելի ուշ Հան դինաստիայի պատմությունը):

Նույնիսկ լավ բժիշկը ոչինչ չի կարող անել մահացու հիվանդության դեպքում (Պատմությունը՝ որպես հայելի):

**Խիզախ ժողովուրդ ունեցող երկիրը կարող է  
հաղթանակ տանել  
մին յուն ջե ջան շեն 民勇者战胜**

Խիզախությունը վճռում է ճակատամարտի հաղթական արդյունքը: Որպես բնավորության գիծ՝ խիզախությունը կապված է գլխավորապես մարտական ոգու, հաղթելու կամքի ու անվախ հերոսականության հետ: Այն անհրաժեշտ պայման կամ նախադրյալ է, որը որոշում է ճակատամարտի հաղթական արդյունքը: Բնավորության այս գիծը պետք է լինի ոչ միայն բանակում, այլև ընդհանրապես հասարակության մեջ, որովհետև վերջինս հասարակական աջակցություն է ապահովում պատերազմի ընթացքում: Միայն հերոսական հասարակությունից կարելի է ստանալ համարժեք աշխատանքային ռեսուրսներ, նյութեր, փող ու բարոյական աջակցություն: Եզրույթը ենթադրում է առհասարակ պատերազմի գաղափարը:

Մեջբերում 引例.

Խիզախ ժողովուրդ ունեցող երկիրը կհաղթի պատերազմում, իսկ վախկոտ ժողովուրդ ունեցող երկիրը կպարտվի (Լորդ Շանի գիրքը):

## **Քնաբան և ասացվածք**

### **մինջեն 铭箴**

Հին ժամանակներում գոյություն ունեւորւող ստեղծագործության երկու տեսակ, որոնց նպատակն էր քննադատել սխալները, պահպանել առաքինությունը, ոգեշնչել փիլիսոփայական միտքը: Մինը (?), որը նշանակում է բնաբան, արժանիքների ու առաքինությունների հակիրճ ամփոփումն է՝ անոթի վրա մակագրված: Ջենը (箴), որը նշանակում է մաքսիմ կամ ասացվածք, մյուս կողմից, նպատակ ունի խրատել կամ զգուշացնել: Չինարենում այն հնչում է «չեն», որը նշանակում է ասեղնաբուժության մեջ օգտագործվող ասեղ՝ հիվանդությունը կանխարգելելու կամ բուժելու ավանդական գործիք: Հետևաբար, ջենը պետք է կատարի սխալը կանխարգելելու դեր: Թե՛ մինը կամ բնաբանը, թե՛ ջենը կամ ասացվածքը նպատակ ունեն մարդկանց հետ պահել չարագործությունից, խթանել առաքինությունն ու պատժել արատները: Հարավային դինաստիաներից Լիու Սյեի (465?-520) կարծիքով՝ գրի երկու տեսակը պետք է ճշմարիտ և վստահելի տեղեկատվություն և համոզիչ փաստարկներ ներկայացնի, լինի հակիրճ և խորիմաստ:

### **Մեջբերումներ 引例**

Այսպիսով, մինը, որը նշանակում է մակագրություն, այստեղ նշանակում է անվանում: Որևէ սպասք կամ հին առարկա ուսումնասիրելիս պետք է անվանում տալ՝ հենվելով դրա էության վրա: Այսպիսի հետազոտության նպատակն է՝ խրախուսել բարոյական վարքագիծ (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

Ջեն այստեղ նշանակում է ասեղնաբուժություն բուժման նպատակով: Ասացվածքը, ինչպես և ասեղնաբուժության ասեղը, նպատակ ունի քննադատել վատ արարքները՝

աղետը կանխատեսելու նպատակով (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

Պաշտոնյան ջենը կամ ասացվածքը մեջբերում է՝ դեմ առ դեմ գրույցում կայսերը խորհուրդ տալու համար, իսկ մինը կամ բնաբանը մակագրվում է անոթի վրա: Չնայած անունները տարբեր են, երկուսն էլ նախագգուշական գործառույթ ունեն: Ջենն օգտագործվում է հիմնականում սխալը կանխարգելելու համար, ուստի պետք է հենվի փաստերի վրա և ճշգրիտ լինի ձևակերպումների մեջ: Մինը, մյուս կողմից, նաև խրախուսում է լավ գործերը, ուստի դրա լեզուն պետք է լինի ճոխ ու նրբաոճ: Բոլոր մեջբերված դեպքերը պետք է լիովին վստահելի լինեն ու ենթարկվեն մանրամասն ուսումնասիրության: Դրանք պետք է լինեն հակիրճ, ունենան խոր սոցիալական ազդեցություն: Սրանք են մին կամ ջեն գրելու հիմնական օրենքները (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

**Բուդդհանուամրտի / Հիշողություն Բուդդայի մասին  
նիանֆո 念佛**

Բուդդայի մասին հիշողությունը մտավոր գործունեություն է, որի նպատակը մաքուր առարկայի վրա կենտրոնանալն է: Այն հաճախ ներառվում է «վեց հիշողություններ» կամ «տասը հիշողություններ» կատեգորիաներում դիարմայի, սանգայի, բարոյականության, շնչառության և այլնի մասին հիշողությունների հետ մեկտեղ: Դրանց շարքում Բուդդայի մասին հիշողությունն ինքնաճանաչման ամենատարածված պրակտիկան է: Այն մարդուն հրահանգում է հիշել Բուդդայի գերազանցությունն ու բացառիկությունը, խուսափել շեղումներից ու պատրաստվել ավելի խոր մեղիտացիայի: Այս հիշողությունները կարելի է իրագործել տարբեր միջոցներով: Օրինակ, «Նամու Ամիդա Բոթսուն» (բառացի՝ Ես ողջունում եմ Ամիթաբհային) Մաքուր երկրի դպրոցի տարածված պրակտիկա է:

*Չինական ստրի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Մեջբերում 引例.

Մա Բուդդայի ուսմունքին հավատալու պրակտիկայի պարզ միջոց է, որին մարդը հասնում է սամադիի՝ մեղիտատիվ գիտակցության վիճակում, Բուդդայի հիշողությունների և մաքուր երկրում վերածնվելու երդումների միջոցով: Բոլոր կենդանի արարածներին պաշտպանող Ամիթաբայի գերբնական ուժով մարդն անկասկած վերածնվում է մաքուր երկրում (Շի Ջիյի. *Մաքուր երկրին վերաբերող փաստ կասկած*):

**Երբ թռչունները չկան, աղեղը կարելի է մի կողմ դնել  
նիստձին-գունցան 鸟尽弓藏**

Հենց որ թռչունների որսն ավարտվում է, պետք է մի կողմ դնել աղեղը: Մա հուշում է այն փաստը, որ պատերազմի ավարտից հետո պատերազմի ժամանակ քաղաքացիական ու ռազմական պաշտոնյաներին տրամադրված լիազորությունները պետք է դադարեցվեն կամ նվազեն: Հին Չինաստանում սա հաճախ պատահում էր, երբ երկիրը պատերազմական վիճակից անցնում էր խաղաղության. սա ինչ-որ չափով ապահովում էր կենտրոնական կառավարության և քաղաքացիական ու ռազմական պաշտոնյաների անվտանգությունը և նպաստում էր երկրի նորմալ ու կայուն կառավարման վերականգնմանը: Հետագայում այս արտահայտությունը ձեռք բերեց այլ իմաստ, այն է՝ առաջադրանքը կատարելուց հետո հանգիստ թողնել այն բոլոր մարդկանց, որոնք աշխատել էին դրա հաջողության համար:

Մեջբերում 引例.

Եթե բարձրաթիչ թռչուններն արդեն մահացել են, պետք է մի կողմ դնել հզոր աղեղը: Երբ թշնամի պետությունը կոր-

ծանված է, ռազմագետներին հեռացնում են: Նրանց հեռացնել չի նշանակում սպանել, այլ ենթադրում է գրկել լիազորություններից ու իշխանությունից (Հուանշիզունի Երեք խորամանկությունները):

### **Խտություն և նոսրություն նունդան 浓淡**

Եզրույթը կիրառվում է գույնի, հոտի կամ համի թանձրության տարբեր աստիճանները նկարագրելու համար: Արվեստի ու գրականության ոլորտում այն վերաբերում է նկարի գույնի թանձրությանը կամ նոսրությանը, գրական լեզվի զարդարվածությանը կամ պարզությանը, գեղարվեստական ոճի համարձակությանը կամ զսպվածությանը, զգացմունքային արտահայտության անմիջականությանը կամ մակերեսայնությանը: Խտությունն ու նոսրությունը կապված են միմյանց հետ: Ավանդական չինական գեղանկարչության մեջ, օրինակ, ընտրված գույները կարող են լինել թանձր կամ նոսր, բայց չպետք է այնքան թանձր լինեն, որ կոպիտ թվան, կամ այնքան նոսր լինեն, որ անճաշակ թվան: Ջրաներկով գեղանկարներում հատուկ ուշադրություն են դարձնում գույնի թանձրությանը կամ նոսրությանը, որի նպատակն է հավասարակշռել այս երկուսը: Սա ենթադրում է վառ ու ստվերոտ գույնի, դիմահար և հետահար տեսարանների, շոշափելիի ու անշոշափելիի, խտության ու նոսրության, հեռավոր ու մոտ տարածության պատկերների ներդաշնակություն: Իդեալական գեղանկար ասելիս ակնկալում ենք, որ ավելի խիտ ու նոսր երանգները հրաշալի լրացնում են իրար: Այս պահանջը կիրառվում է նաև արվեստի մյուս ժանրերում:

### **Մեջբերումներ 引例**

Գրավոր ստեղծագործությունը նման է պատուհանի փեղկերին, երբ ձախ և աջ կողմերը հավասարակշռված են ու

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

լրացնում են իրար: Չնակերպումները նման են գետի. եթե չափից շատ լցվի, կհեղեղվի: Մենք պետք է կշռենք, որպեսզի տեսնենք, թե արդյո՞ք կրճատումների կամ ավելացումների կարիք կա, որպեսզի ստուգենք՝ զարդարո՞ւմ է, թե՛ հասարակ: Ավելորդ մասերը պետք է հեռացնել, իսկ միախառնված զանգվածը վերացնել, որպեսզի կոմպոզիցիան ավելորդ չծանրանա (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

Այս գեղանկարի գեղարվեստական գաղափարը հանդարտ է, վերացական: Չնայած փոքր չափին ու հստակ կառուցվածքին՝ դրանում միմյանց հաջորդում են ավելի ուժեղ ու մեղմ երանգներ, ծանր ու թեթև վրձնահարվածներ: Ամպերը, մառախուղը, սարերն ու գետերը դրսևորվում են ամենատարբեր ձևերով, և աչքը ստիպված այս ամենը տեսնում է միանգամից: Սա պետք է լինի նկարչի ամենասիրելի ստեղծագործությունը (Յաո Մաո. *Մի Յոուրենի «Հունանի բլուրների ու գետերի բնապատկերի» վերջաբան*):

### **Փինլի (Գիվանագիտական էթիկա և արարողակարգ)**

#### **փինլի 聘礼**

Փինլին, որը նշանակում է դիվանագիտական էթիկա և արարողակարգ լորդի ու արքայի կամ երկու լորդի այցելությունների ժամանակ, քաղաքական գործունեության կարևոր ոլորտ էր Հին Չինաստանում: Կախված այնպիսի գործոններից, ինչպիսիք են այցելուի և հյուրընկալի կարգավիճակը և այցելությունների նպատակն ու հաճախականությունը, դիվանագիտական էթիկան վարում էին երեք մակարդակով: Տարբեր պետություններ ղեկավարող երկու դքսերի հանդիպմանը մասնակցում էր նախարարի մակարդակին հավասար դեսպանորդ, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնյաներ: Ավելի ուշ, երբ քաղաքական պայմանները փոխվեցին, փինլին վերաբերում էր երկրների և այլ



*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

անկախ քաղաքական միավորների կառավարիչների մասնակցությամբ այցելություններին և դիվանագիտական արարողություններին: Թագավորի և այլ պաշտոնյաների այցելությունների ժամանակ պահպանվող կանոնները ցույց էին տալիս տարբեր քաղաքական միավորների կարգավիճակն ու փոխադարձ հարաբերությունները: Այդպիսի առիթներին այդ միավորները ներկայացվում էին պաշտոնյաների կողմից: Ավելի ուշ փինլին ստացավ այլ իմաստ՝ պաշտոնական պարտականություններ, որոնք տղամարդը կատարում էր կնոջ հետ նշանադրվելիս:

Մեջբերումներ 引例

Ինչ վերաբերում է դքսային պետությունների հարաբերություններին, ապա պաշտոնյաները պետք է ամեն տարի փոխադարձ այցեր կատարեն, նախարարական առաքելություններ ուղարկվեն ավելի երկար ընդմիջումներով, իսկ դքսերն անձամբ այցելություններ կազմակերպեն նոր կառավարչի նշանակման առիթով (Ջուոի ծեսերը):

Ըստ դիվանագիտական արարողակարգի՝ տվյալ այցի համար ավագ դուքսն ունենում է ութ, մարկիզը կամ կոմսը՝ հինգ, իսկ վիսկոնտը կամ բարոնը՝ երեք ուղեկցող: Այսպես նրանց պաշտոնները հստակ երևում են (Ծեսերի գիրքը):

**Հազար մղոն երկարությամբ ամբարտակը կարող է փլվել մրջնաբնի պատճառով**

**ցիանլիջիդի, կույույուայուե 千里之堤, 溃于蚁穴**

Հանֆեյցիից այս արտահայտությունն ընդգծում է, թե փոքր վտանգն ինչպես կարող է վերածվել աղետալի ավերածության: Ամեն ինչ զարգանում է՝ փոքրից հասնելով մեծի, մի քանիսից՝ բազմաթիվի: Եթե ակնկալվում է լավ արդյունք,

ապա ամեն տեսակ թաքնված ու հնարավոր վտանգները պետք է հնարավորինս շուտ վեր հանել և խուսափել դրանցից, որքան էլ որ աննշան լինեն: Ասացվածքը ցույց է տալիս վաղ կանխարգելման կարևորությունը:

#### Մեջբերումներ 引例

Ցանկացած կենդանի օբյեկտ մշտապես աճում է՝ սկզբում փոքր է լինում, ապա մեծանում է, իսկ ցանկացած զանգվածային կուտակում սկսվում է փոքր խմբից: Հետևաբար, կարելի է ասել, որ ցանկացած դժվար աշխատանք պետք է սկսվի հեշտ մասից, իսկ հսկայական նախաձեռնությունը՝ փոքր գործից: Ուստի, ձեռքի տակ եղած իրերը վերահսկելու համար կարևոր է սկսել դրանց փոքր մասերը կարգավորելուց: Ուստի, պետք է «դժվար աշխատանքի նախագծումը սկսել հեշտ մասից, իսկ խոշոր առաջադրանքը իրականացնել մաս առ մաս»: Հազար մղոն երկարությամբ ամբարտակը կարող է փլվել մրջնաբնի պատճառով, իսկ հարյուր ոտնաչափ բարձրությամբ շինությունը կարող է այրվել ու մոխրի վերածվել ծխնելույզի ճեղքից ներս սպրդած կրակի պատճառով (Հանֆեյցի):

Եվ այսպես, հարյուր ոտնաչափ բարձրությամբ շինությունը կարող է մոխիրների վերածվել ծխնելույզի ճեղքից ներս սպրդած կրակի պատճառով, իսկ հազար մղոն երկարությամբ ամբարտակը կարող է փլվել մրջնաբնի պատճառով: Հին մարդիկ սկսում են նախագուշակական միջոցներ ձեռնարկել, երբ վտանգը դեռ չնշին է ու անտեսանելի, ու փորձում են չեզոքացնել այն սաղմնային շրջանում, որպեսզի պաշտպանեն այն, ինչ ամենակարևորն է (Չին դինաստիայի պատմությունը):

**Ճարպկություն ու անճոռնիություն**  
**ցիաոջուո 巧拙**

Ճարպկությունը հնարամտության, խելքի կամ բացառիկ հմտությունների հոմանիշ է: Մյուս կողմից, անճոռնիություն նշանակում է անփութություն, բթություն կամ հմտությունների բացակայություն: Արվեստի ոլորտում ճարպկությունը վերաբերում է սրամիտ, առանձնապես ջանք չպահանջող ստեղծագործությանը, որի ընդհանուր կառուցվածքը, ձևակերպումներն ու գրելու տեխնիկան լավագույն բնական վիճակում են: Սա շեշտում է գեղարվեստական ձևի գործառույթը: Բազմաթիվ տեսաբաններ կողմ են, որ անճոռնիությունը պահպանվի, բայց հանդես են գալիս հմտությունների միտումնավոր մանիպուլյացիայի դեմ: Անճոռնիություն այստեղ չի նշանակում ցածրակարգություն, այլ ենթադրում է կեցության միանգամայն բնական վիճակ կամ գրավոր ստեղծագործություն, որն ինքնուրույն այնքան գերազանց է, որ կորցրել է արհեստական հնարամտության բոլոր հետքերը: Սակայն անճոռնիության պետք է հասնել բնական ճանապարհով: Եթե գրողը միտումնավոր է անփութություններ թույլ տալիս, այն միայն հակառակ արդյունքի կրերի: Ճարպկությունն ու անճոռնիությունը լրացնում են իրար: Ցանկալի է հրաժարվել ձևականություններից և ընտրել այն, ինչ բնական է: Միայն այդպես կարելի է հասնել ստեղծագործական գերազանցության:

Մեջբերումներ 引例

Իսկապես շիտակը ծուռ կերևա, հմուտը՝ անճոռնի, պերճախոսը՝ խրթին (Լաոցզի):

Ավելի լավ է անճոռնի ու անհմուտ, քան միտումնավոր նրբաճաշակ, ավելի լավ է պարզ, քան վերամբարձ, ավելի լավ է հում ու անմշակ, քան վայելչագեղ, ավելի լավ է հազ-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

վագյուտ, քան սովորական. սա վերաբերում է ինչպես պոեզիային, այնպես էլ արձակին (Չեն Շիդաո. *Հուշանի պոեզիայի ընկալումը*):

Գրելու դժվարությունը ոչ թե ճարպկությունն է, այլ անճոռնիությունը. ոչ թե ոլորապտույտ, այլ ուղղամիտ, ոչ թե բծախնդիր, այլ անմշակ, ոչ թե ճոխ, այլ պարզ: Այս ճշմարտությունը կարելի է քննարկել միայն խելացի, այլ ոչ թե գոեհիկ մարդկանց հետ (Լի Յիցին. *Գրավոր խոսքի հիմունքներ*):

**Չգացմունքները փոխվում են իրադրության հետ, իսկ խոսքային արտահայտությունը ծագում է զգացմունքներից**

**ցին յի ու ցիան, ցի յի ցին ֆա 情以物迁, 辞以情发**

Բնական կամ հասարակական երևույթներն առաջացնում են սուբյեկտիվ զգացմունքներ, որոնք իրենց հերթին արտահայտվում են բառերով: Այս եզրույթն առաջին անգամ բարձրաձայնել է Հարավային դինաստիաներից Լիու Սյեն (465?-520) գրականության և գրավոր ստեղծագործության մասին իր քննադատական աշխատությունում, որը կոչվում է «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»: Ըստ նրա՝ սուբյեկտիվ զգացողությունները փոփոխվում են բնական և հասարակական իրադրության զուգահեռ: Բնական կամ հասարակական հարաբերությունների և խոսքային արտահայտությունների միջև հարաբերությունը ծագում է խոսքի, իմաստի ու երևույթների հարաբերությունից փիլիսոփայական և լեզվաբանական հետազոտություններում, բայց ունի հատուկ ներիմաստներ: Երբ խոսք է գնում ակադեմիական կամ պրակտիկ գրավոր ստեղծագործությունների մասին, իմաստը ձև է ստանում նախ մտքում, իսկ հետո արտահայտվում է բառերի միջոցով. նույնիսկ երբ ներառում է առարկաներ կամ բնապատկեր, գոյություն ունեցող իմաստը

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

բացատրելու և դրան օգնելու համար օգտագործվում են բառեր: Այսպիսի գործընթացում իմաստը չի փոխվի արտաքին առարկաների կամ շրջակա միջավայրի հետ: Սակայն գրական ստեղծագործությունը սուբյեկտիվ զգացմունքներ արտահայտելու գործընթաց է, հետևաբար դրա զգացմունքային ձևակերպումը տարբերվում է՝ ըստ արտաքին առարկաների կամ դեկորացիաների: Լիու Սյեի դիտարկումը միաժամանակ բացահայտում է գրականության առաջացումը և բացատրում գրական կոնցեպտի առանձնահատկությունները. այն ստիպում է, որ գրականությունը զիտակցի իր սեփական սուբյեկտիվ կարգավիճակը: Վեց դինաստիաների գրավոր ստեղծագործություններն արտացոլում են այս նոր միտումը, ինչպես նշել է Լիուն իր «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը» երկում:

Մեջբերումներ 引例.

Բնապատկերը տարբերվում է՝ կախված տարվա եղանակներից. յուրաքանչյուր եղանակ ունի իր տարբեր ուրվագծերն ու ձևերը: Մարդկային զգացմունքները փոխվում են շրջակա միջավայրի հետ, իսկ խոսքերն առաջանում են սրտի խորքից (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

Մարդիկ ունեն յոթ զգացմունք՝ ուրախություն, բարկություն, տխրություն, վախ, սեր, զզվանք և ցանկություն: Նա այս զգացմունքներն ու ձգտումներն արտահայտում է բանաստեղծական եղանակով, երբ ոգեշնչվում է արտաքին աշխարհից, և նրա հոգին հուզվում է: Բոլոր բանաստեղծությունները բխում են բնական զգացմունքներից (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

**Շատ շողորրություն և քիչ քննադատություն  
ցյուանբայ-ֆենյի 効百風**

Այս եզրույթը նշանակում է, որ էսեն չափազանց շատ է կենտրոնանում միապետի շքեղ կյանքի վրա ու արհամարհում է նրան խրատելու հեղինակի սկզբնական մտադրությունը: Արևմտյան Հան դինաստիայում գրող Յան Սյունը (մթա. 53- մթ. 18թ.) նշում էր, որ չնայած Սիմա Սիանգրուն (մթա.179-118) միշտ իր արձակ և չափածո ստեղծագործություններն ավարտում էր երգիծական քննադատությամբ, չափազանց մեծ տեղ էր տրամադրում միապետի շքեղ կյանքի նկարագրությանն ու փառաբանմանը՝ ընթերցողների ուշադրությանը ներկայացնելով կայսեր մեծ ձեռքբերումներն ու խթանելով միապետի ամբարտավանությունը՝ այսպիսով թուլացնելով գրական երկի խրատական ազդեցությունը: Հետևաբար, Յանը Սիմա Սիանրուին քննադատում էր այդպիսի ոճի համար:

Մեջբերում 引例.

Չնայած սնափառությանն ու չափազանցություններին՝ Սիմա Սիանրուն վերջապես ուշադրությունը կենտրոնացրեց զսպվածության վրա: Եվ այսպես, ի՞նչ տարբերություն կա սրա և «Երգերի գրքի» նուրբ քննադատության միջև: Յան Սյունը պնդում էր, որ Սիմա Սիանրուի գեղեցիկ գրավոր ստեղծագործություններում գերակշռում են շքեղ կյանքի նկարագրությունները, և միայն էսենի վերջում է, որ ի հայտ են գալիս խրատական խոսքեր, որոնք փառաբանում են զսպվածությունը՝ որպես մեծ արժանիք: Սա կարելի է նմանեցնել նվագախմբի, որը կատարում է Ջեն և Ուեյ պետությունների դեկադենտական երաժշտությունը, և միայն ելույթի վերջում ի վերջո նվագում է մի քանի սքանչելի, նրբաոճ նոտա: Իսկ մի՞թե սա կատակ չէ (Հան դինաստիայի պատմությունը):

**Մարդկային հարաբերություններ  
բենլուն 人伦**

Սա վերաբերում է մարդկային հարաբերությունների կարգին կամ հիերարխիային և մարդկանց վարքագծի կանոններին հիերարխիայի տարբեր մակարդակներում: Եզրույթը, որը հորինել է Մենցիուսը (372-289 մթա.) պատմում է մարդկային հինգ հարաբերությունների մասին. հոր և որդու, միապետի և նախարարի, ամուսնու և կնոջ, եղբայրների և քույրերի, ընկերների միջև: Դրանք մաս կոչվում են հինգ կապ կամ պարտականություն: Այսպիսի մարդկային հարաբերությունները համարվում էին հասարակական կարգի հիմնական կառուցվածք, որտեղ առաջնությունը տրվում է ոչ թե ավագին, այլ կրտսերին, ոչ թե հեռու, այլ մոտ հարազատներին, իսկ հասարակական կարգի տարբերությունները հստակ սահմանված էին: Մարդկային տարբեր հարաբերությունների համար հարկ է հետևել մարդկային վարքագծի տարբեր կոդեքսներին:

Մեջբերում 引例.

Մարդիկ ունեն բարոյական էություն: Եթե նրանց լավ կերակրեն, տաք հագցնեն ու հարմարավետ տեղավորեն, բայց չկրթեն, նրանք զազաններից ավելի լավը չեն լինի: Իմաստուն Շունն այնքան մտահոգված էր դրանով, որ Սիեին նշանակեց կրթության նախարար և կարգադրեց սովորեցնել միջազգային հարաբերությունների և համապատասխան նորմերի հիմունքները. հոր և որդու միջև պետք է լինի կապվածություն, միապետի ու նախարարի միջև՝ արդարություն, ամուսնու ու կնոջ միջև՝ ուշադրություն նրանց առանձին դերերին, երիտասարդների ու տարեցների միջև՝ ճիշտ կարգուկանոն, իսկ ընկերների միջև՝ պատիվ ու վստահություն (Մենցիուս):

**Կյանքը նույնքան կարևոր է, որքան երկինքը  
րենմին-գուանֆիան 人命关天**

Կյանքն ու մահը հույժ կարևոր են: Կյանքը մարդկանց կյանքն է, իսկ երկինքը՝ ամենակարևոր հարցերը: Այս արտահայտության իմաստը նման է «կյանքը գերագույն նշանակություն ունի» արտահայտությանը: Հին չինացիները մարդուն համարում էին կյանքի ամենավեհ ձև: Կյանքն ամենաթանկն է, որովհետև յուրաքանչյուր մարդ միայն մի կյանք ունի: Հետևաբար, դեպքեր քննելիս, ռազմական ուժ կիրառելիս, դեղամիջոցներ օգտագործելիս և այլն պետք է հատուկ զգուշությամբ վերաբերվել, երբ խոսք է գնում կյանքերի մասին: Մա մարդկանց և կյանքը հարգելու չինական հումանիստական գաղափարի օրինակ է:

Մեջբերումներ 引例

Իսկ մարդկային կյանքը հույժ կարևոր է: Դժվար է պահպանել կյանքը, բայց հեշտ է սպանել: Մեռյալը չի կարող կյանք վերադառնալ. սա է պատճառը, որ իմաստունները լրջությամբ էին վերաբերվում կյանքին (*Երեք թագավորությունների պատմությունը*):

Մարդկային կյանքն ամենակարևորն է, ավելի արժեքավոր, քան ոսկու հազար կտոր: Հիվանդին բուժող դեղատոմս գրելը լավ արարք է, որն ավելի արժեքավոր է, քան ոսկու հազար կտորը: Հետևաբար, իմ գրքի վերնագիրը Ցիանձինֆան է, որը բառացի նշանակում է «Հիմնական բանաձևեր արտակարգ իրավիճակների համար», որոնք հազար կտոր ոսկի արժեն կամ համառոտ՝ «Հիմնական բանաձևեր արտակարգ իրավիճակների համար» (Մուն Սիմխաո. *Հիմնական բանաձևեր արտակարգ իրավիճակների համար*):

Կյանքն ու մահը խիստ կարևոր նշանակություն ունեն. դրանք մանկական խաղեր չեն (*Կարմիր սրահի երազը*):



**Մարդու սիրտ / Մարդկային ցանկություններ  
րենսին 人心**

«Մարդու սիրտ» արտահայտությունն այստեղ վերաբերում է արտաքին գալթակողություններին և այդ գալթակողություններին ձգտելու մարդկային գիտակցությանը: Այն հակադրվում է բարոյական սկզբունքների գիտակցությանը և օգտագործվել է այնպիսի դասական գործերում, ինչպիսիք են «Պատմության գրքի» «Հին տեքստ» տարբերակը և Սունցզիի երկերը: Սուն դինաստիայի կոնֆուցիական գիտնականները մեծ կարևորություն էին տալիս միաժամանակ այս երկու գաղափարին և մեկնաբանություններ ու բացատրություններ տալիս դրանց: Համոզմունք կար, որ գիտակից միտքը կամ սիրտը ներառում է երկու ասպեկտ: Առաջինն արտաքին աշխարհի հանդեպ մարդու ցանկություններն են, որոնք արթնանում են զգայական օրգանների միջոցով, ինչպիսիք են աչքերն ու ականջները. սա կոչվում է րենսին կամ մարդու սիրտ: Երկրորդը բարոյական սկզբունքների գիտակցումն է, որը կոչվում է դասսին կամ բարոյական միտք: Մարդկային ցանկություններն առաջանում են մարմնի զգայարաններում և եսասիրական են: Հետևաբար, պետք է հնարավորություն տալ, որ բարոյական սկզբունքների գիտակցությունն ամբողջությամբ դրսևորի իրեն, որպեսզի զսպի ավելորդ մարդկային ցանկությունները, որոնք կարող են հանգեցնել վնասների:

Մեջբերումներ 引例.

Մարդու սիրտը շրջապատված է վտանգներով, իսկ բարոյական միտքը նուրբ է ու անոռսալի: Մտքի կենտրոնացում է պահանջվում արդարության և ազնվության ճանապարհին մնալու համար (Պատմության գիրքը):

Գիտակցությունն ու սրտից բխող զգացողությունները վերջնական արդյունքում նույնն են: Մակայն կարելի է տարբերակել «մարդու սիրտ» և «բարոյական միտք» հաս-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

կացությունները: Պատճառն այն է, որ առաջինը վերաբերում է եսասիրական ցանկություններին, որոնք առաջանում են մարմնական զգացողություններից, իսկ վերջինը՝ արդարության երկնային սկզբունքներից: Մարդու ցանկությունները վտանգավոր են ու հանգեցնում են անորոշության: Բարոյական սկզբունքների գիտակցությունը խաբուսիկ է ու հազվադեպ է դրսևորում ինքն իրեն (Ջու Սի. *Ոսկե միջինի դոկտրինի առաջաքանի ծանոթագրություններ*):

**Ժողովրդի դժգոհությունները վնասում են երկիրը  
րենյուան-շանգուո 人怨伤国**

Երկրին վնաս կհասցվի, եթե մարդիկ դժգոհություններ ունենան: «Մարդկանց դժգոհություններ» արտահայտությունը վերաբերում է անբավարարությանը կամ նույնիսկ բարկությանը, որ ժողովուրդն ունենում է կառավարության քաղաքականության վերաբերյալ: Լայն շրջանակների դժգոհությունը կամ ընդհանուր հանրության շրջանում բարկությունը ցույց է տալիս, որ երկրի կառավարման ոլորտում կան այս կամ այլ տեսակի խնդիրներ: Եթե ժողովուրդը չի կարող ապրել կամ աշխատել տվյալ միջավայրում, հեշտությամբ կարող են առաջանալ հասարակական անկարգություններ և ապստամբություններ, ինչը բարենպաստ չի լինի երկրի համար: Այսպիսի հանգամանքներում իշխանավորները կամ կառավարիչները պետք է ժամանակին քաղաքականության մեջ շտկումներ անեն և քրտնաջան աշխատեն՝ մարդկանց զգացմունքները մեղմացնելու համար, որպեսզի ապահովեն կայուն և ամուր կառավարում: Սա նույնն է, ինչ «երկիրը, որտեղ չկան դժգոհ մարդիկ, ուժեղ երկիր է» արտահայտությունը և կարող է նաև համարվել «առաջին հերթին՝ ժողովուրդը» գաղափարի օրինակ:

Մեջբերումներ 引例.

Եթե մարդիկ սրտերում դժգոհություններ ամբարեն, երկիրը վտանգի մեջ կլինի (Հանֆեյցի):

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Եթե մարդու ոտքերը սառչեն, սիրտը կվնասվի, եթե մարդիկ վիրավորվեն, երկիրը կվնասվի (Հուանշիգունի ռազմավարությունը սպիտակ մետաքսի վրա):

Եթե կառավարողները կոռումպացված են, իսկ ժողովուրդը՝ դժգոհ, աղետներ կպատահեն, և երկնքում անհանգստության ալիք կբարձրանա (*Հան դինաստիայի պատմությունը*):

**Առաքինի մարդիկ սիրում են սարեր,  
իսկ իմաստուն մարդիկ՝ ջուր  
րենջե-յաոշան, ջիջե-յաոշույ 仁者乐山, 智者乐水**

Այս եզրույթի համաձայն՝ սարը բարձր է ու աննկուն ու անսահման համբերությամբ դիմանում է ամեն ինչի: Այսպիսով, առաքինի մարդը խանդավառվում է՝ սա զուգորդելով հավասարակշռվածության, անվրդովության և բարեգործության հետ: Ջուրը, մյուս կողմից, անդադար հոսում է, ճանապարհ հարթում շուրջը, ու ոչ մի խոչընդոտ չի արգելակում նրա ընթացքը: Այսպիսով, իմաստուն մարդն ուրախությամբ է հիշում, թե ջուրն ինչպես է ոլոր-մոլոր հոսում իր ճանապարհով ու հետևում տարվա եղանակներին: Բարեգործ ու իմաստուն մարդիկ իրենց էության ու ունակությունների, նույնիսկ սեփական հոգու մասին խոսում են սարերի ու ջրի խորհրդանիշերի միջոցով, այստեղից էլ առաջանում է բնապատկերներ տեսնելու երջանկությունը: Սա խոսում է ազնվական մարդու ինքնազարգացման երկու կողմի մասին՝ բնական գեղեցկության անձնավորում և գեղագիտական գնահատման փորձառություն, որն առաջանում է առաքինությունը սարերի ու ջրի հետ համեմատելով և ընդգծելով: Այսպիսով, սարերն ու ջրերը հաճախ ասոցացվում են գեղեցիկ զգացումների հետ և դարձել են ընդհանուր գեղագիտական պատկեր: Սարերում ու գետակների մոտ թափառելը նաև դիտարկվում է որպես ուսյալ մարդկանց կարևոր ինքնազարգացման միջոց: Առաքինության և բնապատկերի

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

այս համեմատությունը բնորոշ է չինական գեղարվեստական արտահայտությանն ու մտածողությանը:

Մեջբերումներ 引例.

Միայն երբ տարին սարսափելի ցրտում է, տեսնում ենք, որ սոճիներն ու նոճիները վերջինն են թառամում (Անալեկտներ):

Իմաստուն մարդը ջուր է սիրում, առաքինը մարդը՝ սարեր: Իմաստուն մարդն ակտիվ է, առաքինի մարդը խաղաղ է պահում միտքը: Իմաստուն մարդը երջանիկ է, առաքինի մարդը վայելում է երկար կյանքը (Անալեկտներ):

**Տաթագատագարբհա / Տաթագատայի գիրկը  
բուվայցան 如来藏**

Տաթագատագարբհան բուդդայի վիճակին հասնելու ներուժն է, որը հատուկ է բոլոր կենդանի արարածներին: Որպես Բուդդայի վիճակի օնթոլոգիական հիմք՝ այն նկարագրված է համապատասխան սուտրաներում՝ իբրև թաքնված գիտակցություն, որով օժտված էին բոլոր կենդանի արարածները: Երբեմն այն շփոթում են ալայավիժմանայի հետ, որովհետև երկուսն էլ մաքուր են ու կատարյալ և հիմք են ապահովում ազատության համար: Ուեյի վերջից ու Չին դինաստիաներից մինչև Մույ և Թան դինաստիաներ, «տաթագատագարբհայի կախյալ ծագումը» մեծ տարածում գտավ: Ըստ դրա՝ բոլոր շնչավոր էակների տաթագատագարբհա սիրտը բացում է երկու դարպաս՝ տաթատայի (այսպիսության) դարպասը և առաջացման և քայքայման դարպասը: Առաջինը վերաբերում է հանգստությանը, իսկ երկրորդը ցույց է տալիս այն երևութականությունը, որն առաջանում է ալայավիժմանայի արդյունքում: Մա բացա-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

տրում է, թե հանդարտությունն ինչու է առաջանում ու անհետանում:

Մեջբերումներ 引例.

Բոլոր կենդանի արարածների տաթագատագարքիան խճճվում է ամենատարբեր տառապանքների մեջ, ինչպես մեղունների պարսն է պահպանում ժայռերում աճող ծառի վրա կուտակվող մեղրը: Բոլոր կենդանի արարածների համար ես կիրառում եմ ճշմարիտ դիարման ուսուցանելու, դժբախտությունների մեղուներին ոչնչացնելու և իրենց տաթագատագարքիան բացահայտելու համապատասխան մեթոդներ (Տաթագատագարքիայի սուտրա):

Որոշ դեպքերում Բուդդայի էությունը թաքնված է, որոշ դեպքերում այն լիարժեք դրսևորում է իրեն: Այն թաքնված է աղտոտվածության մեջ և դրսևորվում է, երբ գալիս է հարմար պահը: Ոմանք պնդում են, որ կենդանի արարածի էությունն ի սկզբանե աղտոտված է և մաքրվում է միայն այն ժամանակ, երբ դժբախտությունները վերանում են, բայց դա ճշմարիտ չէ: Ինչպես հիշատակվում է Մրիմալա թագուհու առյուծի մոնչյունի սուտրայի մեկնաբանության մեջ, թաքնված էությունը կոչվում է տաթագատագարքիա, իսկ դրսևորված էությունը՝ դիարմակայա (դիարմայի մարմինը): Այստեղ խոսքն ավելի շատ ոչ թե գործառույթի, այլ երևույթի մասին է (Շի Հույյուան. *Քննախոսություն հավաքի արթնացման մասին Մահայանայում*):

**Նրանք, ովքեր հմտորեն պայքարում են պարտության դեմ, չեն ոչնչանա  
շան բայ ցե բու ուան 善败者不亡**

Նրանք, ում հաջողվում է հմտորեն դիմադրել պարտությանը, չեն ոչնչանա: Պատերազմի ոչ մի կողմ չի կարող

վստահ լինել, որ միշտ հաղթելու է ու երբեք չի պարտվելու: Ականավոր հրամանատարը պետք է ոչ միայն հմտորեն օգտագործի իր առավելությունները ուժեղի դիրքերից, այլև կարողանա բացառել թերությունները թույլի դիրքում: Երբ պարտությունն անխուսափելի է, նա պետք է հնարավորինս շատ նախաձեռնողականություն վերցնի իր վրա և նվազագույնի հասցնի կորուստները՝ այդպիսով խուսափելով աղետալի պարտությունից, որը կարող է հանգեցնել լիարժեք կործանման, ոչնչացման ու քայքայման: Այս արտահայտությունը ցույց է տալիս նախաձեռնողականություն դրսևորելու դիալեկտիկական ձգտումը, երբ դու առավելություններ ունես: Այն շատ ավելի լայնորեն կիրառելի է ժամանակակից հասարակության մեջ:

Մեջբերումներ 引例.

Նա, ով հմուտ է պատերազմական գործողություններում, հեշտությամբ առաջ կգնա, նա, ով հմուտ է առաջխաղացման մեջ, հեշտությամբ չի հարձակվի. նա, ով հմուտ է հարձակվելու մեջ, հեշտությամբ չի պարտվի: Նա, ով հմուտ է պարտությանը դիմադրելու մեջ, հեշտությամբ չի ոչնչացվի (*Հան դինասպիայի պատմությունը*):

Այսպիսով, եթե երկրի բանակը պարտություն է կրում տնից հեռու, բայց նրա հիմքերն անսասան են մնում, նա կկարողանա դիմակայել պարտությանը (*Մուն դինասպիայի պատմությունը*):

**Լավ կառավարիչը չի ստում ժողովրդին  
շան ուեյ գուո ջե բու ցի ցի մին 善为国者不欺其民**

Հանրային վստահությունը պետական իշխանության հիմքն է: Լավ կառավարիչը չի կարող ստել ժողովրդին: Մա

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

չի նշանակում, որ պետությունը հանրությունից գաղտնիքներ չունի: Փոխարենը նշանակում է, որ կառավարիչը պետք է պահի իր խոստումը, պետությունը կառավարի օրենքի ուժով, պահպանի բարոյական ազնվությունն ու արժանանա ժողովրդի վստահությանը: Նա չպետք է չարաշահի իր իշխանությունը, ստի ու խաբի ժողովրդին, քանի որ այդ դեպքում կզրկվի հանրային աջակցությունից: Այս գաղափարը «առանց ժողովրդի վստահության պետությունը չի գոյատևի» սկզբունքի արձագանքն է և մարդկանց շահը գերադասելու սկզբունքի շարունակությունը:

Մեջբերումներ 引例.

Եթե չեք անում այն, ինչ անհնար է անել, նշանակում է, որ չեք ստում ժողովրդին... Եթե կառավարիչը չի ստում իր ժողովրդին, կարժանանա նրա աջակցությանը (Գուանցզի):

Հուսալիություն` նշանակում է չստել ժողովրդին (Հանֆեյցի):

Լավ կառավարիչը չի ստում իր ժողովրդին. ճիշտ ինչպես իր տունն է կարգուկանոնի մեջ պահում, չի ստում իր ընտանիքին: Վատ կառավարիչը հակառակն է անում... Եթե կառավարիչը չի վստահում իր ենթականերին, նրանք էլ իրեն չեն վստահի: Կառավարչի ու ենթակաների միջև փոխվստահության կորուստը վերջիվերջո կհանգեցնի պետության քայքայման (*Պասյունությունը` որպես հայելի*):

**Մեծ բժիշկները հիվանդությունը բուժում են  
դրա սկսվելուց առաջ  
շանգուն ցի ուեյբին 上工治未病**

Լավագույն բժիշկները բուժումը սկսում են դեռ հիվանդությունից առաջ: Շանգուն (上工) նշանակում է հմուտ, առաջ-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

նակարգ բժիշկ, ուեյբինն (未病) այն վիճակն է, երբ չնչին ախտանիշերը երևում են իսկական հիվանդության բռնկումից շատ առաջ: Չինական բժշկության այս կարևոր սկզբունքը պահանջում է, որ բժիշկը լավ հասկանա պաթոլոգիայից և բժշկությունից, ինչպես նաև ունենա հիվանդության նշանները, էությունն ու ընթացքը կանխատեսելու, գնահատելու ու ղեկավարելու բացառիկ ունակություն: Սա տալիս է վաղ հայտնաբերման, վաղ կանխարգելման ու վաղ բուժման հնարավորություն, որի իմաստն է՝ կանխարգելել, կանխել հիվանդության բռնկումը, տարածումը, զարգացումն ու փոխանցումը: Սա չինական առողջության ու բժշկության հիմնարար գաղափար է, չինական «պատրաստվել անձրևին փոթորկից առաջ» և «պաշտպանվել աղետից մինչ դրա սկսվելը» իմաստության օրինակ:

Մեջբերումներ 引例.

Այսպիսով, իմաստունները սկսում են բուժումը հիվանդության բռնկումից առաջ, ոչ թե հետո. նրանք հիվանդությունը չեն ճնշում դրա առաջացումից հետո, այլ կանխարգելիչ միջոցներ են ձեռնարկում բռնկումից առաջ (Դեղին կայսեր Բժշկության ներքին կանոն):

Մեծագույն բժիշկներն ասեղնաբուժություն են կիրառում հիվանդության սկսվելուց առաջ, պակաս հմուտ բժիշկներն այդ միջոցին դիմում են հիվանդության լրջանալուց առաջ, իսկ ոչ այնքան մեծ բժիշկներն ասեղնաբուժության են անցնում այն բանից հետո, երբ հիվանդությունը սկսում է նահանջել: Ահա թե ինչ նկատի ունենք, երբ ասում ենք, որ լավագույն բժիշկները բուժումը սկսում են ոչ թե հիվանդությունից հետո, այլ առաջ (Դեղին կայսեր Բժշկության ներքին կանոն):

Հմուտ պրակտիկ բժիշկը գիտի, որ երբ հիվանդությունը



*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

լրջանա, կսկսի տարածվել, ուստի կանխարգելիչ միջոցներ է ձեռնարկում մինչ այդ, թույլ չի տալիս, որ պաթոգեններն ավելանան ու տարածվեն, կանխարգելում է տարբեր հիվանդությունների միաժամանակ առաջացումը (Մու Դաչուն. *Հիվանդությունների ծագումն ու զարգացումը*):

**Մեծ բժշկողները բուժում են երկիրը  
շանյի-յիզուո 上医医国**

Մեծ բժշկողները կարող են բուժել երկրի հիվանդությունները: Ինչպես մեծ բժիշկը, այնպես էլ մեծ բժշկողը հմուտ, առաջնակարգ բժիշկ է: «Բուժել երկիրը» նշանակում է բժշկել ու վերացնել երկրի տարբեր հիվանդությունները: Ի սկզբանե այս արտահայտությունը նկարագրում էր, թե մեծ պետական գործիչներն ինչպես են լուծում տարբեր խնդիրներն ու երկրի կառավարման մեջ տեղ գտած թերությունները, նույն կերպ, ինչպես բուժվում է հիվանդը: Հիմա այն նաև նկարագրում է, թե մեծ բժշկի գիտելիքն ու փորձն ինչպես կարող են օգնել երկրին կանխարգելել ու վերահսկել լուրջ հիվանդությունները, օրինակ, վարակները՝ այդպիսով ապահովելով մարդկանց բարօրությունը: Եզրույթը ներառում է երկու հիմնական հասկացություն. առաջին, երկիրը բուժելու և հիվանդությունը բուժելու միջև զուգահեռներ կան. երկրորդ, ի լրումն կարևորագույն հմտությունների, բժիշկը պետք է նաև մարդկանց փրկելու ցանկություն ունենա և մտահոգվի իր երկրի համար:

Մեջբերումներ 引例.

Մեծագույն բժշկողները բուժում են երկրի հիվանդությունները, ոչ այնքան մեծ բժիշկները բուժում են միայն մարդկանց հիվանդությունները: Սա բժիշկների մշտական պատասխանատվությունն է (Պետությունների կառավարման դիսկուրսները):

*Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Հին ժամանակներում պրակտիկ բժիշկներից ամենահմուտները բուժում էին երկրի հիվանդությունները, պակաս հմուտները բուժում էին մարդկանց, իսկ ամենաքիչ հմուտ բժիշկները բուժում էին հիվանդությունները (Սուն Միմիաու. *Հիմնական բանաձևեր արտակարգ իրավիճակների համար*):

### **Նետաձգության ծեսեր**

#### **շեյ 射礼**

Նետաձգության ծեսերը հին չինական էթիկայի կարևոր տարր էին: Նետաձգությունն այն վեց հիմնական հմտություններից էր, որին պետք է տիրապետեին Հին Չինաստանի բոլոր գիտնականները: Տանտիրոջ և նրա հյուրերի համար նետաձգության ծեսերը ներառում էին նետահարելու երեք շրջափուլ: Ըստ մասնակիցների կարգավիճակի և առիթի՝ գոյություն ուներ մրցույթի երեք տեսակ՝ մեծ մրցույթ (դաշե), որն անցկացնում էին թագավորն ու դքսերը, որպեսզի ընտրեին նրանց, ովքեր կարող են մասնակցել զոհաբերության արարողություններին; տեղական մրցույթներ (սիանշե), որոնք անցկացվում էին տեղական կառավարիչների հրավիրած գիտնականների միջև և պետական դպրոցների ճամբարներում, և խնջույքային մրցույթներ (յանշե), որոնք կազմակերպում էին թագավորը կամ դքսերը, երբ ցանկանում էին զվարճացնել իրենց պաշտոնյաներին: Նետահարության այսպիսի մրցույթների ժամանակ նետաձիգները պետք է ոչ միայն ջանք ու եռանդ չխնայեին թիրախին խփելու համար, այլև պահպանեին ճիշտ կեցվածք ու վերաբերմունք: Եթե չի հաջողվում խփել թիրախին, նետաձիգը պետք է ստածի, թե արդյո՞ք ճիշտ դիրք է ընդունել: Այս պահանջներն ու ձախողման պատճառները միայն քո մեջ փնտրելու սկզբունքը համապատասխանում է բարոյական զարգացման պահանջներին: Հետևաբար, բացի նետահարման հմտությունների մրցույթից նետաձգությունը կարևոր էր

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

բարոյականության խթանման ու բարոյական դաստիարակության մեջ:

Մեջբերումներ 引例.

Առաքինի մարդը նման է աղեղնավորի: Նա ուղղվում է, ապա կրակում: Եթե վրիպի, չի նախանձի նրան, ով իրեն կհաղթի: Նա ուղղակի ուսումնասիրում է իրեն, որպեսզի հասկանա, թե ինչու չհաղթեց (Մենցիուս):

Նետաձիգը առաջ և հետ քայլելիս և պտտվելիս պետք է շարժվի պատշաճ ձևով: Նա պետք է կենտրոնանա, ուղիղ պահի մարմինը, անշարժ ու հմտորեն պահի նետն ու աղեղը: Միայն այդ դեպքում կարող է սկսել նետահարել: Այս շարժման միջոցով մարդը կարող է իմանալ իր բարոյական կերպարի մասին (Շեսերի գիրքը):

### **Սովորեցնել օրինակով**

#### **չենձիսս 身教**

Սա նշանակում է սովորեցնել ոչ թե խոսքով բացատրելով, այլ սեփական արարքներով: Ի սկզբանե այն վերաբերում էր կառավարչին, որը պիտի ոչ միայն հրամաններ տա ու կարգադրի մարդկանց, թե ինչ անել, այլ օրինակ ծառայի իր ենթակաների համար սեփական գործողություններով՝ որպես առաքինության տիպար, և դրանով իրագործի նպատակներ, որոնք բարենպաստ են հասարակության համար: Սա ինչ-որ ընդհանրություն ունի «մարդու կառավարում» սկզբունքի հետ: Ավելի ուշ այն վերաձվեց կրթական սկզբունքի. ուսուցիչները պետք է իրենց ուսանողներին սովորեցնեն ոչ միայն բառերով, այլև սեփական իրական վարքագծով, օրինակ ծառայեն ուսանողներին գիտության ոլորտում և առաքինության մեջ, ուղղորդեն նրանց ու իրագործեն

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

կրթության նպատակը: Չինաստանում հայտնի ասացվածքներ կան, ինչպիսիք են՝ «օրինակ ծառայիր» և «օրինակելի ուսուցիչ եղիր ուրիշների համար» արտահայտությունները:

Մեջբերումներ 引例.

Կոնֆուցիոսն ասաց. «Եթե կառավարիչն իրավացի է, նա կարող է իր ցանկությունները կատարել տալ առանց հրամանի. եթե իրավացի չէ, մարդիկ չեն լսի նրան, նույնիսկ եթե նա շարունակ հրամաններ տա (Անալեկտներ):

Օրինակ ծառայել. սա մարդկանց լուսավորելու և լավ սոցիալական բարքեր ձևավորելու միակ ճանապարհն է (Լյու Կուն. *Ողբ և հառաչանք*):

Խոսքով սովորեցնելն այնքան լավ չէ, որքան օրինակով սովորեցնելը (*Մին դինասարիայի պատմությունը*):

**Ձգույշ և շրջահայաց եղիր ինչպես վերջում, այնպես էլ սկզբում. շրջահայաց եղիր նաև ամբողջ ընթացքում  
շենջուն-բուշի 慎终如始**

Պետք է զգույշ լինել ինչպես սկզբում, այնպես էլ ընթացքում ու մինչև վերջ: Հաջողությունը կամ ձախողումը վճռում են բազմաթիվ գործոններ: Ընդհանուր առմամբ, զգուշությունն ու հաստատակամությունն անկասկած բերում են հաղթանակի, իսկ անփութությունն ու թափթփվածությունը հանգեցնում են ձախողման: Նախաձեռնության հաջող ավարտին մոտենալիս մարդիկ որպես կանոն կորցնում են ոգևորությունը, և վերջին բույեին ամեն ինչ կարող է կործանվել: Հետևաբար, մենք պետք է շրջահայաց լինենք: Այս գաղափարը խոր արմատներ ունի լրջության հետ: Լրջությունը ենթադրում է մեծ զգուշությամբ վերաբերվել երևույթներին:

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Մեջբերումներ 引例.

Որոշ մարդիկ անհաջողություն են կրում, երբ այնքան մոտ են հաջողությանը: Եվ այսպես, երբ հասնում ենք ավարտին, պետք է նույնքան զգույշ լինենք, որքան սկզբում, և սա կերաշխավորի հաջողությունը (Լաոցզի):

Պետք է զգույշ լինել սեփական առաքելությունը նախաձեռնելիս և ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել դրա իրագործման վրա. այս վերաբերմունքը պետք է պահպանել ամբողջ ընթացքում՝ սկզբից մինչև վերջ: Սա հաջողության հասնելու ճշմարիտ ճանապարհն է: Եթե լինեք լուրջ ու զգույշ, կհասնեք հաջողության: Եթե լինեք անփույթ ու թափփված, անհաջողություն կկրեք (Մունցզի):

### **Չկա ուրախ կամ տխուր երաժշտություն շենուայե 声无哀乐**

Երաժշտությունը չի կարող ուրախ կամ տխուր լինել. այն կարող է միայն հարմարվել զգացմունքներին կամ ներշնչել դրանք: Գաղափարն առաջին անգամ բարձրացրել է Չի Քանը (223-262 կամ 224-263) Երեք թագավորությունների ժամանակաշրջանից: Չին համարում էր, որ երաժշտությունը պետք է առանձնանա զգացմունքներից և ձգտումներից: Չզգացմունքն ու ձգտումը, ինչպես նա էր ասում, վերահսկվում են հոգու կողմից և դրսևորվում են բազմաթիվ երաժշտական ձևերի մեջ: Չզգացմունքները կամ ձգտումները, որոնք արտահայտում է երաժիշտը, տարբերվում են նրանցից, որոնք արթնանում են լսողի սրտում: Երաժշտության և երկրի կառավարման կապն այն է, որ կառավարիչները պետք է նախ ավելին իմանան հասարակ մարդկանց ապրուստի միջոցների և ձգտումների մասին, և ապա համապատասխանաբար բարոյապես ուղղորդեն նրանց: Երաժիշտները կարող

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

են ճշմարտությունները, առողջ ձգտումներն ու ազնիվ գաղափարները վերածել ներդաշնակ ու գեղեցիկ երաժշտության՝ այն կապելով որոշ ներիմաստների հետ, որոնք լայն տարածում ունեն հանդիսատեսի շրջանում: Արդյունքում երաժշտությունը դրական ազդեցություն կթողնի հանրային կարծիքի վրա, կբարելավի հասարակական սովորույթները և հետագա գործընթացում կամրապնդի այն պատգամը, որը դրված է երաժշտության հիմքում: Ուրախ և տխուր երաժշտությունը միմյանցից չտարբերելու այս տեսությունը հետագա սերունդների գրաքննադատներին ստիպում է ուսումնասիրել այնպիսի գործոնների համադրությունը, ինչպիսիք են պատմական փոփոխությունները, սոցիալական ավանդույթները, հեղինակների ներքին աշխարհը և հանդիսատեսի կողմից հոգեբանական ընկալումը, արվեստի ու գրականության էությունն ու գործառույթներն ավելի ռացիոնալ ձևով հասկանալը:

**Մեջբերումներ 引例.**

Երաժշտությունը պետք է գնահատել ըստ նրա, թե այն հաճելի՞ է հնչում, թե՛ ոչ: Դա որևէ կապ չունի մարդկանց ուրախության կամ տխրության հետ: Մարդկանց ուրախությունը կամ տխրությունն առաջանում է իրական իրադարձություններից. կարիք չկա այն ուղղակիորեն կապել հնչյունների հետ (Չի Քան. *Ուրախ և տխուր երաժշտությունը չտարբերակելու մասին*):

Տխուր զգացողությունները, որոնք թաղված են վշտակեզ սրտում, դուրս կբխեն երաժշտական մեղեդիների միջոցով: Երաժշտական մեղեդիներն ունեն ֆիքսված ձև, իսկ տխուր զգացողությունները վերահսկվում են սրտից (Չի Քան. *Ուրախ և տխուր երաժշտությունը չտարբերակելու մասին*):

**Պոեզիայի քննադատություն / Շիհուա**

**(Պատմել երգով ու խոսքով)**

**շիհուա 诗话**

Այս եզրույթն ունի երկու իմաստ: Առաջինը վերաբերում է ցանկացած աշխատության, որը քննադատություն կամ մեկնաբանություններ է պարունակում բանաստեղծների, բանաստեղծությունների, պոեզիայի դպրոցների, բանաստեղծների մասին զվարճալի պատմությունների և տեքստային հետազոտությունների վերաբերյալ: Ստեղծագործության այս տեսակը դասական շինական պոեզիայի գիտական ուսումնասիրության բաղադրիչ մասն է: Պոեզիայի վերաբերյալ մեկնաբանություններ անելու ավանդույթը սկզբնավորել է Հարավային դինաստիաների Լիան ժամանակաշրջանից Ջուն Ռունը (?-518?) իր «Պոեզիայի քննադատություն» աշխատության մեջ: Պոեզիայի և բանաստեղծների մասին առաջին բավական լիարժեք մեկնաբանությունները ներկայացրել է Հյուսիսային Սուն դինաստիայից Օույան Սիուն(1007-1072) «Պոեզիայի քննադատություն» աշխատության մեջ: Սուն դինաստիայի ամենահայտնի աշխատությունը, որը նվիրված է պոեզիայի մեկնաբանություններին և նաև մեծագույն ազդեցություն է ունեցել հետագա սերունդների գիտնականների վրա, Հարավային Սուն դինաստիայից Յան Յուի (?-1264) «Յանլանի պոեզիայի քննադատություն» է: Այս աշխատությունից հետո այսպիսի նոթերը դարձան հիմնական միջոց, որի օգնությամբ մեկնաբանություններ և տեսություններ էին առաջարկում պոեզիայի մասին և պոեզիա գրելու վերաբերյալ: Մին և Յին դինաստիաներն աչքի էին ընկնում պոեզիայի մեկնաբանություններին նվիրված ամենամեծ քանակով ստեղծագործություններով: Այսպիսի երկերից լավագույնը Ուան Ֆուչիի (1619-1692) «Անկանոն դիտարկումներ պոեզիայի մասին Ջինգեր ստուդիայից» և Յուան Սեյի (1716-1798) «Սույյուանի պոեզիայի մեկնաբանություններն» էին. երկուսն էլ Յին դինաստիայից էին: Մին և Յին ժամանակաշրջաններում

հրատարակվեցին նաև Նախորդ դինաստիաների պոեզիայի մեկնաբանությունները, Նախորդ դինաստիաների պոեզիայի մեկնաբանությունների երկրորդ մասը, Յին դինաստիայի պոեզիայի մեկնաբանությունները. բոլոր գրքերն էլ դինաստիաների պոեզիայի քննադատության կարևոր աշխատություններ էին: Պոեզիայի մեկնաբանությունները կամ քննադատությունն ըստ էության խուսափում է բազմակողմանի և բարդ տեսական համակարգից և փոխարենը՝ կենտրոնանում քննադատի կողմից անձնական, նուրբ գնահատականի և պոեզիայի գնահատման ու արտաբերման վրա: Նրանցից յուրաքանչյուրը պարունակում է ընդամենը մի քանի հակիրճ դիտողություն, որոնք կենտրոնանում են բանաստեղծական կոմպոզիցիայի նրբությունների վրա և բացահայտում անձնական զգացմունքներն ու մտքերը գեղարվեստական ստեղծագործությունները կառավարող օրենքների մասին: Պոեզիայի մասին մեկնաբանություններն ինքնին բարձր գրական արարումներ են և արժանի են գնահատվելու այդ տեսանկյունից: Հստակ չինական մշակութային առանձնահատկություններով օժտված պոեզիայի մասին այսպիսի մեկնաբանությունները տարբերվում են արևմտյան գիտնականների՝ գրական տեսությունների համակարգային կառուցվածքի և արտահայտության խիստ գիտական ձևերից:

Երկրորդ, շիհուա եզրույթը կարող է վերաբերվել նաև քատերական ներկայացման մեկդարյա պատմություն ունեցող արվեստին, որտեղ երգեցողությունն ու պատումը, չափածոն ու արձակը հաջորդում են իրար: Հանգավորված չափածոն, որը սովորաբար մեկ տողում բաղկացած է յոթ տառանշանից, օգտագործվում է երգեցողության համար: Արձակը, մյուս կողմից, կիրառվում է խոսակցական լեզվում: Այս տեսակի հնագույն պահպանված ստեղծագործությունը «Սյուանցանի ուղևորությունը դեպի արևմուտք» հեքիաթներն են, որոնք կազմվել ու հրատարակվել են Մուն և Յուան ժամանակաշրջաններում:



*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Մեջբերումներ 引例.

Պոեզիայի մեկնաբանությունները նպատակ ունեն պարզաբանել պոեզիայի կոմպոզիցիան ղեկավարող կանոնները, մանրամասնել պոեզիայի էվոլյուցիան անցյալից մինչև ներկա, արձանագրել կայսերական արքունիքի արժանավոր գործերը, գրանցել զվարճալի պատմություններն ու ասեկոսները, ինչպես նաև շտկել բանաստեղծական ստեղծագործության հակաօրինական գործողությունները (Մու Յի. *Յանչուի մեկնաբանությունները պոեզիայի մասին*):

Պոեզիայի մասին մեկնաբանություններ անելու ավանդույթը սկսվել է դեռևս Ջուն Ռունի «Պոեզիայի քննադատություն» աշխատությունից (Ջան Սյունչեն. *Պայրմության ընդհանուր սկզբունքներ*):

### **Բանաստեղծական արվեստի բանալի շիճիա սանմեյ 诗家三昧**

Սանմեյն (三昧) առաջացել է սանսկրիտի սամադիի բառից, որը նշանակում է «մեկ առարկայից ամուր կառչած լինելու մտավոր վիճակ» կամ «մեղիտատիվ խորասուզում»։ Նախկինում սամադիին բուդդիզմում ինքնազարգացման կարևոր միջոց էր։ Ավելի ուշ այն ձեռք բերեց «իրերի էություն կամ ճշմարիտ էություն» իմաստը։ Այսպիսով, չինարեն դարձած այս արտահայտությունն իր ճանապարհը հարթեց դեպի պոեզիայի, գեղանկարչության ու վայելչագրության ոլորտ և սկսեց կիրառվել այլ իմաստով՝ ճարպկություն, հնարք կամ գաղտնիք։ Ամբողջական եզրույթը՝ «բանաստեղծական արվեստի բանալի», առաջին անգամ կիրառել է Հարավային Մուն դինաստիայի բանաստեղծ Լու Յոուն (1125-1210) իր «Բանաստեղծական տողեր՝ գրված Իննեքուսու լուսնային ամսվա առաջին օրվա գիշերը» բանաստեղ-

ծուրքան մեջ: Ժամանակի ընթացքում այն ձեռք բերեց այլ նշանակություն՝ ներշնչանքի բռնկում, երբ բանաստեղծական արվեստում խոսքերը բխում են աղբյուրից հորդող ջրի նման: Այդ բանաստեղծության մեջ Լու Յոուն նկարագրում է, թե ինչպես պոեզիա գրելու իր առաջին ջանքն անհաջողությամբ պսակվեց երիտասարդ տարիներին, և թե ինչպես կյանքը Նանցենի բանակում՝ տենդագին, եռուն ու հուզիչ, լիովին փոխեց իր բանաստեղծական ոճն ու առաջ բերեց մեծ գաղափարներ: Պոեզիա գրելու Լու Յոուի ոճը ցույց է տալիս, որ պոեզիան սկիզբ է առնում կյանքից: Բանաստեղծական արվեստի ոգեշնչումը կարելի է ստանալ միայն պոեզիայի միջոցով կյանքն արտացոլելու ու պատկերելու ստեղծագործական գործունեության միջոցով:

Մեջբերումներ 引例.

Հուայուն՝ Չանգայի բուդդիստական վանականը, սիրում էր վայելչագրության ոճը: Նա ասում էր, որ բարեբախտաբար որսացել է այդ ոճի վարպետ Չան Սուի վայելչագրական արվեստի բանալին (Լի Չաո. *Լիու Սյուի դիմաստիսի պատմության լրացում*):

Ես անսպասելիորեն գտա պոեզիա գրելու բանալին: Յու Յուանի և Չիա Յիի բանաստեղծությունների հաջողության գաղտնիքը հստակ պատկերվեց աչքերիս առաջ: Արագ ներշնչանքը, որ պարզևում է երկինքը, և իսկապես գեղեցիկ գրավոր ստեղծագործությունը, կախված են գրողի հմտությունից ու ճկունությունից: Նյութի ընտրությունն ու առարկայի կառուցվածքը չպետք է կախված լինի քանոնով կամայական չափումներից կամ մկրատով կտրելուց (Լու Յոու. *Բանաստեղծական փողեր՝ գրված Իններորդ լուսնային ամսվա առաջին օրվա գիշերը*):

Ես եկա, որ տեսնեմ բանաստեղծական արվեստի բանալին Չին Հաոյի բնանկարչության մասին մեկնաբանություն-

ներում: Նա ասում էր՝ նա, ով հեռվում մարդու ուրվագիծ է պատկերում, չպետք է նկարի աչքերը, նա, ով հեռվում գետ է պատկերում, չպետք է նկարի կարկաչունը, նա, ով հեռվում բլուրներ է պատկերում, չպետք է նկարի ծալքերը (Ուան Շիջեն. *Դիպարկումներ՝ գրված խղորջի այգում*):

## **Վիժնանա / Գիտակցություն**

### **շի 识**

Վիժնանան, որը բառացի նշանակում է ընկալում, ճանաչում կամ գիտելիք, բուդդիզմում վերաբերում է գիտակցության գործառույթին: Այն աղավաղում է մարդու կողմից աշխարհի ընկալումը և մտավոր ցավ պատճառում նրան: Յավը մեղմացնելու և ճիշտ տեսքը վերականգնելու համար մարդը պետք է ուժգնացնի իր գիտակցությունը: Յոգակարան, որը բառացի նշանակում է միայն միտք և ընդհանուր առմամբ համարվում է իդեալիզմի դպրոց, պնդում է, որ բոլոր աշխարհիկ երևույթներն իրականում ձևավորվում են գիտակցությամբ, որը կարելի է բաժանել առնվազն երկու մասի՝ տեսնող և տեսած: Այսպիսի գիտակցությունն ի գործ է ճանաչման համար հող նախապատրաստել նույնիսկ արտաքին աշխարհի գոյությունից առաջ: Ըստ Յոգակարայի՝ գոյություն ունի գիտակցության ութ տեսակ, որոնք հիմնված են ճանաչման օբյեկտների վրա: Չգայական գիտակցության վեց հիմնարար տեսակները՝ աչքեր, քիթ, լեզու, մարմին և միտք, համապատասխանաբար վերածվում են ձևի, հնչյունի, հոտի, համի, ձևի ու դիարմայի: Գիտակցության յոթերորդ տեսակը կլիստամանովիժնանան է (մոլորված գիտակցություն), իսկ ութերորդը՝ ալայավիժնանան (պահեստային գիտակցություն): Կլիստամանովիժնանան կատարում է մշտական արտացոլման գործառույթ, որի վրա հիմնվում է մտքի գիտակցությունը: Այն նաև համառորեն ծնում է ալայավիժնանա՝ որպես ֆիզիկական էություն: Ալայավիժնանան՝ կարմայի սերմերի պահեստատունը,

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

պահպանում է գիտակցության բոլոր տեսակների մաքրությունն ու թույլ չի տալիս, որ դրանք աղտոտվեն, նույնիսկ եթե արդեն իսկ աղտոտված են: Աղտոտման ու մաքրության թնջուկը բացելու համար Մահայանասամգրահայի դպրոցն առաջարկում է մեկ այլ գիտակցություն՝ ամալավիժնանան՝ անբասիր գիտակցությունը, որը ճշմարտությունը տարբերում է ստից:

Մեջբերում 引例.

Չնայած գիտակցությունը դրսևորվում է բազմաթիվ ձևերով, ըստ գործառույթի դրանք բաժանվում են միայն երեք կատեգորիայի՝ 1. կարմայի իրագործման գիտակցություն, որը կազմում է գիտակցության ութերորդ տեսակի էությունը, 2. մշտական արտացոլման գիտակցություն, որը վերաբերում է գիտակցության յոթերորդ տեսակին և 3. առարկայի ճանաչման և տարբերակման գիտակցություն, որը ներառում է գիտակցության առաջին վեց տեսակները՝ շնորհիվ նրանց զգայական ընկալման: Չնայած գիտակցության վերջին վեց դասակարգման մեջ տեղ է գտել վեց տեսակ, իրականում դրանք կատարում են նույն գործառույթը (Գիտակցության կատարելագործման մեկնաբանությունների ժողովածու):

**Բիուտաթատա / Ճշմարիտ այդպիսություն  
շիսիան 真相**

Բիուտաթատան վերաբերում է գոյություն ունեցող ամեն ինչի այսպիսությանը: Բուդդիզմը մերժում է օնթոլոգիական պնդումները, բայց ստիպված է հաշվի նստել իրականության հետ: Հետևաբար, բուդդիստական իրականությունը կարելի է մոտավորապես նկարագրել՝ որպես այսպիսության վիճակ, քան իրականություն: Բուտաթատան ընկած է Մա-

հայանա բուդդիզմի հիմքում, որտեղ այն սահմանվում է՝ որպես բոլոր էակների դատարկություն: Քանի որ երբեք հնարավոր չէ հասկանալ էությունների բնույթը, «այսպիսություն» գաղափարի հետևում ոչինչ չկա: Այսպիսով, բուտատաքատան վերաբերում է իրականությանը, որը կարող են նկատել միայն ուսյալ մարդիկ:

Մեջբերում 引例.

Վերցնենք, օրինակ, իսկական բյուրեղապակու մի կտոր: Եթե ներսում դեղին առարկա կա, այն դեղին կերևա: Եթե այն փոխարինենք երկնագույն, կարմիր կամ սպիտակ առարկայով, բյուրեղապակու գույնը համապատասխանաբար կփոխվի: Նույն կերպ նաև, սովորական մարդու միտքը սահմանափակվում է նրա սեփական երևակայությամբ ու ինտելեկտով, ուստի նա տեսնում է իրերը տարբեր արտաքինով: Ինչևէ, իրերը գոյություն ունեն այդպիսության վիճակում, ինչը նշանակում է, որ ոչ ամբողջությամբ դատարկ են, ոչ լիքը, ոչ գոյություն ունեն և ոչ էլ անգո են: Եթե մարդը խորությամբ սովորում է ուսմունքն ու ոչ նահանջում, ոչ էլ հարում ինչ-որ բանի, լիարժեք ընկալում է խորագույն պատգամը, որը հանգեցնում է ազատության (Քննախոսություն իմաստության մեծ կատարելության մասին):

### **Նիհար և ուժեղ**

#### **չույին 瘦硬**

Ավանդական չինական արվեստում և գրականության մեջ նիհար նշանակում է ոսկրոտ ու ոչ թմբիկ. բառն օգտագործվում է ուժեղ բառի հետ նույն բառակապակցության մեջ՝ ընդգծելով ստեղծագործության կառուցվածքային ուժը: Բանաստեղծական կոմպոզիցիայում եզրույթը նշանակում է, որ բանաստեղծությունը ոճով պարզ է, գուրկ զարդարուն

*Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

ձևակերպումներից կամ չափից շատ նուրբ նկարագրությունից: Փոխարենը «նիհար և ուժեղ» ոճի դեպքում նախապատվություն է տրվում զարմանալիորեն նոր տաղաչափական կաղապարներին և համարձակ, հակիրճ արտահայտություններին ու նախադասություններին: Գեղանկարչության և վայելչագրության մեջ այն վերաբերում է բարակ, բայց եռանդուն վրձնահարվածների, որոնք արվում են՝ ընդգծելով ամուր և անսասան ոճը:

Մեջբերումներ 引例.

Վայելչագրությունը՝ բարակ ու ուժեղ վրձնահարվածներով, իսկապես աչքի կընկնի (Գու Ֆու. *Ներքող Լի Չաոյի գրիկ*):

Սուն Յիի ցի պոեզիան արտացոլում է Սուն դինաստիայի վաղ տարիների ոճը, իսկ Ջան Սիանն առաջինն էր, որ ստեղծեց «բարակ և ուժեղ» ցի ոճը: Չնայած երկու բանաստեղծները գովերգում էին իրար, նրանք տարբերվում էին գեղարվեստական ճաշակով և ձգտումներով (Լիու Սիցայ. *Գրական փեսությունների ընդհանուր սկնարկ*):

### **Նոսրություն և խտություն ումի 疏密**

Այս գաղափարը բաղկացած է հակադիր գաղափարների մի քանի զույգից՝ նոսրություն և խտություն, հակիրճություն և հիմնավորվածություն, կոպտություն և ճշգրտություն, ճկունություն և խստություն, օտարացում և մտերմություն: Գեղանկարչության և վայելչագրության գեղարվեստական քննադատության մեջ եզրույթն օգտագործվում է հիմնականում կառուցվածքի, ընդհանուր սխեմայի նկարագրության, ինչպես նաև արվեստի այս երկու ձևերում մուգ կամ բաց,

հաստ կամ բարակ վրձնահարվածների համար: Գրաքննադատության ոլորտում նոսրությունն ու խտությունը հաճախ միասին են կիրառվում: Նոսր նշանակում է անհոգ, կոպիտ կամ մակերեսային: Այն վերաբերում է հատկապես չնտածված, անհոգ կամ սանձարձակ մոտեցմանը արձակի և պոեզիայի ստեղծման մեջ: Խիտ նշանակում է բծախնդիր և սեղմ: Այն հաճախ նշանակում է խիստ ու մանրակրկիտ մոտեցում արձակի ու պոեզիայի զարգացման, թեմաների մշակման, տրամաբանության և ձևակերպումների հարցում, իսկ երբեմն էլ՝ բառերի չհիմնավորված մեծ կուտակում: Հին չինացիները հավատացած էին, որ նոսրությունն ու խտությունը հակադրությունների միասնությունն են: Արվեստի լավ գործը պետք է հավասարակշռի խտությունն ու նոսրությունը թե՛ կառուցվածքի, թե՛ մտահղացման մեջ:

Մեջբերումներ 引例.

Ուան Սիջին գրում էր արագ ու հմտորեն՝ ժամանակ առ ժամանակ վրձինը թաթախելով գոգավոր թանաքամանի մեջ: Նրա վայելչագրական ստեղծագործությունները՝ նոսր թե խիտ, իսկապես գեղեցիկ էին: Թե՛ կանոնավոր գիրը, թե՛ շեղագիրը գրում էր խիստ մանրակրկիտ ձևով: Հանգիստ վիճակում բառերի հոսքը կարելի էր նմանեցնել ցանկապատի հակառակ կողմից քաղաքին նայելուն: Շարժման մեջ այն կարելի էր նմանեցնել երկնքում երկնաքարին հետևելուն (Սիաո Գան. *Ի պատրաստիս Սյանդուն արքայազնին, որը բարյացակամորեն տրամադրեց ինչ* (Ուան Սիջիի վայելչագրական ստեղծագործությունը):

Հին ժամանակներում իրական կանոնավոր գիր չկար: Եվ միայն Սին դինաստիայում էր, որ Ուեն Ջենմինը սկսեց ուսումնասիրել վայելչագրության մեջ կիրառվող տառանշանների կառուցվածքը կառավարող օրենքները: Նրա ստեղծագործություններն աչքի են ընկնում նոսրության ու խտության կատարյալ ներդաշնակությամբ: Յուրաքանչյուր

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

վրձնահարված իր պատշաճ տեղում է (Սիե Ջաոչե. *Հինգ քարքեր նվիրաբերությունների կանոնավոր պատմություն*):

Յի պոեզիայի կոմպոզիցիայի արժանիքը նոսրության ու խտության հավասարակշռությունն է (Չեն Թինչոու. *Պատահական դիտարկումներ Յի պոեզիայի արեղծման մասին*):

### **Չուսպ եղիր**

**թառգուան-յանգույ 韬光养晦**

Եզրույթը նշանակում է՝ չհանրայնացնել սեփական առավելությունները, բայց մինչույն ժամանակ լրացնել թույլ կողմերը: Թաո (韬) նշանակում է թրի պատյան կամ նետատուփ: Գուան (光) նշանակում է լույս, նաև նշանակում է ունակություններ ու տաղանդ: Թաոգուան (韬光) նշանակում է չգովազդել սեփական ուժեղ կողմերը և երբեք չպարծենալ ու չցուցադրել տաղանդը կամ հմտությունները: Յան (养) նշանակում է կատարելագործում, իսկ հույ (晦)՝ հիմարություն, նաև՝ թուլություն կամ թերություն: Յանհույ (养晦) նշանակում է կատարելագործվել ու վերացնել թերությունները: Եզրույթը ցույց է տալիս, որ չինացիները կարևորում են համեստությունը, զսպվածությունը, ինքնակատարելագործումն ու զարգացումը:

Մեջբերումներ 引例.

Ազնիվ մարդը համեստ է: Հավասարակշռված ու զուսպ մարդը միշտ համեստ է պահում իրեն ու լավ գիտի իր թերությունները: Մարդը, ով համեստ է, հնարավոր է՝ կարողանա բարձր նպատակների հասնել: Մարդը, ով տեղյակ է իր թերությունների մասին, միգուցե կարողանա բարձր բարոյական որակներ դրսևորել (Ուենցի):



*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Եթե հասկանամ, որ տարիք եմ առնում, բայց աչքի չեմ ընկնում փայլուն տաղանդով և միայն մակերեսային պատկերացում ունեմ որոշ գաղափարների մասին, որոնք շարադրված են «Փոփոխությունների գրքում», կշտապեմ ինքնակատարելագործվել ու զուսպ լինել (Ջեն Գուանյին. *Չգուշացումներ բարգավաճող հասարակության համար*):

**Եղբայրներ և քույրեր՝ նույն ծնողներից. հայրենակիցներ  
թունբաո 同胞**

Ի սկզբանե եզրույթը նշանակում էր նույն ընտանիքի քույրեր և եղբայրներ: Հիմնվելով այն համոզմունքի վրա, որ բոլոր կենդանի արարածները ստեղծված են երկնքի ու երկրի ձեռամբ, Ջան Յայը (1020-1077) Հյուսիսային Մուն դինաստիայից առաջ էր քաշում այն տեսակետը, որ բոլոր մարդիկ քույրեր ու եղբայրներ են, կենդանի արարածները՝ ընկերներ: Այսպիսով, եզրույթը սկզբում ուներ արյունակցական կապերի իմաստ, որը ներառում էր նույն ազգը կամ պետությունը ներկայացնող մարդկանց, հատկապես նրանց, ովքեր ընդհանուր լեզու ու մշակույթ ունեն: Եզրույթը երբեմն անցնում է ազգի սահմաններն ու վերաբերում է ամբողջ մարդկությանը: Արժարժեղով ընդհանուր նախնիների, լեզվի ու մշակույթի թեման՝ այն արթնացնում ու ամրապնդում է ինքնության և սեփական ազգի ու պետության ճանաչողության ժողովրդի զգացողությունը: Այն հավասարությունն ու համընդհանուր սերը, որ այն մարմնավորում է, մարդկության ոգեշնչման աղբյուրն են:

Մեջբերումներ 引例.

Ինչպե՞ս կարող է պատահել, որ արյունակից եղբայրներն ապրելու տեղ չունենան (Դունֆան Շուո. *Պարասխասներ հյուրի հարցերին*):

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Երկինքն իմ հայրն է, երկիրը՝ մայրս: Նույնիսկ ինձ նման փոքրիկ արարածը կարող է տեղ գտնել նրանց կենտրոնում: Հետևաբար, այն, ինչ լցնում է երկինքն ու երկիրը, իմ մարմինն է. այն, ինչ կառավարում է երկինքն ու երկիրը, իմ էությունն է: Բոլոր մարդիկ իմ եղբայրներն ու քույրերն են, բոլոր կենդանի արարածները՝ իմ ընկերները (Ջան Յայ. *Արևմտյան մակագրություն*):

Թեև մարդիկ շատ առումներով տարբերվում են, բոլորն էլ իմ հայրենակիցներն են: Նրանք ինձ հետ ընդհանուր ինքնություն ունեն. ինչպե՞ս կարող եմ չվստահել ու չսիրել նրանց (Յուան Հուան. *Լյաոֆանի Չոբու դասերը կլանի համար*):

**Բարությանը բարությանը պատասխանիր /  
Միրալիրությանը պատասխանիր բարի գործերով  
թուփառ-բառլի 投桃报李**

Թոութաութալի բառացի նշանակում է՝ երբ դու ինձ դեղձ ես տալիս, ես էլ ի նշան շնորհակալության քեզ դեղձ կտամ: Եզրույթն ի սկզբանե նշանակում է պատասխան նվեր տալ՝ ի նշան փոխադարձ երախտագիտության: Կարևորը նվերը չէ, այլ բարի կամքը, որը նա փոխանցում է նվերի միջոցով, ինչպես նաև մյուս կողմի հետ հարատև ընկերություն պահպանելու ցանկությունը: Արտահայտությունը ենթադրում է հավասարության և փոխշահավետության սկզբունք: Այն «բարիքին պատասխանիր բարիքով» սկզբունքի փոխաբերական արտահայտությունն է, որը փոխադարձության գաղափարի դրական կողմերից է: Այս սկզբունքը կիրառելի է թե՛ մեծ, թե՛ փոքր հարաբերություններում՝ սկսած անհատներից մինչև միջպետական հարաբերություններ:

Մեջբերումներ 引例.

Դու ինձ մի դեղձ տվեցիր, իսկ ես քեզ դրա դիմաց գեղեցիկ նեֆրիտ հանձնեցի: Ես չվճարեցի քո նվերի դիմաց, այլ պատասխան նվեր տվեցի՝ ի նշան մեր հարատև ընկերության (Երգերի գիրքը):

«Երգերի գրքում» կան հետևյալ տողերը՝ «Բառերն ասվում են, դրանց հետևում են պատասխանները, առաքի-նություններն ի հայտ են գալիս և բարությանը վերադարձ-վում: Ինձ մի դեղձ տուր, ու ես էլ քեզ դեղձ կտամ»: Այս տողերը նշանակում են, որ եթե սիրում ես ուրիշներին, քեզ էլ կսիրեն, բայց եթե ատում ես, քեզ էլ կատեն (Մոուցզի):

**Հասնելով վերջին՝ ամեն ինչ վերադառնում է սկիզբ՝  
հակառակ վիճակի  
ուձի-բիֆան 物极必反**

Հին չինացիները շատ վաղ իմացան, որ որոշակի հանգա-մանքներում իրերի բնությունը կամ վիճակը փոխվում է հակառակ վիճակի: Հյուսիսային Սուն դինաստիայում Շեն Յին մանրամասն (1033-1107) նկարագրել է այս փոփոխու-թյունների օրենքները. նա պնդում էր, որ «երբ հասնում են ծայրահեղ կետի, իրերն անխուսափելիորեն վերադառնում են հակառակ, նախնական վիճակի»: Այս տեսակետի համաձայն՝ իրերը փոխվում են, երբ հասնում են իրենց էության կամ վիճակի ծայրահեղ կետին: Այս պարագայում դրանք անխուսափելիորեն ձևափոխվում են՝ վերադառ-նալով նախնական վիճակի:

Մեջբերում 引例.

Հասնելով վերջին՝ իրերն անխուսափելիորեն վերադառ-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

նում են սկիզբ: Ահա թե ինչ: Եթե կա կյանք, կա և մահ, եթե կա սկիզբ, ուրեմն կա վերջ (Չեն եղբայրների երկերը):

**Հակիրճ ու սեղմ գրիր  
սիլիան 洗炼**

Եզրույթը նշանակում է, որ ձևակերպումը պետք է հղկել, որպեսզի հիմնական ասելիքն ընդգծվի: Հակիրճությունը կոկիկ ու թեմատիկ առումով հստակ գրելաոճի նշան է: Այս գաղափարը սկիզբ է առել մետաղի հանքանյութը մաքրելու ընթացքում, երբ դրանից հեռացնում էին խառնուրդը, կամ մետաղները ձուլելու գործընթացում: Փոխաբերական իմաստով սա ցույց է տալիս այն պահը, երբ հեղինակը ջանք է գործադրում առանցքային ասելիքը որսալու համար՝ կրճատելով ու հեռացնելով կրկնվող ձևակերպումները: Որպես գրելու ոճ՝ այն նշանակում է հղկում ինչպես բովանդակության, այնպես էլ ձևակերպումների տեսանկյունից. այն ավելի հստակ պահանջներ է դնում գրողների առաջ, քան «միաձուլել՝ ավելի հակիրճ տեքստ ստանալու համար» գաղափարը, որն առաջարկել է Լիու Սյեն (465-520) Հարավային դինաստիաներից: Որպես գրական ոճ՝ այն հորդորում է լիարժեք համաձայնություն ձևակերպման, նպատակի ու փիլիսոփայական մտքի, ինչպես նաև հակիրճ ու սեղմ գրելաոճի միջև:

Մեջբերումներ 引例.

Իսկ ավելի լավ չէ՞ր լինի մաքրել մեր հոգիները, կռել բնավորությունը, սնել ձգտումները կամ մանրամասն մտածել ցանկացած հարցի շուրջ Դաոյի դեկավարությամբ: Այդ դեպքում, նույնիսկ եթե կյանքն առաջվա պես ծանր լիներ, մենք բարոյապես ավելի բավարարված կզգայինք: Քանի դեռ առողջ ենք ու ամեն ինչ հասկանում ենք, ուրեմն ամեն

ինչ լավ է, ճիշտ է (Հարավային դինաստիաներից Մունի պատմությունը):

Սա նման է ոսկին հանքանյութից կամ արծաթն արձնի կտորներից անջատելուն: Մենք միշտ հոտ ենք քաշում՝ ձգտելով կատարյալ մաքրության: Այդ մաքրությունը հատուկ է նաև աղբյուրի ջինջ ջրերին, որ վերևից թափվում են դատարկ ավազանի մեջ, կամ հին ու փայլուն հայելու, որը ցույց է տալիս առարկաների հմայքը: Մենք գնահատում ենք ճշմարտությունն իր պարզության մեջ, պահպանում ենք մեր բնական մաքրությունն ու վերադառնում ենք երկնային պալատ լուսնի գեղեցիկ լույսի ներքո: Մենք նայում ենք վեր՝ աստղերով լի երկնքին, երգում ենք՝ հարգանքի տուրք մատուցելով անցյալի ճգնափորներին: Նրանք նույնքան թանկարժեք են, որքան աղբյուրի ջուրը, և նույնքան մաքուր, որքան պայծառ լուսինը (Միկուն Թու. *Պոեզիայի քսանչորսում*):

Ոչինչ մաքուր չի լինի, եթե չմաքրես: Ոչինչ անբասիր չի լինի, եթե չիղկես: Միայն ծեծված արտահայտություններից ազատվելու դեպքում կարող ենք իսկապես օրիգինալ լինել (Մուն Լիանկույ. «*Պոեզիայի քսանչորսումների*» *մեկնաբանություններ*):

**Խնջույք համայնքի ղեկավարների  
և գյուղական ավազանու համար  
սիանյինձիուլի 乡饮酒礼**

Հին Չինաստանում սա կարևոր հասարակական գործառույթ էր: Ըստ իրենց նպատակի՝ այսպիսի խնջույքները կարելի է ընդհանուր առմամբ բաժանել երկու տեսակի՝ առաջինը նպատակ ունեւր գվարճացնել տվյալ տեղանքի առաքինի մարդկանց՝ ի նշան նրանց հանդեպ հարգանքի,

Իսկ մյուսը կազմակերպվում էր տեղի պաշտոնյաների կողմից, տարեցներին զվարճացնելու համար՝ ի նշան նրանց հանդեպ հարգանքի ու հոգատարության: Այսպիսի խնջույքները կարևոր էին գյուղական համայնքներում կարգուկանոնը պահպանելու համար:

Մեջբերում 引例.

Գյուղերի ավագների համար կազմակերպվող խնջույքների ժամանակ վաթսունից անց մասնակիցները նստում էին, իսկ նրանք, ում վաթսունը դեռ չէր բոլորել, ուտքի վրա սպասարկում էին նրանց. սա տարեցների հանդեպ հարգանքի նշան էր: Վաթսունն անց մարդկանց մատուցում էին երեք, յոթանասունն անց մարդկանց՝ չորս, ութսունն անց մարդկանց՝ հինգ, իսկ իննսունն անց մարդկանց՝ վեց ճաշատեսակ՝ այդպիսով ցույց տալով տարեցների հանդեպ իրենց հոգատարությունը (Ճեսերի գիրքը):

**Կանոնների և նորմերի կիրառման սկզբունք  
սիեճուջիդաո 絜矩之道**

Կանոնների և նորմերի կիրառման սկզբունքն առաջին անգամ մեջբերվել է «Ճեսերի գրքի» «Մեծ ուսմունք» բաժնում: Գիրքը պաշտպանում է սիեջուի կիրառումը ղեկավարների կողմից կառավարման ընթացքում, մարդկանց հետ հարաբերվելիս: Սիե (絜) ի սկզբանե նշանակում էր լար, որով չափում էին առարկայի շրջանագիծը, իսկ ջուն(矩) քառակուսի էր, որն օգտագործում էին քառակուսիներ, ուղղանկյուններ կամ ուղիղ անկյուններ նկարելու համար: Երկու խորհրդանիշերի համադրությունը նշանակում է հետևել կանոններին ու նորմերին: Այս դեպքում կանոններն ու նորմերը պահանջում են, որ ղեկավարն իրեն պատկերացնի ուրիշների փոխարեն և նրանց պահանջներն ու

խնդրանքները գնահատի՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, թե ինքն ինչ կցանկանար կամ չէր ցանկանա, ուրիշներին չպարտադրի այն, ինչ ինքը կմերժեր, և սա դարձնի իր կառավարման և աշխատանքի նորմ:

Մեջբերում 引例.

Այն խոսքերն ու արարքները, որ քեզ դուր չեն գալիս վերադասիդ պահվածքի մեջ, մի՛ կիրառիր ենթականերիդ հետ շփումներում: Այն խոսքերն ու արարքները, որ քեզ դուր չեն գալիս ենթականերիդ մեջ, մի՛ կիրառիր վերադասիդ հետ շփումներում: Այն խոսքերն ու արարքները, որ քեզ դուր չեն գալիս մախորդների մեջ, մի՛ կիրառիր հաջորդների հետ շփումներում: Այն խոսքերն ու արարքները, որ քեզ դուր չեն գալիս քեզնից աջ մարդկանց մեջ, մի՛ կիրառիր քեզնից ձախ մարդկանց հետ շփումներում: Այն խոսքերն ու արարքները, որոնք քեզ դուր չեն գալիս քեզնից ձախ մարդկանց մեջ, մի՛ կիրառիր քեզնից աջ մարդկանց հետ շփումներում: Մա հայտնի է որպես կանոնների ու նորմերի կիրառման սկզբունք (Շեսերի գիրքը):

### **Մտքի արվեստը սինշու 心術**

Խոսքը մտքի կամ սրտի աշխատանքի մասին է. եզրույթն առաջին անգամ հայտնվել է Գուանցզիի, Մունցզիի դասական ստեղծագործություններում և «Շեսերի գրքում»: Հին ժամանակներում համոզմունք կար, որ մարդու միտքը կամ սիրտը կատարում են իրենց դերը որոշակի օրենքների համաձայն, որոնք կոչում էին հենց այս եզրույթով: Այնուամենայնիվ, մտքի տարբեր դպրոցներ սեփական տեսակետներն ունեին այս մասին: Եզրույթը մաս կապված է նրա հետ, թե մարդու սիրտն ինչպես է ուղղորդում հինգ զգայական

օրգանների շարժումը, և թե այն ինչպես է հաղորդակցվում, նույնանում արտաքին աշխարհի հետ:

Մեջբերումներ 引例.

«Մտքի կամ սրտի դիրքը մարդու մարմնում նման է պետության մեջ թագավորի դերին, իսկ մարմնի ինը բացվածքները գործում են նույն կերպ, ինչպես պաշտոնյաները՝ արքունիքում»: Ականջներն ու աչքերը տեսնելու և լսելու համար են: Երբ միտքը չի միջամտում, ականջներն ու աչքերը կատարում են իրենց սովորական դերը: Եթե, սակայն, միտքը հափշտակված է ցանկությանը, աչքերը, հնարավոր է, չտեսնեն, թե ինչ կա իրենց առաջ, իսկ ականջները գուցե չլսեն, թե ինչ է կատարվում իրենց շուրջ: Նույն կերպ նաև, «երբ վերադասը գործում է այն սկզբունքների դեմ, որոնցով պետք է առաջնորդվի, ապա ենթակա պաշտոնյաները հազիվ թե պահպանեն դրանք»: Հետևաբար, մարդու ինը բացվածքների գործունեությանը չմիջամտելը կոչվում է մտքի արվեստ, որը բացատրում է, թե ինչու մարդուն կարելի է նմանեցնել թագավորի (Գուանգզի):

Մարդիկ օժտված են ձգտումներով և մտավոր զգոնությամբ, բայց վիշտը, ուրախությունը, երջանկությունն ու զայրույթը չեն դրսևորվում կայուն ձևով, այլ արձագանքում են արտաքին ազդակներին: Այսպես է դրսևորվում ներքին միտքը (Ճեսերի գիրքը):

### **Չև և անուն**

### **սինմին 形名**

Սինը (形) վերաբերում է առարկայի ձևին, իսկ մինը (名)՝ անվանը: Հին չինացիները հավատացած էին, որ առարկաներն ունեն ձև, և որ յուրաքանչյուր ձևավոր առարկա ունի



յուրօրինակ էություն, որով տարբերվում է այլ առարկաներից, մինչդեռ անունը վճռում է առարկայի բնույթը: Անուններից բաղկացած դասավորությունը որոշում է ինչպես առարկաների միջև հարաբերությունները, այնպես էլ շարքում նրանց դիրքը: Մտքի որոշ դպրոցների կարծիքով՝ ձևերն ու անունները, որոնք հատուկ են առարկաներին, արդեն իսկ ներառում են որոշակի ռացիոնալ կարգ, իսկ նրանք, ովքեր կառավարում են, պետք է առաջնորդվեն դրանով ու պահպանեն այս կարգը: Մտքի այլ դպրոցներ հավատացած էին, որ ձևերի և անունների կարգը կարող է ստեղծվել փաստացի, պատիժների (սին) և կրթության միջոցով: Պատիժներ սահմանելիս, երբ պետք էր լինում ընդգծել իրերն ու գործողությունները վերլուծելու և գնահատելու անհրաժեշտությունը, 形名 (ձև և անուն) նաև մեկնաբանվում է որպես 刑名 (պատիժ և անուն):

Մեջբերումներ 引例.

Այսպիսով, կառավարիչը, որը պահպանում է բարոյական սկզբունքները, կկառավարի թագավորությունն առանց համառության, առանց հարգանք պահանջելու, առանց գոռոգության ու կողմնակալության: Այսպիսով, բոլոր հարցերում նա նախ և առաջ կորոշի ձևն ու անունը: Երբ ձևն ու անունը հստակեցվեն, ամեն ինչ կընթանա իր սովորական հունով (Դեդին կայսեր չորս դասական երկերը):

Եթե կառավարիչը ցանկանում է արգելել չար արարքները, նա պետք է որոշի, թե արդյո՞ք իրերի ձևն ու անունը համապատասխանում են իրար, այսինքն՝ արդյո՞ք մարդկանց խոսքերը համապատասխանում են արարքներին (Հանֆեյցի):

**Ծիրանի ծառեր / Պատվարժան բժիշկներ՝  
լավ հմտություններով  
սինլին 杏林**

Այս եզրույթը վերաբերում է պատվարժան բժիշկներին, որոնք ունեն լավ հմտություններ, կիրառվում է չինական բժշկության ոլորտում: Ըստ Գե Հունի (281<sup>o</sup>-341) «Աստվածությունների և անմահների կենսագրությունների»՝ Երեք քազավորությունների շրջանից հայտնի բժիշկ Դուն Ֆենն ապրում էր Լու սարի վրա, որտեղ անվճար բուժում էր հիվանդներին: Նրանց, ովքեր ապաքինվում էին լուրջ հիվանդությունից, խնդրում էր հինգ ծիրանենի տնկել, իսկ նրանց, ովքեր բուժվում էին թեթև հիվանդությունից, խնդրում էր միայն մեկ ծառ տնկել: Մի քանի տարի անց ծիրանենու ճոխ անտառակ հայտնվեց: Նա ծիրանը փոխում էր հացահատկով, որպեսզի օգներ աղքատ ու կարիքավոր մարդկանց: Ավելի ուշ մարդիկ ծիրանենի ասելով նկատի էին ունենում հմուտ և առաքինի բժիշկներին, իսկ արդի ժամանակներում Չինաստանի որոշ բժշկական կազմակերպություններ ու ամսագրեր կոչվեցին «Ծիրանենի»: Այս եզրույթը դարձել է չինական բժշկության հոմանիշ:

Մեջբերում 引例.

Բժիշկ Դուն Ֆենը, որն ապրում էր սարի գագաթին կառուցված տանը, անվճար էր բուժում հիվանդներին: Դրա դիմաց միայն մի բան էր խնդրում իր հիվանդներից՝ ծիրանենիներ տնկել. հինգ ծառ՝ լուրջ հիվանդություն ունեցող հիվանդների համար, մեկ ծառ՝ թեթև հիվանդությամբ տառապողների համար: Տարիներ անց տնկվել էր 100,000 ծիրանենի, որոնցից ճոխ անտառակ էր գոյացել... Մարդիկ գալիս էին՝ ծիրան գնելու, ինքնուրույն էին կշռում, ու ոչ ոք չէր խաբում: Բժիշկ Դունն այդ գումարով հացահատիկ էր գնում ու բաժանում աղքատներին ու զբոսաշրջիկներին (Գե

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Հուն. *Աստվածությունների և անմահների կենսագրություններ*):

**Դդում կախեք (դեղ օգտագործեք)՝  
աշխարհին օգնելու համար  
սյուանհու-ձիշի 悬壶济世**

Այս եզրույթը նշանակում է օգնել մարդկանց բժշկության միջոցով: «Դդում կախելը» խորհրդանշում է պատին դեղամիջոցներով լի դդում կախելու ավանդույթը, որը հատուկ էր դեղերի արտադրությանը ու վաճառքով զբաղվող մարդկանց. ավելի լայն իմաստով այն վերաբերում է բժշկական մասնագիտություն ունեցող մարդկանց: «Օգնել աշխարհին» նշանակում է օգնել ու թեթևացնել այն մարդկանց կյանքը, որոնք ճնշված են: Այս գաղափարը պրակտիկ բժշկության մեջ մեծ նշանակություն ունի և խորհրդանշում է բժշկի մարդասիրությունն ու հոգատարությունը: Այն գովաբանում է այն բժիշկներին, որոնք հոգ են տանում հիվանդ ու մահամերձ մարդկանց մասին, ինչպես նաև բարոյական չափանիշ ու արժեք է, որով կարելի է գնահատել մարդուն:

Մեջբերումներ 引例.

Շուկայում մի ծեր մարդ կար, որ դեղեր էր վաճառում: Շուկայի իր տաղավարում դեղերով լի դդում էր կախում (*Ուշ Հան դինաստիայի պատմությունը*):

Դեղամիջոցներով զբաղվողները չպետք է ուղղակի հույսը դնեն որոշակի հմտությունների վրա և մտածեն միայն փող կամ ապրանքների ձեռք բերելու մասին: Ավելին, պետք է ձգտեն թեթևացնել այլոց տառապանքները... Իմ նպատակն ուրիշներին օգնելն է, և ես հույս ունեմ, որ ուսանողները չեն ծաղրի ինձ՝ մտածելով, որ տարօրինակ մարդ եմ (Մուն

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Սիմիաո. *Հիմնական բանասէներ արտակարգ իրավիճակների համար*):

**Նրանք, որ խոսում են, չպիտի պատժվեն,  
մինչդեռ նրանք, որ լսում են, պետք է զգույշ լինեն  
յանջե-ուցույ, ուենջե-ցուճիե 言者无罪, 闻者足戒**

Անկախ նրանից՝ նրանց կարծիքը ճիշտ է թե ոչ, իրենց տեսակետն արտահայտող մարդիկ չպետք է պատժվեն, և նրանց ասելիքը չպետք է անտեսվի ունկնդիրների կողմից: Եզրույթը ենթադրում է խոսքի ազատություն և քննադատության հանդեպ հանդուրժող վերաբերմունք: Երկրի, կազմակերպության կամ ընկերության պատշաճ կառավարումը և գործունեությունն ապահովելու համար իշխանավորներն ու ղեկավարները պետք է լավ հասկանան իրավիճակը, ինչպես նաև մարդկանց կարիքներն ու ցանկությունները, որպեսզի համախմբեն հասարակության բոլոր սեգմենտները և ստիպեն, որ դրանք կատարեն իրենց համապատասխան գործառույթը: Այսպիսի արդյունքի հասնելու համար պետք է առողջ ու ներդաշնակ հարաբերություններ ստեղծել մարդկանց մեջ ու թույլ տալ, որ նրանք առանց վախի արտահայտեն իրենց կարծիքը, որպեսզի իշխանավորները կարողանան օգտվել զանազան արժեքավոր տեսակետներից: Նույնիսկ երբ հանրության կամ ենթակաների քննադատությունը լիարժեք արդարացված չէ, ղեկավարը պետք է ընդունի զգուշացումը, այլ ոչ թե դատապարտի քննադատությունը:

Մեջբերումներ 引例.

Կառավորիչներն օգտվում են ֆենից (բալլադներ)՝ մարդկանց կատարելագործելու համար, իսկ մարդիկ դրանք օգտագործում են՝ կառավարիչներին ծաղրելու համար: Քանի դեռ քննադատողը միապետին խորհուրդներ է տալիս մեղմ-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

ընեն ու գեղեցիկ պոեզիայի միջոցով, նրան չեն պատժի, իսկ միապետը, որին նա քննադատում է, ավելի ուշադիր կլինի որոշումներ կայացնելիս: Այս բանաստեղծությունները կոչվում են ֆեն (Երգերի գրքի Մաոյի տարբերակի նախաբան):

Նրանք, ովքեր արտահայտում են իրենց մտքերը, չեն պատժվում, իսկ նրանք, ովքեր լսում են, ընդունում են զգուշացումը: Թե՛ խոսողները, թե՛ լսողները միայն ցանկանում են, որ ամեն ինչ արվի հավուր պատշաճի (Բայ Ջույի *Նամակներ Յուան Ջենին*):

**Անհրապույր, անփայլ ձևակերպումները երբեք հեռուն չեն տանում**

**յան ջի ու ուեն, սին էր բու յուան 言之无文，行而不远**

Թույլ ձևակերպումները կամ խոսքը երբեք հեռուն չի գնում: Սա ասելով Կոնֆուցիոսը (մթա. 551-479) նկատի ուներ, որ արտաքին հարաբերություններում դիվանագետը պետք է պերճախոս ու համոզիչ լինի, որպեսզի իրականացնի իր նպատակները: Նույն կերպ նաև, եթե ցանկանում ենք տարածել խոսքը կամ երկար ժամանակ պահել հիշողության մեջ, այն պետք է գրի առնել ըստ գրավոր խոսքի կանոնների և գեղեցիկ ձևակերպումներով: «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը» գրքում Լիու Սյեն (465?-520) Հարավային դինաստիաներից մեջբերել է Կոնֆուցիոսի այս խոսքերը՝ ընդգծելով առգանության ու էսսեի կառուցվածքի ու տեխնիկայի կարևորությունը: Այս եզրույթն ընդգծում է, թե ինչ կարևոր նշանակություն ունի գրավոր ստեղծագործությունը աշխարհին օգտակար լինելու հարցում՝ այդպիսով բարձրացնելով գրական քննադատության կարգավիճակը մտքի ու մշակույթի պատմության մեջ:

Մեջբերումներ 引例.

Կոնֆուցիոսն ասում էր. «Ըստ հնագույն աղբյուրների՝ լեզուն օգտագործվում է ցանկություններ արտահայտելու համար, իսկ պերճախոսությունն ու գրական հմտությունն արտահայտչական գործառույթ են իրականացնում»: Եթե նա չի խոսում, ո՞վ գիտի՝ ի՞նչ կարծիք ունի ամենի մասին: Նույնիսկ եթե խոսի, անփայլ գրավոր կամ բանավոր խոսքը հեռուն չի հասնի (Յուոյի մեկնաբանությունները Գարնան և աշնան տարեգրքերի մասին):

Գեղեցիկ ձևակերպումը միայն օգնում է, որ հրաշալի գաղափարները տարածվեն: Այս պնդման ճշմարտացիությունն ապացուցված է: Երբ մենք գիտենք, թե ինչպես արտահայտել մեր զգացմունքներն ու ձգտումները, ի վիճակի կլինենք նաև հեշտությամբ ցուցադրել մեր գրական տաղանդը (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

**Իչանտիկա  
յիչանթի 一阐提**

Իչանտիկա բառացի նշանակում է մարդ, ով ցանկություն ունի: Խոսքը վերաբերում է մարդուն, որը կարիքի մեջ է, ձգտում է լավ պայմանների, ինչն էլ հանգեցնում է դրական արդյունքի, ինչպիսիք են արթնացումն ու ազատագրումը: Այն նշանակում է նաև արժանիքներից զուրկ մարդ: Այս գաղափարի վերաբերյալ խոշոր քննարկում կա, որը վերաբերում է այն հարցին, թե արդյո՞ք բոլոր կենդանի արարածները, այդ թվում և իչանտիկաները, ի վիճակի են հասնել Բուդդայի վիճակի: Վիժնապտիմատրա դպրոցի (այլ կերպ՝ Միայն մտքի դպրոց) կարծիքով, օրինակ, իչանտիկաները բնության մեջ չունեն համապատասխան պայմաններ,

հետևաբար երբեք չեն հասնի վերջնական նպատակին: Մինչդեռ Տաթագատագարբհայի ու Ավատամասկայի ավանդույթների համաձայն՝ բոլոր կենդանի արարածները ծնվում են Բուդդայի էությանը, որը դրսևորվում է ինչ-որ պահի: Ընդհանուր առմամբ, առաջին կարծիքի համաձայն իշանտիկան ի ծնե է, իսկ երկրորդի համաձայն՝ այն ժամանակավոր կարգավիճակ է:

Մեջբերումներ 引例.

Ես հաճախ հայտարարել եմ, որ Բուդդայի էության ունիվերսալությունը բոլոր կենդանի արարածների, այդ թվում և իշանտիկայի մեջ է (բառացի՝ մեկը, ով մեծ ցանկություն ունի, հետևաբար ըստ որոշ դպրոցների՝ պետք է գուրկ լինի Բուդդայի վիճակի հասնելու բոլոր հնարավորություններից): Իշանտիկաները, թեև չեն կատարել արժանավոր արարքներ, որոնք կարող էին կուտակած լինել իրենց նախորդ կյանքերի ընթացքում, դեռևս օժտված են Բուդդայի էությանը, ուստի և ի վիճակի են ապագայում մասնակցել բոլոր գործողություններին (Մեծ նիրվանայի սուտրա):

Եթե հաշվի առնենք Սուրբ գրքերն ու մեկնաբանությունները, ապա գոյություն ունի իշանտիկաների երեք տեսակ: Առաջինն այն իշանտիկաներն են, որոնք գուրկ են կարեկցանքից և պատրաստ են ազատագրվելու, բայց չեն անում դա, քանի որ երդվել են ազատագրել բոլորին և դրանից հետո միայն հասնել նիրվանայի: Երկրորդ տեսակն այն իշանտիկաներն են, որոնք օժտված են Բուդդայի էությանը, բայց պատշաճ արարքներ չեն գործում Բուդդայի վիճակին հասնելու համար: Նրանք ակնկալում են, որ նույնիսկ բավարար պայմանների բացակայության դեպքում Բուդդայի ուժը կօգնի իրականացնել նպատակը: Երրորդ տեսակը վերաբերում է իշանտիկաներին, որոնք գուրկ են Բուդդայի էությունից, չունեն ոչ պայմաններ, ոչ արդյունք, և նրանց վիճակված է բռնել սրավակայի և պրատյեկաբուդդայի ճանապարհ-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

հը (Շի Կուիջի. «Միայն գիրակցության կարարելություն» երկի մեկնաբանությունների ժողովածու):

**Բժշկի հոգատար սիրտը  
յիջե-րենսին 医者仁心**

Բժիշկը պետք է հոգատար սիրտ ունենա: Այս կարևոր բաղադրիչը գոյություն է ունեցել դեռևս հին ժամանակներից: «Հիմնական բանաձևեր արտակարգ իրավիճակների համար» գրքի «Վարպետ բժշկի հմտությունների և անկեղծության մասին» գլխում Թան դինաստիայի հայտնի բժիշկ Սուն Սիմիաոն (581-682) քննարկում էր, որ բժիշկը պետք է ունենա կարեկից, այսինք՝ հոգատար սիրտ: Ակնկալվում է, որ բժիշկը պետք է լինի սիրող, կարեկցող, ցանկություն ունենա թեթևացնել մարդկանց տառապանքները, անտեսի անձնական հետաքրքրություններն ու ամբողջությամբ կենտրոնանա հիվանդներին բուժելու վրա: Այդպես նա կդառնա «անփոխարինելի բժիշկ բոլոր մարդկանց համար», մեծ բժիշկ, որը հարգանքի է արժանանում բոլոր մարդկանց կողմից: Սա կարելի է համարել չինական բժշկության հումանիստական ոգու դասական արտահայտություն:

Մեջբերումներ 引例.

Երբ վարպետ բժիշկը հիվանդություն է բուժում, նրա հոգին պետք է հանդարտ լինի, ցանկություններից հեռու: Նախ, նա պետք է ունենա կարեկից սիրտ և ամբողջությամբ լծվի մարդկանց տառապանքները թեթևացնելուն (Սուն Սիմիաոն. «Հիմնական բանաձևեր արտակարգ իրավիճակների համար»):

Բժշկական պրակտիկան ենթադրում է հոգատարություն: Հեղինակն այս գիրքը գրել է՝ հուսալով, որ բոլոր բժիշկներն



*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

էլ հոգատար սիրտ ունեն (Ուան Չի. *Մեր ուսուցչի բժշկական մտքի ուսումնասիրության առաջաբան*):

Այսպիսով, եթե բժիշկը ճիշտ մտածելակերպ ունի, նույնիսկ եթե նրա հմտություններն այնքան էլ կատարյալ չեն, չի վնասի իր հիվանդներին (Սու Գաչուն. *Հիվանդությունների ծագումն և զարգացում*):

**Գաղափարները չեն կարող համապատասխանել  
իրական երևույթներին, իսկ բառերը չեն կարող  
արտահայտել լիարժեք գաղափարներ  
յի բու չեն վու, ուեն բու դայ յի 意不称物, 文不逮意**

Սա պատահում է, երբ ներքին միտքը կամ գրավոր տեքստի ընդհանուր գաղափարն ամբողջությամբ չեն արտացոլում իրերի իրական վիճակը, և երբ առողջամտությունը լիարժեք չի արտահայտում միտքը: Սա Արևմտյան Չին դինաստիայից Լու Ջիի (261-303)՝ հոգեբանության նկարագրության ու վերլուծության գաղափարն է, որն արտացոլված է նրա «Գրելու արվեստը» երկում: Մասնավորապես, մտքերը կամ ստեղծագործական գաղափարները, որոնք ծնունդ են առնում արտաքին երևույթներից, կարող են լինել բազմազան, բայց երկիմաստ, և հեղինակն անդրադառնում է դրանցից միայն մի քանիսին: Լեզուն նույնպես դժվարանում է լիարժեք արտահայտել այն ամենը, ինչ պայմանավորված է կամ կապված է արտաքին երևույթների հետ: Առօրյա մարդկային ճանաչողության և պրակտիկայի ոլորտում լեզուն ընդհանուր առմամբ կարող է հստակ արձանագրել սուբյեկտի մտքերն ու արտահայտել նրա ցանկությունները: Բայց գրական արվեստում բառերը հաճախ չեն կարողանում արտահայտել իմաստը: Սրանով է նաև բացատրվում այն, թե գրական մեկնաբանությունն ինչու է ավելի մեծ մասսայականություն վայելում, քան զուտ ակադեմիական մեկնաբանությունը: Լու Չին բացահայտել է գրական արվեստի և

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

ընկալման այս կարևոր հասկացությունը՝ այդպիսով նպաստելով գրականության զարգացմանը՝ ըստ սեփական չափանիշների:

Մեջբերում 引例.

Ներքին միտքը կամ հողվածի ընդհանուր գաղափարը չեն կարող լիարժեք արտացոլել իրերի իրական վիճակը, իսկ առողջանությունը չի կարող լիարժեք արտահայտել ներքին միտքը. սա բարդ իրավիճակ է, որում ես հաճախ եմ հայտնվում: Շատ ավելի հեշտ է նկատել խնդիրը, քան լուծել այն (Լու Չի. *Գրելու արվեստը*):

**Կրթություն՝ ըստ քիրախային խմբի  
ինացության մակարդակի  
յինացայ-չիճիաո 因材施教**

Այս եզրույթը նշանակում է կրթել ու սովորեցնել՝ ըստ մարդկանց արժանիքների և հետաքրքրությունների: Ցայր (材) խորհրդանշում է գործոններ, ինչպիսիք են մարդկանց արժանիքներն ու հետաքրքրությունները, նրանց կրթության մակարդակը: Սա կրթական և մանկավարժական սկզբունք է, որն առաջին անգամ կիրառել է Կոնֆուցիոսը (551-479 մթա.), իսկ հետագայում ուրիշ հեղինակներ ամփոփել ու սահմանել են այն: Կարող ենք ասել, որ այս սկզբունքի առանցքային գաղափարներն են՝ շուայսին (率性- գործել մարդկային էության համաձայն), ինչպես նկարագրված է «Ծեսերի գրքում», և ձինսին (尽性 – լիարժեք օգտագործել մարդու էությունը), ինչպես նկարագրված է «Փոփոխությունների գրքում»: Այն լայն ճանաչում ունի մինչ օրս, և ցույց է տալիս, որ կրթության և մանկավարժության մեջ խնդրո առարկայի ընտրությունը, մեթոդներն ու նպատակները պետք է տարբերվեն՝ կախված քիրախային խմբի անհա-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

տական առանձնահատկություններից, եթե, իհարկե, նպատակ կա ավելի լավ արդյունք գրանցել: Այս սկզբունքը հաստատվել է հոգեբանության և մանկավարժության միջոցով և դարձել է արդի կրթության հիմնարար գաղափար:

Մեջբերումներ 引例.

Կոնֆուցիոսն ասում էր. «Կարող եք լուրջ հիմնախնդիրները քննարկել մեկի հետ, ով միջինից բարձր գիտելիք ունի. չեք կարող լուրջ հիմնախնդիրներ քննարկել մեկի հետ, ով միջինից ցածր գիտելիք ունի» (Անալեկտներ):

Երկինքը ծնունդ տվեց բոլոր կենդանի արարածներին և պետք է նրանց հետ վերաբերվի ըստ նրանց հատկանիշների (Ծեսերի գիրքը):

Քանի որ Ջու Յզունն իր տեսությունը կազմել էր ըստ ուսանողների ակնկալիքների և ունակությունների, գիտնականները, որոնք սովորում էին նրա հետ, հասան փառքի, և այն ժամանակ նրանց անվանում էին «Ջուի աշակերտներ» (Յին դինաստիայի պատմության ծրագիր):

### **Ժառանգություն և նորարարություն յինգե 因革**

Եզրույթն ընդգծում է ժառանգության և նորարարության հարաբերությունը: Յինը (因) նշանակում է ժառանգում կամ որդեգրում, իսկ գե (革)՝ բարեփոխում կամ նորարարություն: Գաղափարը սկիզբ է առել դեռևս Կոնֆուցիոսից (մթա. 551-479): Նրա կարծիքով՝ Սիա, Հան և Ջոու դինաստիաները փոփոխել են էթիկայի կանոնները՝ ըստ պայմանների և նախորդ դարաշրջանում սահմանված օրենքների: «Փոփոխելն» այստեղ ենթադրում է նորարարության գաղափարը,

որը հիմնված է ժառանգման վրա: Յան Սյունը (մթա. 53-մթ. 18) Հան դինաստիայից ավելի համակարգված շարադրեց այս գաղափարը: Հետագայում կոնցեպտն օգտագործեց Լիու Սյեն (465-520) իր գրաքննադատության մեջ՝ սկիզբ դնելով «շարունակականության ու փոփոխության» գաղափարին: Այս բոլոր գաղափարներն արտացոլում են հակադրությունների միասնությունը, ընդգծում պատմության և ավանդույթի մշտական փոփոխությունները, նախապատվություն տալիս նորարարությանը, որը հիմնված է անցյալի փորձառության և ձեռքբերումների վրա, ինչպես նաև խուսափում պայմանականություններին կամ նորարարություններին անվերապահորեն և կուրորեն ձգտելուց: Բացի գրական և գեղարվեստական արվեստից, վերը նշված գաղափարը կիրառելի է նաև ակադեմիական հետազոտությունների և նույնիսկ երկրի կառավարման մեջ:

#### Մեջբերումներ 引例.

Կոնֆուցիոսն ասում էր. «Շան դինաստիան ժառանգեց Միա դինաստիայի էթիկայի օրենքները և մի շարք կրճատումներ ու լրացումներ արեց: Ջոու դինաստիան հետևեց Շանի էթիկետի օրենսգրքին՝ կրճատումներով ու լրացումներով: Հետևաբար, եթե Ջոու դինաստիան ժառանգորդ ունենա սրանից հարյուր սերունդ անց, էթիկայի նրա կանոններն արդեն իսկ նախասահմանված կլինեն» (Անալեկտներ):

Դաոյի գործողությունը ներառում է ժառանգում ու շարունակականություն, նորարարություն և փոփոխություն: Միայն ժառանգման ու շարունակականության միջոցով կարող ենք լիարժեք բացահայտել Դաոյի առեղծվածը: Միայն նորարարության ու փոփոխության միջոցով կարող ենք բավարարել մեր ժամանակների պահանջները: Այսպիսով, ավանդույթը հարգելը և միևնույն ժամանակ նորարարությունների ձգտելն օգնում է մեզ հասկանալ Դաոյի օրենքները, իսկ նորարարության ձգտելն ու միևնույն ժամա-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

նակ ավանդույթը հարգելն օգնում է մեզ կիրառել Դաոյի օրենքները... Հետևաբար, եթե չափից դուրս ընդգծում ենք ավանդույթն ու անտեսում նորարարությունը, մեզ չի հաջողվի լիարժեք հասկանալ ընդհանուր օրենքները. եթե կենտրոնանում ենք նորարարության վրա ավանդույթի հաշվին, չենք կարողանա տիրապետել հավասարակշռության օրենքներին (Յան Սյուն. *Գերագույն առեղծված*):

Դեռևս հին ժամանակներից գրողները սերնդեսերունդ նշանակալի ձեռքբերումներ են ունեցել ժառանգման, փոփոխության ու նորարարության միջոցով՝ ըստ հանգամանքների: Բնապատկերները սահմաններ ունեն, իսկ մարդկային զգացմունքները պահպանվում են շնորհիվ ինտեգրվելու և հարմարվելու մեր ունակության (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

### **Ճգնավոր / Մենակյաց յինչի 隱士**

Հին Չինաստանում այս եզրույթով անվանում էին նրանց, ովքեր ի վիճակի են պաշտոնյա կամ նույնիսկ կառավարիչ լինել, բայց նախընտրել են ապրել մեկուսի կյանքով: Դրա համար տարբեր պատճառներ կային: Պատճառներից մեկն այն էր, որ նրանք հոգնում էին ձևականություններից, բյուրոկրատական քաշքշուկներից, իրենց կյանքը համարում էին կեղծ և փոխարենը ցանկանում էին պարզ ու բնական կենսակերպ: Մյուս պատճառն այն է, որ ոմանք դժգոհ էին այդ օրերի կոռումպացված քաղաքականությունից և չէին ցանկանում միջամտել կամ ուզում էին խուսափել հետապնդումից: Մինչդեռ մյուսները նախընտրում էին ապրել ճգնավորի կյանքով, միայն՝ որովհետև ցանկանում էին իրենց պաշտոնը կամ դիրքը փոխանցել նրանց, ովքեր ավելի ունակ էին ու առաքինի: Այսպիսի մարդիկ սովորաբար առաքինի էին լինում, բայց մեծամասնություն չէին կազմում:

Այնուամենայնիվ, երեսպաշտություն կլիներ ընտրել այս կենսակերպը հենց այնպես, առանց պատճառի, և հնարավոր է, որ դա ընկալվեր որպես սոցիալական պատասխանատվության անտեսում:

Մեջբերումներ 引例.

Ձիլուն իր ուսուցիչ Կոնֆուցիոսի հետ ճանապարհորդության ընթացքում հետ էր ընկել: Երբ հանդիպեց մի ծերունու, որը մոլախտով լի գամբյուղ էր տանում, հարցրեց. «Տեսե՞լ եք ուսուցչիս»: Ծերունին պատասխանեց. «Դու ոչ վերջույթներդ կարող ես ղեկավարել, ոչ էլ հացահատկի տեսակները տարբերել: Ո՞վ է քո ուսուցիչը»: Այսպես ասելով ծերունին մի կողմ դրեց ցուպն ու սկսեց կտրել վայրի խտոր: Ձիլուն ամենայն հարգանքով լցվեց նրա հանդեպ: Հետո ծերունին Ձիլուին խնդրեց մնալ ու գիշերել, հավով ճաշ պատրաստեց ու խնդրեց, որ իր երկու որդիները ողջունեն Ձիլուին: Հաջորդ օրը Ձիլուն հեռացավ ու Կոնֆուցիոսին պատմեց այս հանդիպման մասին: Կոնֆուցիոսն ասաց. «Նա ճգնավոր է»: Ձիլուին կոչ արեց հետ գնալ ու իր հարգանքը հայտնել նրան: Բայց երբ Ձիլուն հասավ, ծերունին արդեն հեռացել էր: Ձիլուն այդ կապակցությամբ ասաց. «Պաշտոնյայի՝ պարտականություններից հրաժարվելը դեմ է բարոյականության ու արդարության կանոններին: Եթե մեծահասակների ու երեխաների միջև էթիկայի կանոնները չեն անտեսվում, ինչպե՞ս կարելի է անտեսել միապետի և դատարանի պաշտոնատար անձանց պարտականությունները: Գիտնականը կատարում է իր պաշտոնեական պարտականությունները՝ պահպանելով բարոյականությունն ու արդարությունը: Սա ակնհայտ է (Անալեկտներ):

Ինչ վերաբերում է հին ժամանակների ճգնավորներին, ապա նրանք չէին ցանկանում թաքցնել իրենց գտնվելու վայրը, բարձրաձայնել սեփական կարծիքը կամ կիրառել

իմաստությունը: Ավելի ճիշտ՝ ժամանակները նրանց դեմ էին (Ջուանգզի):

Ոմանք մեկուսի կենսակերպ են վարում, որպեսզի իրագործեն իրենց նպատակները, ոմանք հեռու են մնում աշխարհիկ հարցերից, որպեսզի բարոյականությունն անբասիր մնա, ոմանք վայելում են խաղաղ կյանքը, որպեսզի զսպեն իրենց բռնկուն խառնվածքը, ոմանք խուսափում են վտանգներից, որպեսզի պահպանեն անվտանգությունը, ոմանք աշխարհիկ կյանքը համարում են աղտոտված և ձգտում պահպանել բարոյական մաքրությունը, իսկ ոմանք ուղղակի չեն կարողանում ընդունել աշխարհիկ կյանքը և նախընտրում են պարզ ու մաքուր կյանք վարել: Ինչևէ, տեսնելով, թե նրանք ինչպես են աշխատում բաց դաշտերում, որքան հեռու են պայմանականություններից, ինչքան տանջահար տեսք ունեն, ակամայից հարց ենք տալիս՝ արդյո՞ք նրանք իսկապես սիրում են թռչուններին ու ձկներին, արդյո՞ք իսկապես սիրում են անտառն ու խոտը: Հնարավոր է՝ նրանց խառնվածքն է մղել այսպիսի կյանքի (Ուշ Հան դինաստիայի պատմությունը):

**Քողարկում և բացահայտում  
յինսիան 隱显**

Քողարկում՝ նշանակում է թաքցնել իրերի էությունը, իսկ բացահայտում՝ ամեն ինչ չափազանց հստակ բացատրել: Որպես գեղարվեստական և գրական եզրույթ՝ հակադրությունների այս զույգը վերաբերում է ստեղծագործական գործընթացի, որում որոշ երևույթներ պետք է թաքցվեն, մյուսները՝ հստակ բացատրվեն: Մեմանտիկայում կամ հռետորաբանության մեջ կիրառվելիս այն վերաբերում է նուրբ կամ վառ արտահայտչամիջոցներին: Արվեստի իդեալական ստեղծագործությունն աչքի է ընկնում քողարկման ու բացահայտման միջև պատշաճ հավասարակշռությամբ:

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Լռությունը կամ թաքնված իմաստը չի նշանակում լինել առեղծվածայնություն, այլ ենթադրում է մեծ ու խոր նշանակություն: Մյուս կողմից, ձևակերպումների հստակությունը կամ իմաստի ակնհայտությունը չի նշանակում բացարձակ թափանցիկություն, այլ նշանակում է պարզություն: Ընդհանուր առմամբ, քողարկումն ու բացահայտումը չեն բացառում իրար: Դրանք կարող են փոխարինել միմյանց և օժտված են երկկողմանի դիալեկտիկական շարժումով, որը բացահայտում է Դաոն մշտական փոփոխության մեջ:

Մեջբերումներ 引例.

«Փոփոխությունների գրքում» հիշատակվում է գուշակության չորս սիմվոլների մասին, որոնք խոր ու խճճված նշանակություն ունեն: Գարնան և աշնան տարեգրքերում գրառում կա գրավոր ստեղծագործության հինգ հիմնական պահանջների մասին, որոնք շատ նուրբ են: Երկու օրինակներն էլ ցույց են տալիս գրավոր ստեղծագործության գործառույթը՝ դիմելով իմաստային նրբությունների: Այսպիսով, կարելի է նկատել, որ պարզությունն ու բարդությունը տարբեր արտաքին առանձնահատկություններ ունեն, իսկ քողարկվածությունն ու անկեղծությունը՝ տարբեր արտահայտչամիջոցներ: Հեղինակները պետք է կրճատեն կամ ընդլայնեն իրենց գրավոր ստեղծագործության բովանդակությունը՝ կախված հանգամանքներից, հարմարվելով բազմազան իրավիճակներին: Լավ գրավոր ստեղծագործություն կարելի է ստանալ՝ այն համեմատելով Ջոուի դքսի և Կոնֆուցիոսի ուսմունքների հետ (Լիու Սյե. *Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*):

Անձամբ ես հավատում եմ, որ «Ոսկե միջինի դոկտրինը» իմաստուն մտքերի աղբյուր է: Այն թաքցնում կամ բացահայտում է իր էությունն ու գործառույթներն ըստ հանգամանքների, ինչը հանգեցնում է իր և ուրիշների մեծ ձեռքբե-



*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

բուններին (Ջան Շի. *Ոսկե միջինի դոկտրինի բացատրությունների և մեկնաբանությունների ժողովածուի վերջաբան*):

**Հիվանդության ինքնաբուժումը սովորաբար կարող է լավ արդյունք տալ**

**յոու բին բու ջի, չան դե ջուն յի 有病不治，常得中医**

Ասացվածքը, որն իմաստով նման է «երկարատև հիվանդությունից տառապանքը մարդուն վերածում է բժշկի», առաջացել է Հան դինաստիայի պատմությունից: Հետագայում այն վերածվել է հետևյալ ասացվածքներին՝ «ավելի լավ է դեղ չխմես, քան դիմես միջակ բժշկի», որն ըստ էության նշանակում է, որ ավելի լավ է առհասարակ չդիմել բժշկի, քան սխալ բուժում ստանալ միջակ բժշկից: Ոչ բանիմաց բժշկի բուժման պատճառով հիվանդի վիճակը ոչ թե բարելավվում է, այլ ավելի է վատանում: Մյուս կողմից, որոշ հիվանդություններ կարող են ժամանակի հետ ինքնուրույն բուժվել: Ըստ այս ասացվածքի՝ մարդիկ մերժում էին միջակ բժիշկներին և ձգտում դիմել բանիմաց բժիշկների: Միևնույն ժամանակ, այն նաև ենթադրում է այն գաղափարը, որ որոշ հիվանդություններ ժամանակի ընթացքում ինքնուրույն բուժվում են առանց հատուկ բուժման:

Մեջբերումներ 引例.

Որոշ դեղատոմսեր հարմար չեն հիվանդություններ բուժելու համար: Այն դեղամիջոցները, որոնք տաք են, էլ ավելի են տաքացնում հիվանդներին, իսկ այն դեղամիջոցները, որոնք սառն են, էլ ավելի են մրսեցնում հիվանդներին: Դրանք վնասում են մարդկանց էությունը, էներգիան ու հոգին, առանց որևէ արտաքին ախտանիշի: Դա բացառապես դեղամիջոցների սխալ օգտագործման հետևանք է: Այստե-

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

դից էլ առաջացել է ասացվածքը՝ հիվանդության ինքնաբուժությունը սովորաբար կարող է լավ արդյունք տալ (Հան դինաստիայի պատմությունը):

Մարդիկ ասում են. «Ինքնաբուժումը սովորաբար լավ արդյունք է տալիս»: Խոսքը չի վերաբերում բոլոր հիվանդություններին, բայց եթե այն լուրջ չէ, ինքնաբուժումը կարող է ավելի բարենպաստ լինել, քան միջակ բժշկին վստահելը, որը կարող է սխալ դեղամիջոցներ գրել ու էլ ավելի վատթարացնել մարդու վիճակը (Յե Սենդե. *Էսսեներ՝ գրված անառախին արչակուրդներին*):

Հին ասացվածքն ասում է, որ «ինքնաբուժումը նաև բժշկական նշանակություն ունի»: Այդ արտահայտությունը հավանաբար մեծ տարածում ուներ դեռևս Սույն դինաստիայից առաջ: Պատճառը կարող է կապված լինել անցյալի բժշկական ավանդույթի կորստի հետ, ինչը հաճախ հանգեցնում է սխալ ախտորոշման ու սխալ բուժման: Հիասթափված, բայց անկարող գնահատել բժիշկների հմտությունները՝ հիվանդները պարզապես դադարում են դեղ խմելուց: Դա հղի է լուրջ վտանգով. հնարավոր է, որ հիվանդը երբեք էլ չբուժվի, բայց նաև հնարավոր է, որ այս միջոցը նրան փրկի խաբեբաների կողմից սպանվելուց: Ավելին, եթե հիվանդությունը կյանքի համար վտանգ չի ներկայացնում, այն աստիճանաբար ինքնուրույն կբուժվի: Հետևաբար, այսպիսի մոտեցումը «բժշկական նշանակություն ունի» (Սու Դաչուն. *Հիվանդությունների առաջացումն ու զարգացումը*):

### **Պոեզիայի Յուանհե ոճը**

#### **Յուանհե թի 元和体**

Այս եզրույթը վերաբերում է բանաստեղծական ոճին, որը մեծ մասսայականություն էր վայելում Թան դինաստիայի Սյանցուն կայսեր (806-820) կառավարման օրոք, որը

Յուանների տիրապետության տակ էր: Այն կարելի է հասկանալ լայն կամ նեղ իմաստով: Լայն իմաստով պոեզիայի Յուաններ ոճը վերաբերում է չափածոյի բոլոր նոր ձևերին, որոնք գերիշխող էին Յուաններ դարաշրջանից սկսած, և որոնք գրվել էին Յուանների դարաշրջանի այնպիսի հայտնի գրողների կողմից, ինչպիսիք էին Հան Յուն (768-824), Յուան Ջենը (779-831), Բայ Ջույին (772-846) և Ջան Չին (767-830): Նեղ իմաստով այն վերաբերում է երկար ու կանոնավոր չափածոյին ու խառը տաղաչափական սխեմաներով ավելի կարճ բանաստեղծություններին, Յուան Ջենի ու Բայ Ջույիի ստեղծագործությունների բանաստեղծական կոմպոզիցիային: Երկու բանաստեղծներն էլ մեծ ուշադրություն էին դարձնում պոեզիայի պատումային գործառույթին: Օրինակ, «Լիանչան պալատի երգը», «Անվերջ վշտի երգը» և «Պիպանվազողի երգը» բոլորը երկարաշունչ պատումային պոեզիայի օրինակներ են: Դրանք նաև կառչում էին պոեզիայի տարածված ոճից, օգտագործում խոսակցական լեզու, որը հասկանալի ու հեշտ հիշվող էր հասարակ ընթերցողի համար: Ավելին, նրանք փորձում էին համադրել պոեզիան ու երաժշտությունը՝ իրենց ստեղծագործությունները դարձնելով ռիթմիկ, գեղեցիկ ու ներդաշնակ, հարմար արտասանելու և երգելու համար:

Մեջբերումներ 引例.

Յուաններ դարաշրջանից սկսած էսսե գրողները փորձում են նմանակել Հան Յուի տարօրինակություններն ու Ֆան Ջունչիի անհասկանալիությունը. երկար բանաստեղծական երգերի հեղինակներին դուր էր գալիս Ջան Չիի համարձակ, անբռնազբոս ոճը, և բանաստեղծները ողջունում էին Մեն Չիաոյի տարօրինակությունն ու ծայրահեղականությունը, Բայ Ջույիի հասկանալիությունը, Յուան Ջենի վերամբարձությունն ու պայծառությունը: Այս ամենից է կազմված, այսպես կոչված՝ «Յուաններ ոճը» (Լի Ջաո. *Լիու Մուի դինասարիայի պատմության լրացում*):

Յուան Ջենն արտասովոր տաղանդավոր էր և ճանաչում ձեռք բերեց շատ երիտասարդ տարիքում: Նա և ծնունդով քայվանցի Բայ Ջույին լավ ընկերներ էին: Երկուսն էլ հրաշալի բանաստեղծներ էին, որոնք պատկերում ու փառաբանում էին իրերը բոլոր գույների ու ձևերի մեջ: Այն ժամանակ պոեզիայի բոլոր սիրահարները միասին էին հիշատակում Յուան Ջենին ու Բայ Ջույին: Բոլորը, անկախ նրանից՝ գիտնական էին թե պաշտոնյա, ուսանող թե հասարակ մարդ, արտասանում էին «Յուանիե ոճի պոեզիա» (Թան դինաստիայի հին շրջանի պատմություն):

### **Կատարյալ միասնություն յուանրուն 圆融**

Բուդդիստական սուրբ գրերում «կատարյալ միասնությունն» ունի երկու իմաստ՝ 1. բոլոր իրերի նախնական վիճակ, որոնք միախառնվում ու կառավարում են իրար և 2. ճշմարտության վերաբերյալ կարծիք, որը հանդես է գալիս որևէ դատողության դեմ: Թիանթայ դպրոցը կատարյալ միասնությունը մեկնաբանում է հետևյալ կերպ. այն զարգացնում է սատյադվայայի (երկու ճշմարտություն) գաղափարը և այն վերածում է «ճշմարտության երեք մակարդակի»՝ դատարկ ճշմարտություն, կեղծ ճշմարտություն և կիսատ ճշմարտություն: Այս տեսության համաձայն՝ չի կարելի ոչ մոտենալ, ոչ հեռանալ երկու ծայրահեղություններից՝ դատարկություն և գոյություն: Այս միանշանակ մոտեցումը դրսևորում է կատարյալ միասնության էությունը: Հուայան դպրոցն առաջարկում է «վեց ասպեկտների կատարյալ միասնության» մեկ այլ մեկնաբանություն: Այն պնդում է, որ ամեն ինչի մասին կարելի է դատողություն անել վեց տեսանկյունից՝ ընդհանուր, մասնավոր, ինքնություն, տարբերակում, ինտեգրացված և ապակառուցողական: Չնայած դրանք ի հայտ են գալիս որպես երեք հակադրություն, այս ասպեկտները, որոնք էությանը նման են իրար, անցնում են կոնցեպտուալ հակադրության սահմանները:

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

Մեջբերում 引例.

Տարբերությունը դիարմայի նրբության մեջ է: Մակերեսային դիարման ուսումնասիրում է երեք ճշմարտություններն առանձին, իսկ նուրբ դիարման միավորում է դրանք (Շի Ջիյի. *Հրաշալի դիարմայի Լուրուսի սուլրայի խոր իմաստը*):

**Քարճրագույն երջանկությունը պայմանավորված է դրա մասին անտեղյակությամբ**  
**ջիլե-վուլե 至乐无乐**

Քարճրագույն երջանկությունը ներքին խաղաղությունն է, որը չի հարցնում՝ արդյոք մենք երջանի՞կ ենք, թե՛ ոչ: Ջոուանցին (մթա. 369-286) պնդում էր, որ երջանկությունը պետք է բխի միայն սրտից: Եթե երջանկությունը չափենք աշխարհիկ չափանիշներով, մեր ուշադրությունից կարող է վրիպել կյանքի հիմնական նպատակը: Եթե մեզ առաջ մղեն զգացմունքներն ու հիմնական ցանկությունները, վնասն ու կորուստը կարող են լինել դրա հետևանք: Իրականում մեր երջանկությունը կախված է կորստի կամ ձեռքբերման մասին մեր դատողություններից: Սակայն կորուստը կամ ձեռքբերումը հարաբերական են և ենթակա են փոփոխության: Միայն երբ ամբողջությամբ մոռանանք այս հարցը, կկարողանանք հասնել բարճրագույն երջանկության: Այս եզրույթն արտացոլում է հոգևոր վեհանձնությունն ու չինացի գիտնականների բաց, պլուրալիստական աշխարհայացքը՝ միաժամանակ նրանց մղելով ավելի մեծ ջանք գործադրել ինքնարտացոլման, քննադատության ու անդրանցակալության ոլորտում:

Մեջբերումներ 引例.

Արդյոք մեր այս աշխարհում կա՞ երջանկություն, թե՛ ոչ: Իմ կարծիքով՝ բարձրագույն երջանկությունը դրա մասին չիմանալն է: Սակայն հենց այս միտքն էլ տանջում է բոլորիս: Այստեղից էլ ասույթը՝ բարձրագույն երջանկությունն այն է, երբ չենք ձգտում դրան, իսկ բարձրագույն գովեստն այն է, երբ գովեստի կարիք չկա (Ջուանցզի):

Կոնֆուցիոսը հարցնում էր. «Երբ սիրտն ազատ թափառի երկնքի ու երկրի արանքում, ինչպիսի՞ տեսարան կլինի»: Լաոցզին պատասխանեց. «Երբ մարդը հասնի այդ վիճակին, կկարողանա վայելել գեղեցկությունն ու բարձրագույն երջանկությունն իր ողջ փայլով: Այսպիսի մարդկանց անվանում են «բարձրակարգ մարդ» (Ջուանցզի):

**Խրատ՝ պատշաճ ձևակերպումներով  
ջու ուեն էր ձյուն ձիան 主文而譎諫**

Այս եզրույթը ցույց է տալիս, որ պոեզիան պետք է անուղղակիորեն և մեղմորեն կառավարչին խորհուրդ տա հետ մնալ սխալ արարքներից: Քննադատը պետք է հիմնականում օգտագործի պատշաճ և զգայուն ձևակերպումներ՝ կառավարչին խրատելիս փորձելով չկիրառել կոպիտ կամ վիրավորական արտահայտություններ: Եզրույթն առաջին անգամ ի հայտ է եկել «Երգերի գրքի Մաոյի տարբերակի առաջաբանում»: Այն ստեղծել են կոնֆուցիական գիտնականները «Երգերի գրքում» արտահայտության տարբեր իմաստներն անփոփելիս: Ավելի ուշ այն դարձավ արվեստի ու գրականության բոլոր ստեղծագործությունների չափանիշ: Առանցքային իմաստն այն է, որ եթե պոեզիան կարելի է օգտագործել՝ կառավարչին քննադատելու կամ ծաղրելու, ինչպես նաև հասարակական իրականության հանդեպ

*Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ*

անհամաձայնություն արտահայտելու համար, ապա պետք է օգտագործել մեղմ կամ անուղղակի միջոցներ, մասնավորապես անալոգիա, գուգորդում, նմանություն և փոխաբերություն: Այս տեսակետը գրաքննադատության ոլորտում կոնֆուցիական քաղաքական էթիկայի դրսևորում է:

Մեջբերում 引例.

Կառավորիչներն օգտվում են ֆենից (բալլադներ)՝ մարդկանց կատարելագործելու համար, իսկ մարդիկ դրանք օգտագործում են՝ կառավարիչներին ծաղրելու համար: Քանի դեռ քննադատը միապետին խորհուրդներ է տալիս մեղմորեն ու գեղեցիկ պոեզիայի միջոցով, նրան մեղավոր չեն համարի, իսկ միապետը, որին նա քննադատում է, ավելի մեծ ուշադիր կլինի որոշումներ կայացնելիս: Այս բանաստեղծությունները կոչվում են ֆեն (*Երգերի գրքի Մայրի փարբերակի նահաբան*):

### **Հարգիր կյանքը ցունչեն 尊生**

Եզրույթը նշանակում է հարգել ու գնահատել սեփական, ինչպես նաև ուրիշների կյանքը: Քանի որ յուրաքանչյուր մարդ ընդամենը մի կյանք ունի, չի կարող հեշտությամբ հրաժարվել դրանից ու չի խլի նաև այլ մարդկանց կյանքը: Նա, ով իշխանություն ունի, կհարգի ժողովրդի կյանքն ու առավելագույնը կանի՝ մարդկանց ապրելու օրինական իրավունքը պահպանելու համար: Նա որևէ վնաս չի պատճառի մարդկանց կյանքին ու առողջությանը: Մյուս կողմից, նա չպետք է ուղղակի թույլ տա, որ իր կյանքը հոսի առանց բարոյական նպատակի:

Մեջբերումներ 引例.

Ես նկատել եմ՝ մարդիկ հաճախ ասում են, որ մարդը չպետք է վնասի իրեն սնողին ու դաստիարակողին... Այնպիսի մարդիկ, ինչպիսին է Դանֆուն՝ Ջոուի Ուեն քազավորի պապիկը, իսկապես հարգում են կյանքը: Նա, ով հարգում է կյանքը, որքան էլ հարուստ լինի, չի վնասի իր առողջությունը՝ հանուն ճոխության: Նա, ով հարգում է կյանքը, նույնիսկ եթե աղքատ է, ուժասպառ չի անի իր մարմինը՝ հարստության ու դիրքի ձգտելով(Ջուանցզի):

Իմաստունը մանրամասն խորհրդածեց երկնքի տակ ապրող ամեն ինչի մասին ու մտածեց, որ կյանքից ավելի արժեքավոր ոչինչ չկա... Պետական իշխանությունն ամենակարևորն էր, բայց իմաստունը չէր վտանգում իր կյանքը՝ այն պաշտպանելու համար: Պետական իշխանությունը պետք է վստահվի նրանց, ովքեր չեն փորձում ապահովել այդ իշխանությունը սեփական կյանքը վտանգի տակ դնելու միջոցով (Վարպետ Լյուի Գարնան և աշնան տարեգրքերը):

Հետևաբար, հարգել կյանքը նշանակում է պահպանել կյանքը, ինչն էլ իր հերթին նշանակում է կատարել մարդկանց արդարացի ցանկությունները (Վարպետ Լյուի Գարնան և աշնան տարեգրքերը):



## Հասկացությունների ցանկ 术语表

Աղվայա/ Ոչ երկակիություն / Ոչ հակասականություն	不二
Ամոթ	耻
Անհրապույր, անփայլ ձևակերպումները երբեք հեռուն չեն տանում	言之无文, 行而不远
Աններդաշնակություն / Ներդաշնակություն	隔 / 不隔
Անպաճույճ հնություն	高古
Առաքինի էություն / Բարոյականությունը՝ որպես մարդկային էություն	德性
Առաքինի մարդիկ սիրում են սարեր, իսկ իմաստուն մարդիկ՝ ջուր	仁者乐山, 智者乐水
Առաքինի մարդը ձգտում է Դաոյի, այլ ոչ թե ապրուստի միջոցներ հայթայթելու	君子谋道不谋食
Բանաստեղծական արվեստի բանալի	诗家三昧
Բարձրագույն երջանկությունը պայմանավորված է դրա մասին անտեղյակությամբ	至乐无乐
Բարոյական միտք / Բարոյական գիտակցություն	道心
Բարությանը բարությամբ պատասխանեք / Սիրալիրությանը պատասխանեք բարի գործերով	投桃报李
Բժշկի հոգատար սիրտը	医者仁心
Բիուտատաթաաա / Շշմարիտ այդպիսություն	真相
Բնաբան և ասացվածք	铭箴
Բնական հատկանիշներ	分
Բրոնզե գիր	金文
Բուդդիանուսմրտի / Չիշոզություն Բուդդայի մասին	念佛
Գաղափարները չեն կարող համապատասխանել իրական երևույթներին, իսկ բառերը չեն կարող արտահայտել լիարժեք գաղափարներ	意不称物, 文不逮意
Գեղարվեստական գրականության Չինլին դպրոց	竟陵派
Գեն (Սար)	艮
Գովեստ կամ ստելայի վրա փորագրված մակագրություն	谶碑
Դղում կախեք (դեղ օգտագործեք)՝ աշխարհին օգնելու համար	悬壶济世
Դիարմակայա / Դիարմայի մարմին	二谛
Դուլ (ճահիճ)	兑
Եղբայրներ և քույրեր՝ նույն ծնողներից. հայրենակիցներ	同胞
Երբ թռչունները չկան, աղեղ կարելի է մի կողմ դնել	鸟尽弓藏
Ձգացմունքները փոխվում են իրադրության հետ, իսկ խոսքային արտահայտությունը ծագում է զգացմունքներից	情以物迁, 辞以情发

Ջզույշ և շրջահայաց եղիր ինչպես վերջում, այնպես էլ սկզբում. շրջահայաց եղիր նաև ամբողջ ընթացքում	慎終如始
Ձմայլվել կյանքով	乐生
Ձուսպ եղիր	韬光养晦
Էստե սգո և էստե հիշատակի	哀吊
Ընթերցողների վրա ազդեցություն թողնել անկեղծ զգացմունքներով՝ անտեսելով խոսքային ձևակերպումները	但见性情, 不睹文字
Ժառանգություն և նորարարություն	因革
Ժողովրդի դժգոհությունները վնասում են երկիրը	人怨伤国
Իմացեք ամաչիկա իրադարձությունների մասին՝ հետևելով փոքրիկ հուշումներին	见微知著
Իրարից առանձնացրու երկրային ու երկնային ոլորտները	绝地天通
Իքջանտիկա	一闾提
Լավ կառավարիչը չի ստում ժողովրդին	善为国者不欺其民
Լսել երկու կողմին էլ	兼听
Լուռ նրբագեղություն	冲淡
Խիզախ ժողովուրդ ունեցող երկիրը կարող է հաղթանակ տանել	民勇者战胜
Խնջույք համայնքի ղեկավարների և գյուղական ավագանու համար	乡饮酒礼
Խտություն և նոսրություն	浓淡
Խրատ պատշաճ ձևակերպումներով	主文而谏
Ծիրանի ծառեր / Պատվարժան բժիշկներ՝ լավ հմտություններով	杏林
Կանոնների և նորմերի կիրառման սկզբունք	黎矩之道
Կատարյալ անմեղություն	赤子之心
Կատարյալ միասնություն	圆融
Կյանքը նույնքան կարևոր է, որքան երկինքը	人命关天
Կռվելու համար քաջություն է պետք	夫战, 勇气也
Կրթություն՝ ըստ թիրախային խմբի իմացության մակարդակի	因材施教
Հազար մղոն երկարությամբ ամբարտակը կարող է փլվել մրջնաբնի պատճառով	千里之堤, 溃于蚁穴
Հակիրճ ու սեղմ գրիր	洗炼
Հանրային և մասնավոր	公私
Հասնելով վերջին՝ ամեն ինչ վերադառնում է սկիզբ՝ հակառակ վիճակի	物极必反
Հարգիր կյանքը	尊生
Հիվանդության ինքնաբուժումը սովորաբար կարող է լավ արդյունք տալ	有病不治, 常得中医
Չև և անուն	形名

ճարակություն ու անճոռնիություն	巧拙
ճգնաժող / Մեմակյաց	隱士
ճշմարիտ էության խիզախ արտահայտություն	独抒性灵, 不拘格套
Մակագրություններ ոսկորների կամ կրիայի պատյանի վրա	甲骨文
Մասամբ ճանապարհ, մասամբ՝ ընկերություն	道不同, 不相为谋
Մարդկային զգացմունքների ոլորտում սահմանել բարոյական չափանիշներ	标情立文
Մարդկային հարաբերություններ	人伦
Մարդու սիրտ / Մարդկային ցանկություններ	人心
Մեծ բժիշկները հիվանդությունը բուժում են դրա սկսվելուց առաջ	上工治未病
Մեծ բժշկողները բուժում են երկիրը	上医医国
Մտքի արվեստը	心术
Նա, ով ամենից շատ է սիրում ժողովրդին, տաղանդներ կփնտրի	爱人深者求贤急
Նետաձգության ծեսեր	善射者不亡
Ներդաշնակություն	和
Ներդաշնակությունը ծնում է նոր իրեր ու երևույթներ	和实生物
Նիհար և ուժեղ	瘦硬
Նոսրություն և խտություն	疏密
Նրանք, ովքեր հմտորեն պայքարում են պարտության դեմ, չեն ոչնչանա	射礼
Նրանք, որ խոսում են, չպիտի պատժվեն, մինչդեռ նրանք, որ լսում են, պետք է զգույշ լինեն	言者无罪, 闻者足戒
Նույնիսկ լավ բժիշկը չի կարող փրկել դատապարտված հիվանդին	良医不能救无命
Շատ շողոքորթություն և քիչ քննադատություն	刎百风
Շուտ նախազուշական միջոցներ ձեռնարկեք	防微杜渐
Որոշեք մարդկային զգացմունքներն արտահայտելու պատշաճ միջոցը	立中制节
Չկա ուրախ կամ տխուր երաժշտություն	乐无哀乐
Պատերազմի դաշտում ձգտում ենք արագ հաղթանակի, այլ ոչ դրա երկարաձգման	兵贵胜, 不贵久
Պոեզիայի Չիանսի դպրոցը	元和体
Պոեզիայի Յուանհե ոճը	江西诗派
Պոեզիայի քննադատություն / Շիհուա (Պատմել երգով ու խոսքով)	诗话
Սասյադվայա / երկու ճշմարտություն	二谛
Սիրել քո տեսակը	爱类
Սովորեցնել օրինակով	身教
Վարպետ-բժիշկ ամբողջ ժողովրդի համար	苍生大医
Վերադարձ հակառակին	反
Վիժնանա / Գիտակցություն	识

Տաթագատագարբիա / Տաթագատայի գիրկը	如来藏
Յի պրեզիայի քննարատություն / Յիհուա (Պատունը՝ երգի ու խոսքի միջոցով)	词话
Ուժ և եռանդ	劲健
Փայփայել կյանքը	好生
Փինլի (Պիվանագիտական էթիկա և արարողակարգ)	聘礼
Քառակուսիություն և կլորություն	方圆
Քողարկում և բացահայտում	隐显

**Չինաստանի պատմության  
հակիրճ ժամանակագրություն 中国历史年代简表**

夏 Սիա դինաստիա		մթա 2070-1600
商 Շան դինաստիա		մթա 1600-1046
周 Ջոու դինաստիա		մթա 1046-256
周 Ջոու դինաստիա	西周 Արևմտյան Ջոու դինաստիա	մթա 1046-771
	东周 Արևելյան Ջոու դինաստիա	մթա 770-256
秦 Յին դինաստիա		մթա 221-206
汉 Հան դինաստիա		մթա 206 – մթ 220
汉 Հան դինաստիա	西汉 Արևմտյան Հան դինաստիա	մթա 206-մթ 25
	东汉 Արևելյան Հան դինաստիա	25-220
三國 Երեք թագավորություն		220-280
三國 Երեք թագավորություն	魏 Վեյ թագավորություն	220-265
	蜀 Շու թագավորություն	221-263
	吴 Ու թագավորություն	222-280
晋 Չին դինաստիա		265-420
晋 Չին դինաստիա	西晋 Արևմտյան Չին դինաստիա	265-317
	东晋 Արևելյան Չին դինաստիա	317-420
南北朝 Հարավային և Հյուսիսային դինաստիաներ		420-589

南北朝 Հարավային և հյուսիսային դինաստիաներ	南朝 Հարավային դինաստիաներ		420-589
	南朝 Հարավային դինաստիաներ	宋 Սուն դինաստիա	420-479
		齐 Ցի դինաստիա	479-502
		梁 Լյան դինաստիա	502-557
		陈 Չեն դինաստիա	557-589
南北朝 Հարավային և հյուսիսային դինաստիաներ	北朝 Հյուսիսային դինաստիաներ		386-581
	北朝 Հյուսիսային դինաստիաներ	北魏 Հյուսիսային Վեյ դինաստիա	386-534
		东魏 Արևելյան Վեյ դինաստիա	534-550
		北齐 Հյուսիսային Ցի դինաստիա	550-577
		西魏 Արևմտյան Վեյ դինաստիա	535-556
		北周 Հյուսիսային Ջոու դինաստիա	557-581
隋 Սույ դինաստիա		581-618	
唐 Թան դինաստիա		618-907	
五代 Հինգ դինաստիաներ		907-960	
五代 Հինգ դինաստիաներ	后梁 Ուշ Լյան դինաստիա		907-923
	后唐 Ուշ Թան դինաստիա		923-936
	后晋 Ուշ Չին դինաստիա		936-947
	后汉 Ուշ Հան դինաստիա		947-950
	后周 Ուշ Ջոու դինաստիա		951-960

宋 Սուն դինաստիա		960-1279
宋 Սուն դինաստիա	北宋 Հյուսիսային Սուն դինաստիա	960-1127
	南宋 Հարավային Սուն դինաստիա	1127-1279
辽 Լյաո դինաստիա		907-1125
金 Չին դինաստիա		1115-1234
元 Յուան դինաստիա		1206-1368
明 Մին դինաստիա		1368-1644
清 Ցին դինաստիա		1616-1911
中华民国 Չինաստանի Հանրապետություն		1912-1949
中华人民共和国 Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն		հիմնադրվել է 1949 թվականի հոկտեմբերի 1-ին

## Քովանդակություն 目录

Էստե սգո և էստե հիշատակի .....	7
այդիաո 哀吊	
Միրել քո տեսակը .....	8
այլեյ 爱类	
Նա, ով ամենից շատ է սիրում ժողովրդին, տաղանդներ կփնտրի .....	10
այ բեն շեն ջե ցիու սյան ձի 爱人深者求贤急	
Պատերազմի դաշտում ձգտում ենք արագ հաղթանակի, այլ ոչ երկարածգման .....	11
բին գույ շեն, բու գույ ձիու 兵贵胜, 不贵久	
Աղվայա/ Ոչ երկակիություն /Ոչ հակասականություն .....	12
բուեր 不二	
Վարպետ-բժիշկ ամբողջ ժողովրդի համար .....	12
ցանշեն-դայի 苍生大医	
Մարդկային զգացմունքների ոլորտում սահմանել բարոյական չափանիշներ .....	14
շենցին-լիուեն 称情立文	
Ամոթ .....	15
չի 耻	
Կատարյալ անմեղություն .....	16
չիցիչիսին 赤子之心	
Լուռ նրբագեղություն .....	17
չունդան 冲淡	
Ցի պոեզիայի քննադատություն / Ցիհուա (Պատումը՝ երգի ու խոսքի միջոցով) .....	18
ցիհուա 词话	
Ընթերցողների վրա ազդեցություն բողնել անկեղծ զգացմունքներով՝ անտեսելով խոսքային ձևակերպումները .....	21
դան ձիան սինցին, բու դու ուենցի 但见性情, 不睹文字	
Մասամբ ճանապարհ, մասամբ՝ ընկերություն .....	22
դաո բու բուն, բու սիան ուեյ մոու 道不同, 不相为谋	



Բարոյական միտք / Բարոյական գիտակցություն .....	23
դաստիճան 道心	
Առաքինի էություն / Բարոյականությունը՝ որպես մարդկային էություն .....	24
դեպի 德性	
Ճշմարիտ էության համարձակ արտահայտություն .....	25
դու շու սինլին, բու ջու գեթաո 独抒性灵, 不拘格套	
Դույ (Ճահիճ) .....	27
դույ 兑	
Սատյադվայա / Երկու ճշմարտություն .....	27
Էրդի 二谛	
Դհարմակայա / Դհարմայի մարմին .....	29
Ֆաշեն 二谛	
Վերադարձ հակառակին .....	30
Ֆան 反	
Քառակուսիություն և կլորություն .....	31
Ֆանյուան 方圆	
Արագ նախազգուշական միջոցներ ձեռնարկիր .....	33
Ֆանուեյ-դուձիան 防微杜渐	
Բնական հատկանիշներ .....	34
Ֆեն 分	
Կռվելու համար քաջություն է պետք .....	35
Ֆու ջան, յունցի յե 夫战, 勇气也	
Անպաճույճ հնություն .....	36
գաոգու 高古	
Աններդաշնակություն / Ներդաշնակություն .....	37
գե / բուգե 隔 / 不隔	
Գեն (Սար) .....	39
գեն 艮	
Հանրային և մասնավոր .....	39
գունսի 公私	
Փայփայել կյանքը .....	40
հաոշեն 好生	
Ներդաշնակություն .....	42
հե 和	

Ներդաշնակությունը ծնում է նոր իրեր ու երևույթներ .....	42
հե շի շեն ու 和实生物 Մակագրություններ ոսկորների կամ կրիայի պատյանի վրա .....	43
ձիագուուեն 甲骨文 Լսել երկու կողմին էլ .....	45
ձիանթին 兼听 Իմացիր առաջիկա իրադարձությունների մասին՝ հետևելով փոքրիկ հուշումներին .....	46
ձիանուեյ-ջիջու 见微知著 Պոեզիայի Չիանսի դպրոցը .....	47
Չիանսի շիփայ 江西诗派 Բրոնզե գիր .....	49
ձինուեն 金文 Ուժ և եռանդ .....	50
ձինձիան 劲健 Գեղարվեստական գրականության Չինլին դպրոց .....	51
Չինլին փայ 竟陵派 Իրարից առանձնացրու երկրային ու երկնային ոլորտները .....	53
ձուեն դի թիան թուն 绝地天通 Առաքինի մարդը ձգտում է Դաոյի, այլ ոչ թե ապրուստի միջոցներ հայթայթելու .....	54
ձունցի մոու դաո բու մոու շի 君子谋道不谋食 Չմայլվել կյանքով .....	55
լենշեն 乐生 Գովեստ կամ ստելայի վրա փորագրված մակագրություն .....	56
լեյբեյ 诤碑 Որոշիր մարդկային զգացմունքներն արտահայտելու պատշաճ միջոցը .....	57
լիջուն-ջիձիե 立中制节	

Նույնիսկ լավ բժիշկը չի կարող փրկել դատապարտված հիվանդին .....	58
լիանյի բու ցեն ձիու ումին 良医不能救无命 Խիզախ ժողովուրդ ունեցող երկիրը կարող է հաղթանակ տանել .....	59
մին յուն ջե ջան շեն 民勇者战胜 Բնաբան և ասացվածք .....	60
մինջեն 铭箴 Բուդդիանուսմրտի / Հիշողություն Բուդդայի մասին .....	61
նիանֆո 念佛 Երբ թռչունները չկան, աղեղը կարելի է մի կողմ դնել .....	62
նիատձին-գունցան 鸟尽弓藏 Խտություն կամ նոսրություն .....	63
նունդան 浓淡 Փինլի (Դիվանագիտական էթիկա և արարողակարգ).....	64
փինլի 聘礼 Հազար մղոն երկարությամբ ամբարտակը կարող է փլվել մրջնաբնի պատճառով .....	65
ցիանլիջիդի, կույույուսյուն 千里之堤, 溃于蚁穴 Ճարակություն ու անճոռնիություն .....	67
ցիաոջուո 巧拙 Չզացմունքները փոխվում են իրադրության հետ, իսկ խոսքային արտահայտությունը ծագում է զզացմունքներից .....	68
ցին յի ու ցիան, ցի յի ցին ֆա 情以物迁, 辞以情发 Շատ շողորթություն և քիչ քննադատություն .....	70
ցյուանբայ-ֆենյի 劝百风 Մարդկային հարաբերություններ .....	71
րենլուն 人伦 Կյանքը նույնքան կարևոր է, որքան երկինքը .....	72
րենմին-գուանթիան 人命关天 Մարդու սիրտ / Մարդկային ցանկություններ .....	73
րենսին 人心 Ժողովրդի դժգոհությունները վնասում են երկիրը .....	74
րենյուան-շանգուո 人怨伤国	

Առաքինի մարդիկ սիրում են սարեր, խակ իմաստուն մարդիկ՝ ջուր .....	75
րենջե-յառշան, ջիջե-յառշույ 仁者乐山, 智者乐水	
Տաթագատագարբիա / Տաթագատայի գիրկը .....	76
բուլայցան 如来藏	
Նրանք, ովքեր հմտորեն պայքարում են պարտության դեմ, չեն ոչնչանա .....	77
շան բայ ջե բու ուան 善败者不亡	
Լավ կառավարիչը չի ստում ժողովրդին .....	78
շան ուեյ գուո ջե բու ցի ցի մին 善为国者不欺其民	
Մեծ բժիշկները հիվանդությունը բուժում են դրա սկսվելուց առաջ .....	79
շանգուն ջի ուեյբին 上工治未病	
Մեծ բժշկողները բուժում են երկիրը .....	81
շանյի-յիգուո 上医医国	
Նետաձգության ծեսեր .....	82
շեյի 射礼	
Սովորեցնել օրինակով .....	83
շենձիաո 身教	
Ջգույշ և շրջահայաց եղիր ինչպես վերջում, այնպես էլ սկզբում. շրջահայաց եղիր մաս ամբողջ ընթացքում .....	84
շենջուն-բուշի 慎终如始	
Չկա ուրախ կամ տխուր երաժշտություն .....	85
շենուայլե 声无哀乐	
Պոեզիայի քննադատություն / Շիհուա (Պատմել երգով ու խոսքով) .....	87
շիհուա 诗话	
Բանաստեղծական արվեստի բանալի .....	89
շիձիա սանմեյ 诗家三昧	
Վիժնանա / Գիտակցություն .....	91
շի 识	
Բիուտատաթատա / Ճշմարիտ այդպիսություն .....	92
շիսիան 实相	
Նիհար և ուժեղ .....	93
շույին 瘦硬	

Նստություն և խտություն .....	94
շումի 疏密	
Չուսպ եղիր .....	96
քառգուան-յանգույ 韬光养晦	
Եղբայրներ և քույրեր՝ նույն ծնողներից.	
հայրենակիցներ .....	97
քունբաո 同胞	
Բարությանը բարությամբ պատասխանիր /	
Միրալիրությանը պատասխանիր բարի գործերով .....	98
թոութաո-բաուլի 投桃报李	
Հասնելով վերջին՝ ամեն ինչ վերադառնում է սկիզբ՝	
հակառակ վիճակի .....	99
ուձի-բիֆան 物极必反	
Հակիրճ ու սեղմ գրիր .....	100
սիլիան 洗炼	
Խնջույք համայնքի ղեկավարների և	
գյուղական ավագանու համար .....	101
սիանյինձիուլի 乡饮酒礼	
Կանոնների և նորմերի կիրառման սկզբունք .....	102
սիեձուչիդաո 絮矩之道	
Մտքի արվեստը .....	103
սինշու 心术	
Չև և անուն .....	104
սինմին 形名	
Ծիրանի ծառեր / Պատվարժան բժիշկներ՝	
լավ հմտություններով .....	106
սինլին 杏林	
Դրում կախիր(դեղ օգտագործիր)՝	
աշխարհին օգնելու համար .....	107
սյուանհու-ձիշի 悬壶济世	
Նրանք, որ խոսում են, չափտի պատժվեն,	
մինչդեռ նրանք, որ լսում են, պետք է զգույշ լինեն .....	108
յանջե-ուցույ, ուենջե-ցուձիե 言者无罪, 闻者足戒	
Անհրապույր, անփայլ ձևակերպումները	
երբեք հեռուն չեն տանում .....	109
յան ջի ու ուեն, սին էր բու յուան 言之无文, 行而不远	

Իշանտիկա .....	110
յիշանքի 一阐提	
Բժշկի հոգատար սիրտը .....	112
յիջե-րենսին 医者仁心	
Գաղափարները չեն կարող համապատասխանել իրական երևույթներին, իսկ բառերը չեն կարող արտահայտել լիարժեք գաղափարներ .....	113
յի բու չեն վու, ուեն բու դայ յի 意不称物, 文不逮意	
Կրթություն՝ ըստ քիրախային խմբի իմացության մակարդակի .....	114
յինցայ-շիճիաո 因材施教	
Ժառանգություն և նորարարություն .....	115
յինգե 因革	
Ճգնավոր / Մենակյաց .....	117
յինշի 隐士	
Քողարկում և բացահայտում .....	119
յինսիան 隐显	
Հիվանդության ինքնաբուժումը սովորաբար կարող է լավ արդյունք տալ .....	121
յուու բին բու ջի, չան դե ջուն յի 有病不治, 常得中医	
Պոեզիայի Յուանհե ոճը .....	122
Յուանհե քի 元和体	
Կատարյալ միասնություն .....	124
յուանրուն 圆融	
Բարձրագույն երջանկությունը պայմանավորված է դրա մասին անտեղյակությամբ .....	125
ջիլե-վուլե 至乐无乐	
Խրատ՝ պատշաճ ձևակերպումներով .....	126
ջու ուեն էր ձյուե ձիան 主文而谏	
Հարգիր կյանքը .....	127
ցունշեն 尊生	
术语表 Հասկացությունների ցանկ .....	129
中国历史年代简表 Չինաստանի պատմության հակիրճ ժամանակագրություն .....	133

**ՉԻՆԱԿԱՆ ՄՏՔԻ  
ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ՀԻՄՆԱԿԱՆ  
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

հատոր 9

Անգլերենից թարգմանությունը՝  
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան  
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան  
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի  
Կազմի ձեռավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 9,25 տպ. մամուլ  
Տպարանակը՝ 500:

Տպագրվել է «Դիպակ պլուս» հրատարակչության տպարանում  
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան



**«ԳԵՂ arm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել**

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010  
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաշունը» - 2011  
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012  
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլերնիկով, Ն. Գումիլյով,  
Վ.Խոդասեւիչ/ - 2012  
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012  
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012  
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012  
Ժարկո Միլենիչ. «Լեռնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013  
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014  
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,  
Լ.Ռուբինշտեյն/ - 2014  
Հենրիխ Սապգիր. «Ձուգահեռ մարդը» - 2014  
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014  
«Կամուրջների խռովությունը.  
մետամետաֆորիստներ» - 2015  
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015  
Անդրեյ Պլատոնով. «Չեւեմգուր. Գուրը.  
Պատմվածքներ» - 2015  
Արդի ռուսական վերլիբո (անթոլոգիա) - 2015  
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015  
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015  
Մա Բայ. «Սրտի արձագանքներ» - 2015  
Եվգենի Վոդյալակին. «Լավը» - 2015  
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015  
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 1) - 2016

Յու Ջիան. «Անձրեից պատասպարվող թռչունը» - 2016  
 Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.  
 Փախուստ դրախտից» - 2016  
 Չժան Յզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016  
 Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո  
 պատմությունը» - 2016  
 Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.  
 ռեքվիեմ» - 2016  
 Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016  
 «Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»  
 (անթոլոգիա) - 2016  
 Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016  
 Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուղղալականությունը,  
 դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական  
 մշակույթը» - 2016  
 Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016  
 Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
 հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016  
 Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017  
 Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017  
 Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017  
 Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017  
 Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
 հասկացություններ (հատոր 4) - 2017  
 Անդրեյ Վոլրս. «Վերադարձ Փանջիռուղ» - 2017  
 Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017  
 Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017  
 Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017  
 Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ  
 նախագծերի» - 2017

Ուան Յուդիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017  
Ֆյոդոր Սոլոգուր. «Չնչաղելը» - 2018  
Չինական ստալի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 5) - 2018  
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018  
Մարտիրոս Ռբն. «Մոմերն իգուր են այրվել  
մեղքերիս համար» - 2018  
Ռեյսին Սյուրն. Սյուն Դու. «Չինաստանի յուրահատկու-  
թյունները: Չինաստանի համաշխարհային  
ժառանգությունը»- 2018  
Չինական ստալի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 6) - 2018  
Ադի ձայնը (20-րդ դարի հետադարձական թվականների  
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019  
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019  
Չինական ստալի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 7) - 2019  
Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020  
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020  
Յերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020  
Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի  
մասին. իրական պատմություն) - 2020  
Կոնֆուցիոս. «Չրույցներ» - 2020  
Չինական ստալի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 8) - 2021  
Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք»-2021



Ոգի-Նաիրի  
Vogi-Nairi

Էլ. հասցեն՝ [vogi.nairi@mail.ru](mailto:vogi.nairi@mail.ru)

հեռ.։ +37497252323